

# ՅԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՒ

Տարի 1, № 1, 2013

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**1(1)**

**Յեղասպանագիտական հանդես**  
Journal of Genocide Studies  
Журнал исследований геноцида

Լույս է տեսնում 2013 թվականից

1(1), 2013

**Խմբագրական խորհուրդ**

Հայկ Դեմոյան, պ. գ. դ. (գլխ. խմբագիր)

Սուրեն Մանուկյան, պ. գ. թ.

(գլխ. խմբագրի տեղակալ)

Արմեն Ազարյան, պ. գ. դ.

Լևոն Աբրահամյան, պ. գ. դ.

Հարություն Մարտիրյան, պ. գ. դ.

Ռուբեն Սաֆրաստյան, պ. գ. դ.

Վալերի Թումյան, պ. գ. դ.

Վարուժան Պողոսյան, պ. գ. դ.

Անահիտ Խոսրովսա, պ. գ. թ.

Մելինե Անումյան, պ. գ. թ.

Նարինե Մարգարյան, պ. գ. թ.

Թեհմինե Մարտոյան, պ. գ. թ.

Գևորգ Վարդանյան, պ. գ. թ.

Յեղասպանագիտական հանդես, Երևան:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013.- 176 էջ

Հանդեսը լույս է տեսնում տարին երկու անգամ

Հրատարակիչ՝ ԳԱԱ Հայոց ցեղասպանության-թանգարան ինստիտուտ

Հասցե՝ Ծիծեռնակաբերդի հոլշահամալիր, Երևան, 0028

Հեռ.՝ (+374 10) 39 09 81), Էլ. հասցե՝ handes@genocide-museum.am

Հարգելի ընթերցողներ,

Հայոց ցեղասպանության թաճգարան-ինստիտուտը սկսում է «Ցեղասպանագիտական համեմես» գիտական պարբերականի թողարկումը:

Այս համեմեսում զետեղվելիք նյութերն անդրադառնալու են Հայոց ցեղասպանության պատմության, պատմագրության, ինչպես նաև թեմային առնչվող մյուս հիմնախնդիրների ու ասպեկտների լիարժեք ու համապարփակ ուսումնասիրությանը, դաշնալով նոր հարթակ գիտական բանավեճերի համար, բացելով նոր հորիզոններ ապագա ուսումնասիրությունների համար:

Այդուհանեներձ, հանդեսը չի սահմանափակվելու միայն Հայոց ցեղասպանությանն առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրությամբ, այս անդրադառնալու է այլ ժողովուրդների ցեղասպանություններին վերաբերող հարցերին՝ հատկապես կարևորելով համեմատական բնույթի հետազոտությունները:

Հայոց ցեղասպանության մոտայուս հարյուրամյա տարեկանից կապակցությամբ խիստ կարևորվում է գիտական նոր ուսումնասիրությունների և դրանց արդյունքում թեմայի շուրջ նոր գիտելիքների ձեռքբերումը:

Թուրքական կողմի մխտողական ու հակագիտական մոտեցումները տարեցտարի ավելի ազրեսիվ ու բազմաշերտ դրսուրումներ են ստանում՝ նոր մարտահրավերներ նետելով հայ և օտարազգի գիտական հանրույթին: Ուստի այս տեսանկյունից հանդեսը կոչված է լուրջ դերակատարում ունենալ՝ հետազոտողներին հնարավորություն ընձեռելով իրենց գիտական արդյունքով արդյունավետ կերպով չեզորացնել հակագիտական բոլոր փորձերը:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս հասորում զետեղված են 1909 թ. Աղանայում տեղի ունեցած կոտորածների հարյուրամյակի կապակցությամբ 2009 թ. ապրիլին Երևանում կայացած միջազգային գիտաժողովի նյութերը: Այս գիտաժողովին տարրեր զեկուցումներով ու հաղորդումներով իրենց մասնակցությունը բերեցին հետազոտողներ Հայաստանից, Ֆրանսիայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Հոնգարիայից և Ավստրիայից:

Կիլիկիայում տեղի ունեցած կոտորածները յուրօրինակ սահմանաբաժն հանդիսացան 19-րդ դարավերջին սուլթան Աբդով Համիդի օրոր իրականացված զանգվածային կոտորածների և 1915-1923 թթ. երիտրուրքերի կողմից ծրագրված և իրականացրած ցեղասպանության քաղաքականության միջև: Այս կոտորածները, փաստորեն կապող օղակ դարձան տարրեր Վարչակարգերի օրոր Օսմանյան կայսրության տարածքում ապրող հայ բնակչության լիակատար եթենիկ գոման և ցեղասպանության քաղաքականության իրականացման համար և ի ցոյց դրեցին նոր զաղափարախոսության քողի տակ հանդես եկող թուրքական ազգայնականության իրական ծրագրերն ու նպատակները:

Հաջորդաբար ՀՅԹԻ կողմից թողարկվող այս պարբերական հանդեսը ներկայացնելու է Հայոց ցեղասպանության հետազոտությամբ զբաղվող հայ և օտարազգի գիտնականների գիտական հրապարակումները, ՀՅԹԻ կազմակերպած գիտաժողովների նյութերը, ինչպես նաև թեմայի շուրջ լույս տեսած գրականության գրախոսականներ և այլ նյութեր:

ՀԱՅԿ ԴԵՄՈՅԱՆ  
պ.գ.դ., ՀՅԹԻ տնօրեն



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Անա Ալեքսանյան.....</b>	<b>7</b>
ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ 1909 թ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՑ ՀԵՏՈ (Զ. ԵՍԱՅԱՆԻ ԵՎ Ա. ԹԵՇՈՂԻԿԻ ՕՐԻՆԱԿՈՎ)	
<b>Արփինե Բաբումյան .....</b>	<b>15</b>
1909 թ. ԱԴԱՆԱՅԻ և ՀԱԼԵՊԻ ՎԻԼԱՅԵԹՆԵՐՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ	
<b>Արամայիս Բալոյան.....</b>	<b>24</b>
1909 թ-ՎԱԿԱՆԻ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՆ ՀԱՏ ԻՏԱԼԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ	
<b>Հայկ Գեմոյան .....</b>	<b>34</b>
1909 թ. ԱԴԱՆԱՅԻ ԵՒ ՀԱԼԵՊԻ ՎԻԼԱՅԵԹՆԵՐՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ. ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ	
<b>Raymond Kévorkian.....</b>	<b>42</b>
<i>LA GESTION POLITIQUE DES MASSACRES DE CILICIE</i>	
<b>Տաթևիկ Ղալթաղչյան .....</b>	<b>59</b>
ԱԴԱՆԱՅԻ 1909 թ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐՆ ԱՐԵՎԱՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ	
<b>Սուրեն Մանուկյան.....</b>	<b>69</b>
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՅՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌ (ԱԴԱՆԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ)	
<b>Eva Merénics .....</b>	<b>76</b>
<i>REPORTS ON THE MASSACRES IN ADANA BY AUSTRO-HUNGARIAN NEWSPAPERS</i>	
<b>Արամ Միրզոյան .....</b>	<b>92</b>
ՈՐԲԱԽՆԱՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1909 թ. ԱԴԱՆԱՅԻ ԵՎ ՀԱԼԵՊԻ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԶԱՐԴԵՐԻՑ ՀԵՏՈ	
<b>Սեդա Պարսամյան .....</b>	<b>98</b>
ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԽԱՆԻՉԱ- ՆԵՐՆ ԱԴԱՆԱՅԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՇՐՋԱՆՆԵՐԻ 1909 թ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ	

ՀՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

<b>Rubina Peroomian .....</b>	<b>105</b>
<i>THE POETICS OF VIOLENCE IN LITERARY RESPONSES TO THE ADANA MASSACRES</i>	
<b>Վարուժան Պողոսյան .....</b>	<b>118</b>
1909 թ. Կիլիկիա ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ (ՀԱՄԱՌԱՋՈՒՄ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ)	
<b>Հարություն Սելիմյան.....</b>	<b>128</b>
ԱՏԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ ԵՎ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՆԵՐՈՒՆ ԿՈՐՈՒՍԸ	
<b>Հասմիկ Ստեփանյան.....</b>	<b>138</b>
ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵջ	
<b>Անի Ոսկանյան.....</b>	<b>142</b>
1909 թ. ԱԴԱՆԱՅԻ ԶԱՐԴԵՐԻՆ ԲԱՆԱԿԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԾՈՒՐՉ	
<b>Verjine Svazlian.....</b>	<b>148</b>
<i>THE ADANA MASSACRE AND THE PEOPLE'S HISTORICAL MEMORY</i>	
<b>Իվ Տերնոն .....</b>	<b>155</b>
ԿԻԼԻԿԻԱ 1909 թ.: ՀՆԱՐԱՎՈ՞Ր ԷՐ ԱՐԴՅՈՂ ԿԱՆԽԱՉՎԱԼ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ	
<b>Արտեմ Օհանջանյան .....</b>	<b>162</b>
ԱԴԱՆԱՅԻ ԶԱՐԴԵՐՆ ԱՎԱՏՐԻԱԿԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ	
<b>Կիլիկիայի կոտորածներին նվիրված նոր հրատարակություններ .....</b>	<b>170</b>

**ՀԱՅ ԿԱՆԱՑ ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ  
ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ 1909 թ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՑ ՀԵՏՈ (Զ. ԵՍԱՅԱՆ  
ԵՎ Ա. ԹԵՇՈՒԿԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Աննա Ալեքսանյան

19-րդ դարում հայ իրականության մեջ սկիզբ առավ կանանց շարժումը, և արդեն իսկ դարի կեսին հայ կինն ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքում: Կանանց ջանքերով կիմնվում էին դպրոցներ, որբանոցներ, աղքատանցներ, կազմակերպվում էին բազմաթիվ միջոցառումներ, հանգանակություններ, իսկ հավաքված նվիրատվություններով լուծվում էին համայնքում առկա խնդիրները: 1890-ական թվականներին Արդու Համիլ Ա-ի օրոք կազմակերպված հայերի զանգվածային կոտորածների պատճառով միաժամանակ այդ ակտիվությունը որոշակիորեն նվազեց:

1908 թ. երիտրուրբական հեղաշրջումը մեծ ոգևորություն առաջացրեց արևմտահայ հասարակության մեջ: Կանանց կողմից ձևավորված կազմակերպությունները սկսեցին վերակազմավորվել, կիմնադրվեցին նորերը: Դրանց թիվը կտրուկ աճեց հատկապես 1909 թ., որը պայմանավորված էր Ադանայի արյունայի դեպքերով: Այդ նորաստեղծ կազմակերպությունները բարեգործական և նապաստամատույց բնույթ ունեին և կիմնականում ծավալում էին աղքատախնամ, այրիախնամ և որբախնամ գործունեություն,<sup>1</sup> ինչպես նաև զրադշում էին կանանց կրթության և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման գործով: Այս հանգամանքը գրեթե կենսական նշանակություն է ունեցել 1909 թ. կիլիկիահայության կոտորածներից հետո աղետյալներին օգնելու և հայկական համայնքի կյանքը վերակազմավորելու հարցում: Այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսին որբերի ու այրիների խնդիրն էր, կիմնականում ծանրացած էր մի շարք կանանց կազմակերպությունների և մի քանի անհատ կին գործիչների ուսերին, որոնք անգնահատելի աշխատանք տարան հայ աղետյալներին օգնելու համար: Այսօր նրանց անձնական արխիվներում, տպագիր և անտիպ նյութերում բազմաթիվ տեղեկություններ կարելի է գտնել դարասկզբին Ադանայում և հարակից շրջաններում տեղի ունեցած ողբերգության և նրան հաջորդող ժամանակաշրջանի վերաբերյալ, որոնք կարևոր աղբյուր են հանդիսանում 1909 թ. կիլիկյան դեպքերն ուսումնասիրելու համար:

Եթե համիլյան կոտորածների ժամանակ հայերը հնարավորություն չունեին օգնելու շարդերից ստուժած և փրկված իրենց հայրենակիցներին, ապա 1909 թ. Ադանայի դեպքերից հետո թուրբական կառավարությունն ընձեռել էր այդ հնարավորությունը և ուղղակիորեն մասնակցում էր օգնության գործին՝ թերևս այս կերպ փորձելով կոծկել տեղի ունեցած հանցագործության մեջ իր սեփական մեղսակցությունը. «Երբ Կիլիկեան ահաւոր դեպքը տեղի ունեցաւ, - նշում է ժամանակակիցը, - երբ շատեր տունն, ինչը զրկուեցան, չորաբեկ հացի կարօս մնացին, վրաններու տակը՝ չոր գետնի, հողի ու մնխրի վրայ նստան, սահմանադրական կառավարութիւնը մէկ կողմէն, ամբողջ Պոլսոյ ու արտասահմանի հայու-

1 1909 թ. կիմնադրվել է «Հայ կանանց միությունը», Կիլիկիայի աղետաց հետո վերապրողներին օգնելու նպատակով: «Հայ տիկնանց միությունը», որը կազմակրուել էր Ֆերիզուլի «Տիկնանց» և Բերայի «Աշխատանքի տան» որոշ անդամների միավորումով, դարձյալ այդ նպատակն ուներ: Բացի հագուստ և դրամ տրամադրելոց, նրանք Օրթազյուղում կիմնում են որբանոց, որտեղ կրթում և դաստիարակում են հայ որբուհիներին: Գատըզյուղում կիմնադրված «Տիկնանց միությունը» հանգանակություն էր իրականացնում Ադանայի որբերի համար: «Հայ կիններու միության» կամ «Պոլսոյ հայ տիկնանց միության» անդամները շրջում էին տնեսուն, հավաքում հազուստ ու անհրաժեշտ պիտույքներ: Այս կազմակերպությունները Ադանայի որբուհիների համար բացում են նաև որբանոց-արհեստանոց:

## Աղեքսանյան Աննա

թիւնը, Հ. Բ. Միութիւնը միւս կողմէն՝ նպաստներ ու օգնութիւններ հասցուցին...»<sup>2</sup>: Անդրադառնալով այս հաղցին՝ Զապել Եսայանը<sup>3</sup> նշում էր, որ «...Աղանայի կոտորածները միակ առաւելութիւն մը ունիին Համիտեան կոտորածներուն վրայ. այն էր, որ անձամբ կարողացանք այցելել աղետավայրը և ոչ միայն օգնութեան հասնիլ արկածեալներուն, այլ նաև գրել տաժանալի տպաւորութիւնները»:<sup>4</sup>

1909 թ. Աղանայի կոտորածներից հետո Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը և Ազգային պատվիրակությունը համատեղ Կարմիր խաչի հանձնաժողով ուղարկեցին Կիլիկիա, որը պետք է տեղում կազմակերպեր աղետյալների և որբերին ցուցաբերվող օգնությունը:<sup>5</sup> Հակոբ Թերզյանի խոսքով՝ «Նպաստներու գործին հսկելու պաշտօնով Առանա հասան՝ Տիկին Զապել Եսայեան, Տիկին Արշակուիի Թէոդիկի,<sup>6</sup> Օր. Սաթենիկ Օհանջանեան,<sup>7</sup> որ կատարեալ անձնուիրութեամբ աշխատեցան սփոփել աղետեալներու ցաւերը, աղետավայրերն այցելելով աղետեալները միխարեցին եւ գրական ու բանաստեղծական գեղեցիկ էցեր նուիրեցին աղետին ողբայի յիշատակին»:<sup>8</sup>

«Ազգանվեր հայուիյաց ընկերությունն»<sup>9</sup> (հետայսու՝ «Ազգանվեր») իր հիմնադրման առաջին օրվանից ուշարություն է դարձել Կիլիկիային, որտեղ չնայած հոծ հայկական բնակչություն կար, սակայն տեղի հայերը հիմնականում խոսում էին թուրքերեն, արաբերեն, քրդերեն և գրեթե չին տիրապետում իրենց մայրենի լեզվին: «Ազգանվերը», չնայած իր ունեցած սուր միջոցներին, տեղում կարողացել էր կազմակերպել հայ աղջիկների մայրենի կրթությունը, որը տվել էր իր արդյունքները:<sup>10</sup> Զապել Եսայանը, անդրադառնալով Կիլիկիայում հանդիպած դժվարություններին, իր հողվածներից մեկում գրում է, որ դժբախտաբար Աղանայում մարդիկ չին խոսում իրենց մայրենի լեզվով, և նրանց հնարավոր էր հասկանալ միայն այն դեպքում, երբ վերջիններս խոսում էին «թշնամու լեզվով»: Նա

2 Ներսէս Եպսկ. Դանիելեան (Սսական Վարդապ.), Կաթիլ մը ջուր այրած սրտերու, Կ.Պոլսի, 1912, էջ 56:

3 Եսայան Զապելը (Հովհաննիսյան) ծնվել է Կ. Պոլսում 1878 թ.: Նախնական կրթությունը ստացել է տեղի Սր. Խաչ ճախակարարանում, որից հետո 1895 թ. մեկնել է Փարիզ, որտեղ ավարտել է Սորբոնի համալսարանը: 1908 թ. Եսայանը վերադարձել է Օսմանյան կայսրություն և մինչև 1914 թ. այստեղ ծավալել գրական, հասարակական-քաղաքական բուռն գործունեություն:

4 Գրական Երեկոներ. Թրքահայ ժամանակակից գրողներ (դասախոսություն Զապել Եսայանի), Թիֆլիս, 1916, էջ 35:

5 Եղիշեան Բ., Աստանայի հայոց պատմութիւն, Անթիլիաս-Լիբանան, 1970, էջ 255: Ներսէս Եպսկ. Դանիելեան, նշվ. աշխ. էջ 57:

6 Հասարակական գործիչ, մանկավարժ, հրապարակախոս և թարգմանիչ Արշակուիի Թէոդիկը (Ճեզվենյան) ծնվել է Կ. Պոլսում, նախնական կրթությունը ստացել է Սամաթիայի Շունյան-Վարդիկյան վարժարանում: 1895 թ. մեկնել է Անգլիա՝ բարձրագույն դպրոցում սովորելու, ապա մեկնել է Փարիզ՝ շարունակելու ուսումն այնտեղ: 1898 թ. վերադարձել է Պոլսի և գրավել հասարակական գործունեությամբ՝ երկար տարիներ հանդիսանալով «Ազգանվեր հայուիյաց կազմակերպության» նվիրյաններից մեկը:

7 Սաթենիկ Օհանջանյանը ծնվել է 1880-ական թթ.: Նա Հայաստանի առաջին հանրապետության վարչապետ Համբ Օհանջանյանի բույրն էր: Սովորել էր Թիֆլիսի ուսական գիմնազիայում: Նա ան-դամակցել Հ.Յ.-Ի.ին, հանդիսացել նաև Թիֆլիսի «Մելոր» ընկերության վարչության քարտուղարը: 1908 թ., երբ Դաշնակությունը հալածվում էր Կովկասում, տեղափոխվել է Պոլսի և իր գործունեությունը շարունակել այսուղեղ: Սաթենիկը եղել է Պոլսի կանանց Կարմիր խաչի և Աշխատանքի տաճ հիմնադիրներից: Տե՛ս Ս. Զեյթյան, «Հայ կնոջ դերը հայ հեղափոխական շարժման մեջ», Լու Անջելս, 1992, էջ 147-149; Zabel Essayan, Le Rôle de la femme Arménienne pendant la guerre, Revue des études Arméniennes, T. II, Paris, 1922, p. 134:

8 Թէրզեան Յ. Յակոբ, Կիլիկիոյ Աղետը, Կ. Պոլսի, 1912, էջ 151:

9 Տե՛ս Աղանալյան Ս. Լ., Ազգանվեր հայուիյաց ընկերությունը, Պատմա-քանասիրական հանդես, 1979, թիվ 4, էջ 255-259:

10 Victoria Rowe, Cilicia: The View From The Constantinople Women's Organizations, (Armenian Cilicia; ed. by R. G. Hovannisian and S. Payaslian ), California, 2008, p. 375.

նշում է, որ միայն կանանցից կարելի էր լսել մայրենի լեզուն, և որ հիմնականում իգական սերի ներկայացուցիչներն էին տիրապեսով հայերենին: Զապել Եսայանի այն հարցին, թե ինչպես է պատահել, որ վերջիններս չեն կորցրել իրենց մայրենի լեզուն, ստանում է հետևյալ պատասխանը. «մենք դեռ երեխայ էինք, երբ Ազգանվուրեր հայուհեացն ուսուցուի ի ուղարկեց մեզ մօս և մենք չմոռցանք մեր մայրենի լեզուն»: «Այսպիսով,- եզրափակում է Եսայանը,- Ազգանուրեր հայուհեացն էր լոյսի շողը»:<sup>11</sup>

1909 թ. ապրիլյան եղեռնից հետո «Ազգանվերն» իր ամբողջ ջանքերն ուղղեց դեպի Կիլիկիա՝ աղետից փրկվածներին օգնելու: Ընկերության անդամները շփոթահար էին, նորակազմ ընկերությունը դրամական բավական սուր վիճակի մեջ էր: Արշակուի Թեոդիկն առաջարկում է Սիափիկին (Ազգանվերի ատենապետ) ընկերության կողմից իրեն գործուղել Կիլիկիա: Սիափիկ այդ առաջարկն իրենց ունեցած միջոցներով անիրազործելի է համարում: Արշակուի համար, դիմելով մի շոգենավային ընկերության, ձեռք է բերում անվճար տոնս և մեկնում՝ գրպանում ունենալով ընկերության ընդամենը 30 ոսկին:<sup>12</sup> «Հայուհեաց ընկերութեան կողմէ այս չորեքշաբթի մայրաքաղաքէս Մերսին կը մեկնի Տիկին Ա. Թէոդիկ՝ որրանցներ բանալու համար...»:<sup>13</sup> Արանայում Արշակուի Թեոդիկը հիմնում է որրանց, և ընկերության համար ներկայացուցի գտնելով, վերադառնում Կ.Պոլիս: Նրան հաջողվել էր տեղեկություններ հավաքել Կիլիկիայի բոլոր վարժարանների վերաբերյալ, որոնց հիման վրա կատարվեցին համապատասխան մասնագետների գործուղումներ: <sup>14</sup> Ընկերությունն իր խնամքի տակ էր առել Մարաշի, Դյորք Յովի, Այնրապի, Հասան Բեյլի, Հաճընի որրանցների վարժարանները և նրանց համար դասագրքեր, գրենական պիտույքներ և ձեռագործի նյութեր էր մատակարարում:<sup>15</sup>

1909 թ. դեպքերից հետո Ազգանվերը շարունակում էր հայկական դպրոցներ բացելու իր առարելությունը: Այդ ժամանակաշրջանում դա կենսական նշանակություն ուներ հայերի համար, քանի որ պետական և օտարների բացած որրանցներում հայերեն չէր ուսուցանվում: Այս հանգամանքը կարող էր կործանարար դառնալ հատկապես հայ որբերի ազգային ինքնության հարցում: «Քանանք դպրոցներ, որպէս զի անոնք չխորթանան մենտ, որպէս զի օր մը վերմակի մը կամ անկողինի մը համար այլադաւան կրօնամոլ մարդուսին չյանձնեն իրենց մարդկային արժանապատութիւնը. բանանք դպրոցներ, որպէս զի սիրեն անոնք իրենց լեզուն, իրենց ցեղն...»:<sup>16</sup>

Ա. Թէոդիկը կարողացել է նաև ամայացած Կիլիկիայում տեսածն ու վերապրածը հրատարակել «Ամիս մը ի Կիլիկիա» գրքում:<sup>17</sup> Պետք է նշել, որ նրանից առաջ և հետո շատ քշերին է հաջողվել նման սարսափներն այդքան զուսաց ու սառնասիրտ ներկայացնել: Ընթերցողին մասնակից դարձնելով իրադարձությունների վերլուծությանը՝ նա փորձում է իր սեփական գնահատականները տալ կատարվածին, մատնանշել մեղավորներին, արդարացնել անմեղներին և բարձրացնել ժամանակը բնորոշող ամենատարբեր խնդիրներ: Օրինակ ոճրագործության մեղավորների շարքում նա նշում է Ադանայի «Իրիդալ» թերթի խմբագիր Իհսան Ֆիքրիին, որը հակահայկական քարոզչություն էր ծավալել Ադանայում

11 Եսայան Զապել, Հայ կնոջ դերը իր կազմակերպած ընկերութեանց մեջ, «Արագած», 29 յունիս, 1911, էջ 83:

12 Հարությունյան Ա., Երևելի տիկնանց դարը: Հայ կանանց հասարակական գործունեությունը 19-րդ դարում և 20-րդ դարասկզբին, Եր., 2005, էջ 40:

13 «Ժամանակ», 1909, թիվ 305, էջ 3:

14 Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 54:

15 Ազգանուրեր Հայուհեաց Ընկերություն, Երկամեայ Տեղեկագիր (1910-1912), Պոլիս, 1914, էջ 42-44:

16 Թէոդիկ Արշակուի, Ամիս մը՝ ի Կիլիկիա. Կցկոտոր Նօրեր, Կ. Պոլիս, 1910, էջ 77:

17 Տ՛ս՝ Թէոդիկ Արշակուի, Ամիս մը՝ ի Կիլիկիա. Կցկոտոր Նօրեր, Կ. Պոլիս, 1910:

## Ալեքսանդրան Աննա

և թուրքերին կոչ էր անում կոտորել ապստամբության պատրաստվող և «Թուրքիայի մասնասումը երազող գյավուրներին»:<sup>18</sup> Նրա մասին Արշակուի հին գրում է. «Հրազդն ու դաշոյն ապահովարար այնչափ աւեր չէին սփռած հոս, որչափ այդ մարդուն գրիչը: Ֆիքրի իմ աչքին՝ տիսրանուն հեղինակն էր Կոստորածին...»:<sup>19</sup> Արշակուի հարազատորեն է վերարտադրում Միսխում,<sup>20</sup> Չորր Մարզվանում<sup>21</sup> (Դեռքբ-Ցոյ) և Հայոցուղում<sup>22</sup> (Վյավուր Քյոյ) հայերի կազմակերպած ինքնապաշտպանական դրվագները՝ վերջինն անգամ անվանելով դյուցազնական:<sup>23</sup>

Զարդերից հետո հայերի զանգվածային բանտարկություններ էին եղել, և հարյուրավոր անմեղ հայեր թուրքական բանտերում հայտնվել էին չափազանց ծանր դրության մեջ: «Ազգանվեր հայուիցն»՝ ի դեմ Ա. Թեոդիկի, զբաղվում էր նաև նրանց խնդիրներով և շատ հաճախ վերջիններին օգնելու համար վտանգում էր անգամ սեփական կյանքը:<sup>24</sup> Ընդհանրապես այդ շրջանում հայ կանանց գործունեությունը կարծես դուրս լիներ թուրքական իշխանությունների ուշադրությունից, ինչը չի կարելի ասել տղամարդկանց պարագայում: Նրանք հայ կանանց գործունեությունը դիտում էին որպես ապաքաղաքական ակտություն և չէին խանգարում նրանց գործունեությունը կարծելուանը: Այս հանգամանքն օգնում էր կանանց ավելի լայն գործունեություն ծավալել Կիլիկիայում և օգնել թե՛ որբերին, թե՛ բանտարկալներին: Նրանց երբեմն հաջողվում էր անգամ ազդել կառավարության որոշումների վրա: Այս հանգամանքը զարմացրել էր իրադարձությունների անմիջական մասնակից Զապել Եսայանին, ով ամուսնուն գրած նամակներից մեկում այս կապակցությամբ նշում է. «.... ասիկա զարմանալի կը թուի քեզի, բայց իրականութիւնը այն է, որ ես և օրիորդ Սարենիկը միայն կրմտնանք ամեն տեղ, կ'երթանք մինչեւ իրենց մօտ (խոսքը բանտարկալների մասին է.-Ա.Ա.): իրենց խնդիրները կը ներկայացնենք ուր որ հարկ է. մէկ խօսքով իրենց անհրաժեշտ պէտք ենք. նախապէս իմանալով իրենց մասին եղած տրամադրութիւնները, երբեմն յաջողած ենք փոխել զանոնք»:<sup>25</sup>

Հայ կանանց նախնաւազ անհանգստացնում էր որբերի խնդիրը: Հայությունը կանգնած էր նրանց կորցնելու մեծ վտանգի առաջ: Զապել Եսայանը, որն իր ողջ կյանքը նվիրել է Կիլիկիայի հայ որբերին,<sup>26</sup> մեծ ցավով էր անդրադառնում այս խնդրին՝ շատ լավ հասկանալով, որ ոչ օտար որբանոցները և ոչ էլ պետական «Օսմանյան որբանոցն» ապահով չէին կարող լինել հայ որբերի համար: Նախորդ փորձը ցոյց էր տվել, որ միայն լավ կազմակերպված ազգային որբանոցը կարող էր հայ պահել հայ որբուկներին:<sup>27</sup> Հայ որբերին ազգային որբանոցում պահելու և օտար որբանոցներում հայերենի դասավանդման պայքարը հիմնականում ծանրացած էր հայ կանանց ուսերին: Զապել Եսայանը, ում Պոլսի Հայոց պատրիարքարանը լիազորել էր որպես որբերի հարցերով գլխավոր տեսուչի, բա-

18 Համբարյան Ա. Ս., Կիլիկիայի 1909 թ. հայկական կոտորածները, Պատմա-բանասիրական հանդես, թիվ 4, Եր., 1988, էջ 14:

19 Թեոդիկ Արշակուի, նշվ. աշխ., էջ 106:

20 Նոյն տեղում, էջ 131-137:

21 Նոյն տեղում, էջ 168-193:

22 Նոյն տեղում, էջ 110-117:

23 Նոյն տեղում, էջ 114:

24 Նոյն տեղում, էջ 149-160:

25 Զապել Եսայան, Նամակներ, Եր., 1977, էջ 99:

26 Տե՛ս Ազատեան Լ., Հայ որբերը Մեծ Եղեռնի, գիրք երրորդ, Լու Անձելը, 2002, էջ 83-84:

27 1890-ական թթ. համբյան ջարդերից հետո հայ որբերի ճակատագիրն այդպես էլ անհայտ մնաց, քանի որ նրանք իմանականում Օսմանյան պետության խնամքի տակ էին և թուրքական դաստիարակություն էին ստանում:

նակցություններ էր վարում թուրք պաշտոնյաների հետ որբանոցներում հայերենի դասավանդման համար: Այս կապակցությամբ նա իր ամուսնուն գրում է. «Սիրելի Տիգրան, ... Կուսակալին հետ կուրծք-կուրծքի պայքար մը ունեցանք որբանոցի պաշտօնական լեզուի մասին. ախ սա քո ժեն թուրքերդ, մանաւանդ իթթիհատականներդ խէրը տեսնաս. շատ լաւ, սքանչելի մարդ մըն է, բայց...»:<sup>28</sup>

Աղանայի ջարդերի տարաբնույթ ուսումնասիրությանը նպաստում է նաև Զ. Եսայանի նամակների վերլուծությունը, քանի որ դրանք, վերարտադրելով Կիլիկիայի իրադարձությունները, պահպանել էին փաստական հավաստիությունը: Այդ նամակները կարելի է բաժանել երկու մասի՝ պաշտոնական նամակներ, որոնք նա ի պաշտոն ուղարկում էր ժամանակի հայտնի հասարակական, կրոնական ու քաղաքական գործիչների, և անձնական նամակներ, որոնք նա ուղարկում էր իր հարազատներին ու նտերիմներին: Այս նամակներն արժեքավոր աղբյուր են մի կողմից այդ ժամանակաշրջանի հայ հանրության, մասնավորապես նտավորական շրջաններում տիրապետող հոգերանությանը, տրամադրություններին ծանոթանալու, տվյալ ժամանակի իրադարձություններին իր տված անաշար գնահատականներն ուսումնասիրելու համար, իսկ մյուս կողմից՝ վավերագրական փաստեր են պարունակում, որոնք նույնպես անշափ կարենք են: Զ. Եսայանը Կիլիկիայից նամակներ էր ուղարկում ամուսնուն՝ Տիգրան Եսայանին՝ նանրամասն նկարագրելով իր տեսածն ու վերապրածը, կրած նեղությունները, զանգատն ու գոհունակությունը: Զապել Եսայանի ֆոնդում<sup>29</sup> ութ նամակ է պահպանվել, որոնք բացառապես վերաբերում են Աղանայի դեպքերին: Նամակները գրված են անմիջապես Կիլիկիայից, և հիմնական հասցեատերը նրա ամուսինն է՝ Տիգրան Եսայանը:

#### Այսպես՝

«Տիգրան Եսայանին, 1909, յունիսի 18 (1), հինգշաբթի, Մերսին

Սիրելի Տիգրան,

...ինչքան ալ պատրաստուած ըլլայի ահուելի աղէտին, ինչքան ալ կարծէի թէ չափազանցութիւններ եղած են արդեն պատմած լուրերուն մէջ, տեսած այնպիսի ահաւոր քան մըն է, որ ամէն մի երեակայութենէ վեր է. ոչ մէկ կերպով զաղափար մը չէի կրնար ունենալ, մինչեւ որ աչքերովնիդ չտեսնար եղածը. ամբողջ վիճակը մը կործանուած է. ողջ մնացող և հոս ապաստանողները այնքան բարյալպուած են, որ եթէ բնական պէտքերու անմիջական դրդումը չըլլայ, իրենք ալ այսին մեռնեն յուսահատութենին. ոչ մէկ յոյս, ոչ մէկ ապազայի նշոյլ ... մահ, աւերակ, անօթութին, հիվանդութին և բանտ ... երկիրը մտած միջոցնիս առաջին տպավորութիւնս այն է, որ մեռելի տուն կը լնանամ կոր. այն ալ դեռ չքաղուած, թարմ մեռելի տուն ... Կիլիկիան կործանուած է ... այս է ամէնուն տպավորութիւնը, դեռ Աստան չեմ զացած, բայց իհմակուն լսածներս և ինձէ պատմածները կը վկայեն, որ բոլորվին գոհուած են հայերը յայտնի և նախապատրաստուած ծրագրով. արդէն յայտնի է. թուրքերը հոս այն երևոյթը ունին, ինչ որ ունելին հին ռեժիմի գէշ օրերուն մէջ Պոլսոյ մէջ և քան մըն ալ աւելի. երեսդ կը նային զարմացումով, իբր թէ հարցունիին, թէ ինչպէս կը լլայ, որ ողջ մնացած ես. յատկանշական կէտ. երբ Պոլսէն եւ որիշ տեղերէ հայ անհատներ եկեր են, որոնք թալանէ և կոտորածէ փախածի երևոյթ չտնին և կը ննանին արտաքին երևոյթով իրենց էֆենտիներուն, թուրք ամբոխը զարմացեր է և ոմանք յայտներ են, թէ խարուած կ'զգան ինքզինքնին, քանի որ որիշ տեղեր հայերը ողջ մնացած են: Արդի կառավարության մեղակցութիւնն ակնյայտ է:

28 Եսայան Զապել, Նամակներ, էջ 107:

29 Հարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի ֆոնդեր, Զապել Եսայանի ֆոնդ, համ. 230-236, 245-250:

## Ալեքսանդրան Աննա

Ուրիշ կէտ մը. միշտ կարծուած է, թէ լեզուի ու բարքերու նոյնութիւնը համերաշխութիւն յառաջ կրնան բերել ցեղերու մէջ. իսու հայ մը թուրքէն կարեի չէ զանազանել. նոյն դիմագծութիւնը ունին, նոյն շեշտը ունին, նոյն բարքերը ունին գրեթէ. կիմային տիրական ազդեցութիւնը արտաքին երևոյթով և բարքով նոյնացուցեր է զիրենք. բայց դարձեալ ջարդ, ավերում և այլն...

Այս նամակս պահէ, օրը օրին տպատրույթուններս կը ներկայացնեն, կրնան պէտք ըլլալ... եթէ որեւէ կերպով անապահով զգաս ինքինք, յանձնէ Bareille-ին ներփակեալ»:<sup>30</sup> Այս նամակը նա գրել է դեռևս Աղանա չհասած, բայց ինչպես երևում է բովանդակությունից, նրա մոտ արդեն ձևավորված կարծիք կար կատարվածի, մեղավորների և կազմակերպիչների հարցում: Նա պարզապես տեղի ունեցածի պատճանների փնտրութիւն մէջ էր: Ավելի ուշ, երբ արդեն եղել էր Կիլիկիայի բոլոր աղետավայրերում, մանրանասն ամուսնուն նկարագրում է իր բոլոր հոգսերն ու մտատանջումներն՝ անդրադառնալով գրեթե բոլոր հրատապ հարցերին: Այսպէս՝

«Տիգրան Եսաեանին, 1909 թ., սեպտեմբեր, Մերսին

Սիրելի Տիգրանս, Երկար ճամբորութենէ մը եսոք, տաժանափ տպատրութիւններով բերնարուած՝ ողջ, առողջ հասայ Մերսին, անցնելէ եսոք հասանք Սիս, երեք օր մնացինք հոն, հետո ճամբայ ելանք, հասանք Ղարս-Քազար, ...Գիշեր մը, մնացինք հոն և հետեւեալ օրը հասանք Օսմանիէ: Հոս ժողովուրդը խոհեմութեամբ շարժելուն ու իր աղանդերուն ինչպես քահանաներուն խօսրին անսալուն իհմնայատակ կործանուած է. Օսմանիէ ընդարձակ տեղ է, աւերակները վերջ չունին, 3 տուն միայն ազատուած են, 800 հոգի հրացանով, սրով, ինչպէս նաև կացնով սպանուած է ու 200 հոգի այրած է եկեղեցին մէջ: Այս թվերը վակերական չեն և նվազագոյն չափը կը նշանակեն: Սարսափելի գիշեր մը անցուցինք հոս տան մը մէջ, ուր 25 արկածեալ ընտանիք պատսպարած է: Հետեւեալ առտուն արշալոյսին ճամբայ ելանք, հասանք Էրզին, ուր նպաստ բաշխելու պատրուակով տեսանք մեր բանտարկեալները, տեսանք նաև այն 5 հայերը, որ կախաղանի դատապարտուած են և որոնց մէջ 14 տարեկան պատանի մը կայ»:<sup>31</sup>

Կիլիկիայի աղետին շատերն են անդրադարձել: Գրվել են տարաբնույթ բազմայիւ գործեր, սակայն դրանց շարքում առանձնանում են հատկապես Զապել Եսայանի գործերը: Հետագայում Զապել Եսայանը Աղանայից իր բոլոր տպավորությունները ներկայացրել է առանձին գրքում և 1911 թ. Կ. Պոլսում հրատարակել իր նշանավոր «Ավերակներուն մէջ» աշխատությունը, որն այդ ժամանակաշրջանում Աղանայի դեսպերին նվիրված ամենակարևոր սկզբնադրյութներից մեկն է:

Կիլիկիայի աղետը Զապելն արտացոլել է նաև գեղարվեստական երկերում՝ «Անեծք»<sup>32</sup> վիպակում, «Սաֆիե»,<sup>33</sup> «Նոր հարսը»<sup>34</sup> պատմվածքներում: Այս ստեղծագործություններում նա փորձում է հակառակ կողմից նայել կատարվածին՝ իհմնականում անդրադառնալով ոճրին մասնակից դարձած թուրքերին և նրանց հետազս ճակատագրին: Նա ամենուր միակ մեղավոր տեսնում էր օսմանյան պետությանը և ոչ կուրորեն նրան հետևող հասարակությանը: «Երեկոնեան ժամուն տպատրութիւններ Ատանայէ» հոդվածը, որը հրապարակվել էր 1911 թ. «Ազատամարտում» նա այսպես է եզրափակում իր խոսքը՝ թողնելով վերլուծությունը միմիայն ընթերցողին. «Հետզհետե կմօտենան... համաշափ

30 Զարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի ֆոնդեր, Զապել Եսայանի ֆոնդ, համ. 248 (3):

31 Եսայան Զապել, Նամակներ, էջ 103-105:

32 «Ազատամարտ», 1911, թիվ 20, էջ 621-628:

33 «Ազատամարտ», 1911, թիվ 13, էջ 1028-1031 (4-6):

34 «Ազատամարտ», 1911, թիվ 39, (էջ 601-603, 3-5):

զինուրական քայլերով գիշերապահ ջոկատ մը կը յառաջանայ աւերակ քաղաքին մէջ... ի գոր կը ճգնիմ տրամարանել, ի գոր կը ճգտիմ կառչի հաշտութեան և խաղաղութեան խոստումներու... : Այդ քայլերուն աղմուկին մէջ հոգիս, որ այդ պահուն ապաստանած են բոլոր արկածեալներու ոխերն ու տառապանքը, հոգիս կը կարծէ լսել դարաւոր թշնամիին յառաջսահաղացութիւնը... այդ քայլերու աղմուկը աւերակ և հրդեհուած քաղաքին մէջ...»:<sup>35</sup>

Զապել Եսայանը չդադարեց հոգ տանել Կիլիկիայի հայ որբերի մասին մինչև 1921 թ: 1920 թ. մարտին լիազորվելով Փարիզի Հայկական ազգային պատվիրակության կողմից, նա ժամանեց Կիլիկիա՝ որպես կիլիկյան որբանցների քննիչ:<sup>36</sup> Նրա առաքելությունը զուգադիպեց թուրքական ազգային շարժման հանդեպ ֆրանսիական քաղաքականության կտրուկ փոփոխությանը: Ֆրանսիացիների և քեմալականների մերձեցումը վտանգի տակ էր դնում Կիլիկիայի հայությանը: 1920 թ. ապրիլի 2-ին Եսայանը համաձայնության է գալիս ֆրանսիացի գնդապետ Բրեմնի հետ՝ որբերին Կիլիկիայից դուրս քերելու հարցում: 700 որբեր տեղափոխվում են Մերսին: Ֆրանսիական վարչության որոշմամբ այստեղ ստեղծվում է Կիլիկիայի որբանցների ընդհանուր միություն, որի տնօրինությունը կրկին ստանձնում է Եսայանը: Հունիս ամսին Մերսինում կենտրոնացած որբերի մի մասին տեղափոխում են Կիպրոս, իսկ արդեն 1921 թ. մնացած որբերը հանգրվան են գտնում Սիրիայում և Լիբանանում:<sup>37</sup>

Կիլիկիայի կոտրածների ազդեցության տակ Զ. Եսայանի կրած տառապանքները նրան ուղեկցեցին իր ամրող կյանքի ընթացքում:

Այն, ինչ տեղի ունեցավ 1909 թ. Կիլիկիայում, ցնցեց ողջ հայությանը: Հարյուրավոր մարդիկ գալիս էին այդ «ավերի» երկիրը, որպեսզի անձամբ տեսնեն կատարվածը, օգնեն աղետայններին: Կիլիկիահայությանն օգնելու հարցում հատկապես մեծ էր հայ կանաց դերը: Ազետից հետո Կիլիկիայում նրանց շնորհիվ հիմնվեցին որբանցներ, բացվեցին դպրոցներ, որտեղ կազմակերպվում էր հայերեն լեզվի ուսուցումը: Այս գործում հատկապես ակտիվ էր «Ազգանվեր հայուհյաց ընկերությունը», որը Կիլիկիայում իր գործունեությունը շարունակեց մինչև Հայոց ցեղասպանության տարիները: Մեծապես դրա շնորհիվ կիլիկիայի մասնիկների և որբերի շրջանում հնարավոր եղավ պահպանել հայ ինքնությունը:

Կիլիկիայի կոտրածներից հետո թուրքական կառավարությունը զանգվածային ներքալություններ իրականացրեց հայության շրջանում: Այս բանտարկյալներին օգնելու հարցում հատկապես մեծ էր մի քանի կին գործիչների դերը: Նրանք օգտվելով այն հանգամանքից, որ թուրք պաշտոնյաներն առանձնապես լուրջ չեն վերաբերվում իրենց գործունեությանը, կարողանում էին տեսակցել բանտարկյալներին, օգնություն ցուցաբերել և անգամ կազմակերպել նրանց փախուստը:

Կիլիկիայում գործունեություն ծավալած կին անհատ գործիչներից հատկապես առանձնանում էր Զապել Եսայանը, ով 1909 թ.-ից անհավասար պայքար էր մղում թուրքական իշխանությունների դեմ հայ որբերի ու նրանց ինքնության պահպաննան համար:

35 Եսայան Զապել, Երեկուան ժամուն տպաւրութիւններ, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1910, թիվ 4, էջ (52-56), (4-8); Զարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի ֆոնդեր, Զապել Եսայանի ֆոնդ, համ. 677:

36 Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան: Հտ. 1-ին, 1906-1940; Գահիրէ, 2006, էջ 120:

37 Տնը Ազատեան Լ., նշվ. աշխ., 2002, էջ 84:

Anna Aleksanyan

**The Social Activities of the Armenian women in Cilicia after 1909 Massacres.**

(e.g of Z. Esayan and A. Teodik)

Summary

After 1909 massacres the Ottoman Armenians did their best to help those who suffered during Adana massacres. The Armenian women were also involved in the relief mission to help orphans, widows and prisoners. Many witnesses published voluminous works, articles trying to assess the situation and to find out real organizers and causes of the massacres. In this respect, the works of Zabel Esayan and Arshakuhi Teodik present very important sources as an eyewitness account. The authors referred the Western Armenian women, who played an active role in supporting Cilician Armenians after the disaster. Armenian female activists gave their own appreciation of the situation in their works, memoirs and letters.

**1909թ. ԱԴԱՆԱՅԻ ԵՎ ՀԱԼԵՊԻ ՎԻԼԱՅԵԹՆԵՐՈՒՄ ՏԵՂԻ  
ՈՒՆԵՑԱԾ ԿՈՏՈՐԱԾՈՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ  
ՀԵՏՎԱՆՔՆԵՐԸ**

*Արքիմե Բաբումյան*

Դարեւ շարունակ Օսմանյան կայսրության վարած հայահալած քաղաքականության բաղկացուցիչ մասն է եղել հայկական տարածքների ժողովրդագրական պատկերի փոփոխությունը՝ ի նպաստ թուրք և բուրդ էրնողավանական տարրի: Դեռ XVI-XVIII դարերի ընթացքում ողջ կայսրության տարածքում հետևողականորեն իրականացվել է հայերի քնի մահմետականացման քաղաքականություն: Մյուս կողմից՝ կայսրության վարած ազգային, սոցիալական, կրոնական խտրական քաղաքականությունը ժամանակի ընթացքում անխոսափելիորեն հանգեցնում էր երբեմնի հայարնակ տարածքների հայարավմանը: XIX դարի վերջին ժողովրդագրական կտրուկ փոփոխությունների պատճառ հաղիսացան Օսմանյան կայսրության գրեթե բոլոր հայարնակ վայրերում իրականացված ջարդերը, ինչպես նաև գրեթե նոյն ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունից՝ արևմտահայ բնակչության ԱՄՆ սկսած արտագաղթը: XX դարասկզբին դեպի ԱՄՆ արտագաղթի տեմպերը մի փոքր նվազել էին, սակայն Ադանայի 1909 թ. ջարդերից հետո ավելի ու ավելի շատ հայեր լրեցին իրենց բնօրրանը՝ ապաստանելով այլ երկրներում: Արտագաղթի տեմպերն աճեցին ոչ միայն ջարդից տուժած նահանգներից, այլ նաև մյուս նահանգներից, որ կիլիկյան արհավիրքի սարսափները որևէ հոյս չեն թողել ապագայի հանդեպ: Ջարդն էականորեն ազդեց հայ բնակչության թվաքանակի ու հայարնակ վայրերի հայարավման վրա, որն իր գագաթնակետին հասավ 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության հետևանքով:

1909 թ. ապրիլին Ադանայի նահանգում և Հալեպի նահանգի որոշ բնակավայրերում իրականացված կոտորածներից հետո Կիլիկյայի տարածքում տեղի ունեցան ժողովրդագրական որոշակի փոփոխություններ, կոտորածի հետևանքով արձանագրվեցին բնակչության տեղաշարժեր, որոնց էլ կփորձնենք անդրադառնալ այս ուսումնասիրության շրջանակներում:

Կոտորածներից հետո արձանագրված ժողովրդագրական փոփոխություններին հարկ ենք համարում անդրադառնալ հենց ջարդի զոհերի մոտավոր թվաքանակի հստակեցմամբ: Այստեղ տեսակետներն ու բերված ցուցանիշները տարրեր են, քանզի խիստ հակասական են պաշտոնական թուրքական և՝ մյուս կողմից՝ հայկական և օտար աղբյուրների ներկայացրած տվյալները: Ջարդերից հետո զոհերի թիվը հաշվարկելիս շրջանառվեց 30000 թիվը: Որոշ հայկական թերթերի հաշվումներով ջարդերին զոհ էր գնացել 35000-ից ավելի մարդ, այրվել էին մի քանի տասնյակ գյուղեր: <sup>1</sup> Խշանություններն այս տվյալներին արձագանքեցին խիստ բացասական կերպով: Ադանայի կուսակալ Մուստաֆա Զեհնին նշում էր, որ զոհերի թիվը 30000 հաշվելը զրաքարտություն է՝ նշելով, որ զոհերի ընդհանուր թիվը 10000-ից քիչ է:<sup>2</sup> Կոտորածի հետևանքներն ուսումնասիրելու տեսանկյունից կարևորվում են նոյն 1909 թ. կազմված տեղեկագրերը, որոնցից մեկը Օսմանյան Երեսփոխանական ժողովի կողմից Կիլիկիոյ աղետի բննիչ Հակոբ Պապիկյանի տեղեկագիրն է, որում, խոսելով զոհերի թվի մասին, հեղինակը նշում է. «Հատ իմ կատարած քննութեան արդիւնքին անձերու կորուս-

<sup>1</sup> Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմող՝ Ներսիսյան Մ.Գ., Սահակյան Ռ.Գ., Եր., 1991, էջ 239:

<sup>2</sup> Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղետը, Կ. Պոլիս, 1912, էջ 302:

## Արդիհնե Բարլումյան

տր 25 կամ 30000 կը հասնի. կառավարութիւնը պաշտօնապէս 2500 քրիստոնեայ և 1900 խլամ կը ներկայացնէր... Զարդուող քրիստոնեաներուն թիւը ծածկելու համար ամէն միջոցի դիմած են. զանազան վայրերու քահանաները, առաջնորդները և մոլիթարները, որոնք միայն պիտի կրթնային տալ ճիշդ զաղափար մը ջարդուածներուն մասին, բոլորը սպանուած են»:<sup>3</sup> Պապիկլանը նշում է, որ անհնար է տալ զոհերի ամբողջական թիվը, քանի որ զանազան մահմեդական ազարակներուն ևս կան սպանվածներ, որոնց թիվը հնարավոր չէ հստակեցնել: Նա իր տեղեկագրում գրում է. «Զարդերը տեղի ունեցած են աշխատանքի և առուտորի ամենէն եռուցես շրջանին, Անատոլիի զանազան նահանգներէն՝ և նոյն իսկ Մուսուլի ննան այնքան հեռաւոր նահանգէ մը հասած գործադրներու ընդհանուր թիւը 40 կամ 50 հազարէն նուազ պէտք չէր ըլլալ: Այս թիւին առնուազն կէսը կազմուած էր Հայերէ՝ որոնց մեծագոյն մասը ջարդուած է»:<sup>4</sup>

Հայոց պատրիարքարանի Ազգային վարչության քմիջ մասնախմբի կազմած տեղեկագրի համաձայն՝ Կիլիկիայի աղետին զոհ էր գնացել 18839 հայ, 1250 հույն, 1272 ասորի, ընդհանուր առմամբ՝ Աղանայի նահանգում՝ 21361, Հալեպի նահանգում՝ 1151 մարդ, ընդամենը՝ 22512 հոգի, ընդ որում՝ տեղեկագրում հստակեցվում է, որ «ասոնց մէջ չեն գրտնուիր պանդուխտները, որոնց թիւը միշտ անորոշ մնացած է»:<sup>5</sup> Այս տեղեկագրի տվյալներով՝ միայն Աղանա քաղաքում և հարակից ազարակներում սպանվել էր 9780 մարդ,<sup>6</sup> այն դեպքում, երբ «Ազատամարտում» հրատարակված վիճակագրության համաձայն միայն Աղանա քաղաքում և հարակից բնակավայրերուն սպանվել էր 18627 հայ:<sup>7</sup> 10293 մարդ, համաձայն այս վիճակագրության, սպանվել էր շրջակա թուրքական գյուղերում, 2762-ը՝ Աղանայի խաներում.<sup>8</sup> պարզ է, որ խոսքն այս երկու դեպքում է այլ բնակավայրերից արտագնա աշխատանքի մեկնածների մասին է, ովքեր Կիլիկիա էին ժամանել Հաճից, Կեսարիայից, Սերբաստիայից, Խարբերդից, Մպլաթիայից: Պատրիարքարանի հանձնաժողովի կազմած տեղեկագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն անկատար է ոչ միայն այն առումով՝ որ չի տալիս կոտորածներին զոհ գնացած պանդուխտների թիվը, այլև այստեղ շրջանցված են Կիլիկիայի մի շարք բնակավայրեր, որոնք ևս ենթարկվել են ջարդերի ու մարդկային կորուստներ ունեցել: Մասնավորապէս, տեղեկագրում չեն հիշատակվում Տարսում և նրա շրջակայրում սպանվածները: Ամերիկացի լրագրող և դեպքերի ականատես Հ. Աղամ Գիրքնար նշում է, որ 100 հոգի սպանվել է Տարսում, 400-ը՝ մոտակա գյուղերում:<sup>9</sup> Կոտորածների հետևանքներին ականատես Զարլզ Վուդսի վկայությամբ՝ Տարսում հիմնահատակ ամերվել էր 800 տուն,<sup>10</sup> ավերվել էին բազմաթիվ խանութներ, թալանվել էր հայերի ողջ ունեցվածքը:<sup>11</sup> Գրեթե նոյն տվյալն է տալիս Հ. Թէրզյանը, որի հավաստմամբ Տարսու քաղաքում սպանվել էր 70, շրջակա բնակավայրերի սպանվածների հետ՝ 560 հայ, որից 160-ը՝ Գողովուգ գյուղում,<sup>12</sup> ուր նաև թալանվել ու իրկիզմվել էին հայերի շուրջ 75 տներից 68-ը:<sup>13</sup>

3 Նոյն տեղում, էջ 447:

4 Աղանայի եղեռնը. Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի, Կ. Պոլիս, 1919, էջ 18:

5 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղետը, էջ 281:

6 Նոյն տեղում, էջ 278:

7 Նոյն տեղում, էջ 157:

8 Նոյն տեղում, էջ 157:

9 Gibbons Helen, The Red Rugs of Tarsus: A Women's Story of the Armenian Massacres, Paris, 1919, p. 112.

10 Woods Ch., The Danger Zone of Europe. Changes and problems in the Near East, Boston, 1911, p. 148.

11 Վուդսի վկայությամբ՝ Տարսու քաղաքում սպանվել էր 100, շրջակա գյուղերում՝ 500 քրիստոնյա:

12 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղետը, էջ 166:

13 Woods Ch., նշվաշխ., էջ 150:

Այսուամենայնիվ, չնայած ամբողջական տվյալների բացակայությանը, կարելի է ասել, որ կիլիկյան կոտորածների ընթացքում սպանվել էր ավելի քան 30000 հայ, որից 18627-ը՝ միայն Աղանայում և շրջակա բնակավայրերում, 10000-ից ավելի է՝ այլ բնակավայրերում: Թերևս սա հայ պատմագիտության մեջ հաստատված՝ ջարդին զոհ գնացած հայերի առավել իրական թիվն է: Այսպիսով, Կիլիկիայի կոտորածների անմիջական հետևանքը 30000-ից ավելի հայերի սպանությունն էր: Եթե տարրեր նահանգներից եկածների սպանությունը էականորեն չէր ազդում այդ բնակավայրերի ժողովրդագրական պատկերի վրա, ապա Աղանայի նահանգի համար զոհերի թիվը մեծ հարված էր հայ բնակչության թվաքանակին:

Խոսելով առանձին բնակավայրերի տված մարդկային կորուստների թվի մասին՝ նշենք, որ ջարդից տուժեցին Աղանայի նահանգի զրեթե բոլոր բնակավայրերը: Զարդերից հետո արձանագրված ժողովրդագրական փոփխություններն առավել տեսանելի էին ջարդերի թատերաբեմ Աղանայի ու Մերսինի գավառներում: Հ. Աշճանի բերած տվյալների համաձայն՝ Աղանա քաղաքի բնակչությունը հաշվվում էր 66000, որից 22000-ը հայ էին, այդ թվում՝ 20000 լուսավորչական, 1500 բողոքական, 500 կարտիկ:<sup>14</sup> Հ. Թերզյանը հայերի քանակը Աղանա քաղաքում հաշվում է 30000:<sup>15</sup> Ռ. Գևորգյանի հրատարակած 1913-1914 թթ. պատրիարքարանի ներկայացրած տվյալների համաձայն Աղանայի ողջ գավառակում հաշվվում էր 27990 հայ:<sup>16</sup> Հետաքրքիրն այն է, որ գավառակում ներկայացված վեց գյուղերի հայության թիվը գրեթե նույնն է, ինչ 1908 թ. տվյալները, իսկ քաղաքում բնակվող հայերի համար բերված է նոր թիվ. 1908 թ. պաշտոնական մարդահամարի տվյալների համաձայն՝ քաղաքում արձանագրված էր 17844 հայ,<sup>17</sup> 1913 թ. մարդահամարի տվյալներով՝ 26430 հայ:<sup>18</sup> Նահանգի մյուս բնակավայրերի հայության թվաքանակի վերաբերյալ ևս բացակայում են նոր՝ 1913-1914 թթ. վերաբերող տվյալները և 1908 թ. տվյալները հիմնականում ներկայացվում են որպես նախապատերազմիան շրջանի տվյալներ: Տվյալների բացակայությունը դժվարացնում է կոտորածի հետևանքների ուսումնասիրությունը: Պատրիարքարանը, թերևս, նույնպես չի տիրապետել նոր տվյալների, այդ իսկ պատճառով ներկայացվել են իին տվյալները: Ինչ վերաբերում է Աղանա քաղաքի հայության թվաքանին, ապա այս դեպքում, թերևս, ներկայացված թիվը մոտ է ճշմարտությանը, քանի որ չնայած բազմահազար զոհերին, քաղաքը կոտորածից հետո ևս մնաց որպես հայաշատ կենտրոն, մանավանդ որ ջարդերից հետո այսուհետ հաստատվեցին նաև նահանգի փորութիվ հայություն ունեցող որոշ բնակավայրերի հայեր: Սրանով է պայմանակործված այն հանգանանքը, որ կոտորածների հետևանքով քաղաքում հայության թվաքանակը ոչ թե նվազեց, այլ 1908 թ. տվյալների համեմատ նույնիսկ աճեց:

Աղանայի նահանգի բազմաթիվ բնակավայրերում կոտորածների հետևանքներն այնպահ սարսափելի էին, որ դրանց արդյունքում փրկվել էին իիմնականում կանայք, երեխաներ ու հասուկենու տղամարդիկ: Ամերիկացի միսիոներուի Ռոուզ Լամբերտի վկայությամբ, ջարդի հետևանքներն «ավելի դյուրին է պատկերացնել, եթե հասկանում ես, որ նրանք ապրում են մի երկրում, որտեղ կանայք միշտ պաշտպանության կարիք ունեն»: Միսիոներուին, խոսելով ջարդի հետևանքների մասին, նշում է, որ, օրինակ, մի ընտա-

14 Աշճան Հ., Աղանայի եղենը և Գոնիայի յուշեր, Նիւ Եռք, 1950, էջ 15:

15 Թերզեան Յ., Աղանայի կեանքը, Վ. Պոլիս, 1909, էջ 7:

16 La Cilicie (1909-1921) Des massacres d'Adana au mandat Français, Volume préparé par Raymond H. Kévorkian, Paris, 1999, p. 25.

17 Թերզեան Յ., Աղանայի կեանքը, էջ 47:

18 La Cilicie (1909-1921) Des massacres d'Adana au mandat français, p. 25.

## Արդիհնե Բարլումյան

նիբում սպանվել են 23 հարազատները: Մեկ այլ ընտանիքից, որն ուներ 32 երեխա ու թոռ, ողջ էին մնացել հիվանդ պապը, ծեր տատը, մի որդի ու մեկ թոռ:<sup>19</sup> Նշեմք մի քանի թվական տվյալներ, որոնք պարզ պատկերացում կտան ջարդի ողջ սարսափների մասին: Աղանայի գավառակի Ապուողու գյուղն ուներ 130 տուն բնակիչ, որից 100 տունը՝ հայ: Ջարդի ժամանակ գյուղում էին նաև շորջ 400 պանդոխտ հայ մշակներ:<sup>20</sup> Գյուղում սպանվեց 600 մարդ. ջարդից հետո գյուղի տղամարդ հայ բնակիչներից փրկվել էր միայն մի տղա, որն էլ ջարդից հետո մահացավ բնական մահով:<sup>21</sup> Նոյն գավառակի Միսիս գյուղի 150 տուն քրիստոնյաներից փրկվեցին միայն շորջ 100 այրիներ ու աղջիկներ:<sup>22</sup> «ՔիւրտՊաղէ», Արփալը, Կէմի-Սիրէն, Ապիտին-փաշա ըսուած գիտերը այրերէն զատ ոչ տղայ ձգած են ողջ և ոչ կին»,- հավաստում է Հ. Թերզյանը:<sup>23</sup>

Օսմանին ջարդից առաջ ուներ 1000 տուն բնակիչ, որից 200 տունը մեծամասամբ համաց բարեկեցիկ հայեր էին: Այստեղ անձի կորուստը կազմում էր 1500 հոգի:<sup>24</sup> Մեծ թվով զոհեր տվեց հատկապես Համիդին: Զ. Վուդսի հավաստմամբ Համիդին 2000 զոհերից 500-ը սպանվեցին քաղաքում, 1500-ը՝ դաշտերում.<sup>25</sup> այս զոհերից շատերն, ամենայն հավանականությամբ, արտագնա աշխատանքի եկածներ էին: Ըստ Հ. Թերզյանի բերված տվյալների, Համիդին (Կողանի զավառ) 1003 հայերից փրկվել էր միայն 90 կին, որոնցից երիտասարդները կրոնափոխ էին արվել:<sup>26</sup> Զոհերի թիվն այստեղ կազմում էր հայ բնակչության շորջ 91%-ը: Ինչ վերաբերում է Հաճըն քաղաքին, ապա այստեղ հայությունը ինքնապաշտպանության շնորհիվ թեև զերծ մնաց կոստրածից, բայց, ինչպես հավաստում է Հայոց պատրիարքարանի Կենտրոնական այրիախնամ հանձնաժողովի բննիշ-պատվիրակ Ժակ Սայապալյանը, «ամէնէն մեծ անձի կորուստ ունեցող տեղն է Հաճըն: Դուրս գտնուելով ջարդուղներուն թիւր (որոնց մէջ կան նաև կիներ ու տղաքներ) կը հասնի հազարներու»:<sup>27</sup> Պայիկյանի նշած տվյալների համաձայն՝ Հաճընում տեղեկություն չկար 3000 հայերի մասին, որոնք գտնվում էին Աղանայի նահանգում:<sup>28</sup>

Հասան Պեյին (Ձերեւ Բերեկերի զավառ) 1908 թ. պաշտոնական մարդահամարի համաձայն ուներ 1848 հայ բնակիչ:<sup>29</sup> Այստեղ մարդկային կորուստը կազմեց 285 հոգի: Տոկոսային հարաբերությամբ սպանվել էր հայ բնակչության շորջ 15,4%-ը: Թեև ակնհայտ էր, որ պաշտոնական մարդահամարի ներկայացրած թիվը չէր արտահայտում հայ բնակչության իրական թվաքանակը, այնուամենայնիվ, սպանվածների քանակը էական ազդեցություն կարող էր ունենալ նաև հայերի ավելի մեծաքանակության դեպքում: Ս. Պարթևյանի բերած տվյալների համաձայն՝ 2000 հայ էր սպանվել Քեսապում:<sup>30</sup> Մարաշի գյուղերից Սարըլարում 15 տարեկանից բարձր բոլոր տղամարդիկ սպանվել էին, Կյորճեյիզ գյուղում նույնպես մանուկներից ու կանանցից զատ մյուսները սպանվել էին:<sup>31</sup>

19 Lambert R., Hadjin, and the Armenian Massacres, p. 87.

20 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 176

21 Նոյն տեղում, էջ 182:

22 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 182:

23 Նոյն տեղում, էջ 253:

24 Նոյն տեղում, էջ 195, 202:

25 Woods Ch., նշվ.աշխ., էջ 156:

26 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 194:

27 Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի 1910 սեպտ. 11-1912 սեպտ. 11, Յանձնաթագավորության պատուիրակ Պ. Ժագ Սայապալյանի, Ղալաթիա, 1912, էջ 50:

28 Առանայի եղեռնը. Տեղեկագիր Յակոբ Պայիկյանի, էջ 19:

29 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 202:

30 Պարթևեան Ս., Կիլիկեան արհավիրքը, Կ. Պօլիս, 1909, էջ 43:

31 Գալուստյան Գր., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զեյթուն, էջ 759:

Աղանայում ինչպես Հայոց ցեղասպանության տարիներին և ավելի վաղ՝ համիդյան կոտորածների ընթացքում բազմաթիվ էին նաև բռնի մահմեղականացման դեպքերը։ 1909 թ. մայիսին Ս. Պարթևյանը գրում է, որ առաջնորդարանից եկած գրությունների համաձայն, խալամացած կանայք ու աղջիկները հետ են բերվում առևանգիչների մոտից ու հաճանվում եկեղեցուն, թեև շատերը, ում փետրող, ճակատագրով հետաքրքրվող չկար, դեռևս մնում էին իրենց առևանգիչների մոտ՝ հատկապես զյուղերում։<sup>32</sup> Այս մասին վկայություն կա նաև ժամանակակից մամուլում, մասնավորապես, մի հաղորդագրության մեջ հիշատակվում են չորս կանայք, որոնք գտնվել են թուրք Սկյուտար Թոփիաների օլորի տնից և բերվել պատրիարքարան ու հետո հանձնվել Բերայի Տիկնանց միության խնամատարությանը։<sup>33</sup> Ականատեսների վկայությամբ՝ Հասան Պեյլիում ևս բազմաթիվ երեխաներ ու կանայք էին առևանգվել և ամիսներով պահվել թուրքական զյուղերում, որը նրանցից շատերը բռնի թրքացվել են։<sup>34</sup> Նույն արձանագրվել է նաև Լարաճը, Խատմի, Տերտյով, Գոյազ, Կյոր Չայիր հայաբնակ զյուղերում, որտեղ աղջիկները, դեռատի կանայք առևանգվել էին խուժանի կողմից. ազատվել են շատ քերը, որոնք փախչելով պաստանել են Ֆնուրդագում։<sup>35</sup> Այս ամենությամբ Զ. Վուդը հիշատակում է Միսիսի հայուիներին, որոնցից ովանք իրենց նետեցին գետն ու ինքնասպան եղան՝ թուրքական հարեմներ չընկնելու համար։<sup>36</sup> Դժվար է ասել, թե բռնի մահմեղականացված այս կանանցից քանիսը հետաքայում մնացին մահմեղականների մոտ, քայլ որ այդպիսիք կային, դա կասկածից վեր է, թեև հիմնական մասը, այնուամենայնիվ, վերադարձավ հայի ինքնությանն ու քրիստոնեական հավատքին։

Ամայացած բնակավայրերում ջարդից փրկված բնակչությունը հայտնվեց անօգնական վիճակում։ Ս. Պարթևյանը գրում է, որ 40000 հայեր մնացել էին մերկ ու անոթի, այդ թվում՝ 15000-ը Աղանայում, ավելի քան 3000-ը՝ Տարտում, 1500՝ Մերսինում, 10000՝ Քեսապում ու նրա շրջակայրում, գրեթե նոյնքան՝ Ալեքսանդրետում ու Դյորթ-Յոլում։<sup>37</sup> Այս մասին տեղեկացնում է նաև Կ. Պոլսի ռուսական դեսպան Գ. Զիմովսկը՝ արտաքին գործերի մինիստրի տեղակալ Զարիկովին հասցեագրված իր 1909թ. նայիսի 2-ի ճեպագրում՝ վկայակոչելով Մերսինում ռուսական փոխհյուպատոս Մավրոմատիի տրամադրած տեղեկությունները։ Վերջինիս հավաստմամբ՝ «իրենց ողջ ունեցվածքը կորցրած քրիստոնյաները միանգամայն զրկված են ապաստանից, և որ մահացությունը նրանց մեջ խիստ նշանակալից չափի է հասնում»։<sup>38</sup> Այսպիսով, զոհերի թիվը չսահմանափակվեց կոտորածի ժամանակ սպանվածներով, հետաքա ամիսներին մահացության մեծ աճ նկատվեց բնակչության, հատկապես՝ երեխաների շրջանում։ Աղանայում համաճարակային հիվանդություն սկսվեց, որին օրական զոհ էին գնում հարյուրավոր մանուկներ։ Միայն 1909 թ. ամռան ընթացքում Աղանայում 2000 երեխա մահացավ դիզենտերիայից։<sup>39</sup> Քիչ չէր նաև հիվանդություններից, սովոր մահացած մեծահասակների թիվը, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ Կիլիկիայի կոտորածների մարդկային կորուստն ավելին էր, քան վկայակոչված 30000-ը։

32 Պարթևեան Ս., Կիլիկեան արհավիրը, էջ 71:

33 «Ժամանակ», Ա տարի, թիւ 305, էջ 3:

34 Գուստովեան Գ., Հայ լեռը. Կարմիր դրուագներ Կիլիկիոյ աղէտէն, էջ 52:

35 Նույն տեղում, էջ 53-56:

36 Woods Ch., The Danger Zone of Europe. Changes and problems in the Near East, p. 155.

37 Պարթևեան Ս., Կիլիկեան արհավիրը, էջ 46-47:

38 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 232:

39 La Cilicie (1909-1921) Des massacres d'Adana au mandat français, p. 101.

## Արդիհնե Բարլումյան

Մյուս կարևոր և բացասական հետևանքը, որ կոտորածներն ունեցան նահանգի հայ բնակչության ժողովրդագրության վրա, մի շարք բնակավայրերի հայաթափումն էր: Խոսքը հատկապես մինչև ջարդը փոքրաթիվ հայություն ունեցող բնակավայրերի մասին է, որոնց բնակիչների մի մասը կոտորվեց, իսկ մյուսները ապաստանեցին այլ՝ ավելի խոշոր բնակավայրերում՝ այլև չվերադառնալով ծննդավայր: Հայաթափման առումով առավել զգայի էին կորուստները մինչև կոտորած սակավաթիվ հայություն ունեցող բնակավայրերում. օրինակ՝ 14 տուն հայ բնակիչ ունեցող Քյոր Չայիրում կար 15 զնի:<sup>40</sup> Ողջ մնացածներն ապաստանեցին Ֆընորճագում:<sup>41</sup> 20 տուն հայ ունեցող Գոյաք գյուղը տվեց 15 զնի, 30 տուն հայ ունեցող Քիշնեզը՝ 35 զնի:<sup>42</sup> Էսլահիեկի շրջանի գյուղերից 40 տուն հայ ունեցող Քելլերը տվեց 15 զնի, 30 տուն հայ ունեցող Էյնթիլին՝ 38 զնի:<sup>43</sup> Քինեսլեր գյուղի 16 այլերից շարդից փրկվեցին 2-ը, որոնցից մեկը Այնթափում էր, մյուսն էլ մահացած էր համարվել:<sup>44</sup>

Արտագաղթի հետևանքով փոքրաթիվ հայություն ունեցող բնակավայրերը վերջնականապես հայաթափվեցին: Զարդից հետո կիլիկիահայության համար մեծ կարևորություն ունեցող խնդիրներից մեկը, եթե ոչ առաջինը, այլ բնակավայրերում ապաստանած բնակչության վերադարձն էր: Սա նախ՝ հոգերանական մեծ խնդիր էր, քանի որ փրկվածներից շատերը չէին պատկերացնում, թե ինչպես կարելի է վերադառնալ այնտեղ, որ ոչ վաղ անցյալում իրենց աշքի առաջ սպանել էին իրենց հարազատներին: Մյուս կողմից՝ վերադարձանալով իրենց բնակավայրեր, նրանցից շատերը մնալու էին անօթևան, առանց գոյության որևէ միջոցի: Այդ պատճառով էլ մինչև տարեվերջ բազմաթիվ բնակավայրեր այդպես էլ մնացել էին ավերակ, առանց նախկին բնակիչների, որոնցից մի մասը վերջնական բնակություն էր հաստատել Աղանայում կամ հայաշատ այլ կենտրոններում, մյուսներն էլ արտագաղթել էին երկրից:

Զարդի օրերից սկսեց և հետագայում ուժեղացավ արտագաղթը Աղանայի նահանգի տարրեր բնակավայրերից: Հարկ է նշել, որ մինչև կոտորածը, արտագաղթն Աղանայի նահանգից մեծ չափերի չէր հասնում ու անհամեմատելի էր Արևմտյան Հայաստանից հատկապես այդ ժամանակահատվածում արձանագրված արտագաղթի տեմպերի հետ: Սա, թերևս, կապված էր նահանգում և հատկապես Աղանա քաղաքում ու հարակից բնակավայրերում նկատվող տեսանելի տնտեսական աճի հետ: Արտագաղթն ուժեղացավ արդեն շարդի օրերին: «Զինադադարէն ետքը մեր մեջէն շատեր՝ զլսաւրապես ունեւորները, սկսան խումբ խումբ փախչի շոգեկառող դեպ ի Մէրսին և անկէ Եզիպատու կամ Կիպրոս: Կառավարութիւնը կարծես՝ նկատելով որ երկրորդ շարդին ենթարկուելիք մարդ չպիտի մնար, խստի արգիլեց այդ գաղթը և նոյն իսկ շոգեկառի առօրեայ երթեւեկութիւնն ալ դադրեցաւ պաշտօնապէս», - այս առթիվ գրում է Հ. Թէրզյանը:<sup>45</sup> 1909 թ. մայիսի դրությամբ՝ Կիպրոսում էին ապաստանել 2000 հոգի, նրանց մեջ՝ Աղանայի ու Տարսոսի մեծահարուստ մարդկանց ընտանիքները՝ մեծ մասամբ կանայք ու երեխաներ:<sup>46</sup> Կ. Պոլսի պատրիարքությանը 1909 թ. ապրիլի 15-ին Քեսապից գրված նամակում նշվում է, որ շոգենավը 2500 փախստականների տեղափոխել է Բէյրութ:<sup>47</sup> Կիլիկ-

40 Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի 1910 սեպտ. 11-1912 սեպտ. 11, էջ 70-71:

41 Գուտովեան Գ., Հայ լեռը. Կարմիր դրուագներ Կիլիկիոյ աղէտն, էջ 56:

42 Նոյն տեղում, էջ 70-71:

43 Նոյն տեղում, էջ 72-73:

44 Գուտովեան Գ., Հայ լեռը. Կարմիր դրուագներ Կիլիկիոյ աղէտն, էջ 74:

45 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 59:

46 Պարթևեան Ս., Կիլիկեան արհավիրը, էջ 51:

47 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 312:

յան արհավիրքից փրկված շուրջ 500 հայ փախստականներ էլ ապաստանել էին Ալեքսանդրիայի հայկական եկեղեցու բակում:<sup>48</sup> 700 տուն հայ բնակիչ ունեցող Քեսապից մի ֆրանսիական շոգենավ, շուրջ 6000 հայի հավաքելով լեռներից, Քեսապից տեղափոխեց Լաթարիա:<sup>49</sup> Ստացվում է, որ միայն թվարկած տվյալների համաձայն՝ 10000-ից ավելի հայեր 1909 թ. ապրիլ-մայիս ամիսներին ապաստան գտան Կիպրոսում, Բեյրութում, Եգիպտոսում:

Գրեթե բոլոր ժամանակակիցներն ու ականատեսները հիշատակում են այն չքավոր ու անօգնական վիճակի մասին, որում կոսորտածից հետո հայտնվել էր ողջ կիլիկիահայությունը: Ուստի ջարդից հետո արտագաղթը դարձավ արդեն ոչ միայն զուտ գոյատևման, անվտանգ կենսակերպի, այլ նաև կենսապահովման միջոց: «Հայերի տնտեսական վիճակը, որ դէարձն առաջ շատ աղեկ ու իրենց խլամ դրացիներուն հետ բաղդատմամբ նախանձելի մակարդակի վրայ կը գտնմուիր, իհմա ինկած է: Ասոր վերականգնումին արգելք հանդիսացող զյանաւոր բանը՝ անապահովությունն է: Դէարձն ի վեր ամիսներուն մէջ գերազանցապէս շեշտուած է նորէն կեանքի և ինչքի անապահովությունը»: Եշվում է Այրիախնամի տեղեկագրում:<sup>50</sup> Առավել անօգնական վիճակում էր հայտնվել միջին խավը, որը ոչ միայն զրկված էր տնից, արհեստանոցից, խանութից, անասուններից, այլ նույնիսկ արհեստը վերականգնելու դեպքում չուներ գնորդ, քանի որ հայերի ունեսոր խավը կամ սպանված էր, կամ ունեզոր էր դարձել: Անօրենան մնացած հայ արհեստավորները դեռ երկար ժամանակ իրենց գոյությունը պահպանելու համար շարունակում էին աշխատել հենց փողոցում՝ իրենց նախկին արհեստանոցների ավերակների մոտ: Նրանցից ոմանք, ովքեր որոշակի խնայողություններ էին անում, այդ գումարն օգտագործում էին արտագաղթելու նպատակով: Նման դեպքերը, Զ. Վուդսի հավաստմամբ, շատ չին:<sup>51</sup> Արտագաղթի խնդրին պարբերաբար անդրադառնում էր նաև ժամանակի պղսահայ մամուլը: Իր նամակներից մեկում Հ. Աշճանը ներկայացնում է այն միջնորդուը, որում հայտնվել էր Աղանայի հայությունը կոտորածներից հետո: Անձանք դեմ լինելով արտագաղթին՝ Աշճանը գրում է, որ «ներկայ պայմանները նկատի ունենալով՝ այս զաղափարը ունեցողներուն բոյլատու գտնուելու ենք»:<sup>52</sup> Ամերիկահայ գաղորդի ձևավորման պատմությանը նվիրված մի հոդվածում հեղինակ Արիս Խորայելյանը նշում է, որ Աղանայի ջարդից հետո աղանացներն էլ սկսեցին մեծ խմբերով գաղթել:<sup>53</sup> 1908-1910 թթ. պատրաստած մի վիճակագրության համաձայն՝ Ֆրեզնոյում հաստատված շուրջ 2326 հայերի մեջ 8 ընտանիք (52 անձ)՝ ԱՄՆ էր եկել Աղանայից, 3 ընտանիք (14 անձ)՝ Անտիոքից ու հարակից գոյությունը, 1 ընտանիք (8 անձ)՝ Այնթավից:<sup>54</sup> Թերևս արտագաղթի աճող տևմաբերն էին, որ քննարկումների տեղիք տվեցին տեղում՝ Մերսինում կամ Աղանայում, այլ ոչ օրինակ՝ Պոլսում, Իզմիրում կամ Եգիպտոսում որբանց բացելու համար:

Մի կողմից արձանագրված զոհերի, կոտորածից հետո համաճարակային հիվանդություններից մահացածների թվաքանակի, մյուս կողմից՝ նահանգի բնակավայրերում տիրող չքավորության և ամենակարևորը՝ անապահովության, վախի մժանորտի պատճառով ավելացած արտագաղթի հետևանքով նահանգի բազմաթիվ բնակավայրերում արձա-

48 Պարթենեան Ս., Կիլիկեան արհավիրքը, էջ 189:

49 Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղետը, էջ 256-257:

50 Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի 1910 սեպտ. 11-1912 սեպտ. էջ 5:

51 Woods Ch., Ծղ. աշխ., էջ 142:

52 Աշճան Հ., Աղանայի եղեռնը և Գոմիայի յուշեր., էջ 90:

53 Խորայելյան Ա., «Ամերիկահայ զաղափարմութիւնը, «Ռստան», Ա տարի, թի 2, 1 ապրիլ 1911, էջ 399:

54 Ամերիկահայ Տարեցոյը, կազմող՝ Մուշեղ Եպիսկոպոս, Ա տարի, 1912, Պուստոն, էջ 62:

## Արդիհնե Բարլումյան

նազրվեցին շեշտակի ժողովրդագրական փոփոխություններ՝ ի վճաս հայ բնակչության թվաքանակի: Այսպէս, համաձայն Հայոց պատրիարքարանի Կենտրոնական այրիախնամ հանձնաժողովի քննիչ-պատվիրակ Ժակ Սայապալյանի կողմից կազմված տեղեկագրի, 1909 թ-ից առաջ Քըրք Խանը ուներ 80 տուն հայ և 30 տուն իսլամ բնակչություն, ջարդի հետևանքով մնացել էր 30 տուն հայ, 80 տուն իսլամ:<sup>55</sup> Զարդից հետո հայարավիկեց Չոքար գյուղը, որի հայությունը հաստատվեց Սսում:<sup>56</sup> Նաճարլը գյուղը ջարդից առաջ գուտ հայարնակ էր, այն 1908 թ. մարդահամարի համաձայն ուներ 437 հայ բնակիչ:<sup>57</sup> 1909 թ. ապրիլին ամբողջ գյուղը իրկիզմվեց: Դյորք-Յոլում ապաստանած գյուղացիներից ջարդից հետո Նաճարլը վերադարձավ 10-12 ընտանիք: Մյուսները դեաքից հետո գյուղ էին զայխ միայն հողերը մշակելու համար, վերադարձնում Դյորք-Յոլ:<sup>58</sup> Զարդից առաջ 150 տուն հայ բնակչություն ունեցող Օսմանիեում ջարդից հետո հայերի թվաքանակը նվազել էր 30 տաս և միայն այլ բնակավայրերից եկած հայերի հաշվին դարձել 100 տուն:<sup>59</sup> Ֆասրլը գյուղը ջարդից առաջ ուներ 20, հետո՝ 10 տուն հայ: Մյուսները գաղթել էին Դյորք-Յոլ:<sup>60</sup> Դեպքից առաջ Գողովուգ գյուղն ուներ 80 տուն, ջարդից հետո՝ 50 տուն հայ: Զարդից փրկվել էր ընդամենը 20 տղամարդ:<sup>61</sup> Աղանայի Ապոնոլու գյուղը ջարդից առաջ ուներ 100 տուն հայ, իսկ կոտորածից հետո մնացել էր միայն 30-ը:<sup>62</sup> Ինձիրլիկը ջարդից առաջ ուներ 80, հետո՝ 30 տուն հայ: Մյուսները գյուղ էին զայխ միայն հողերը մշակելու համար, հետո վերադարձնում Աղանա:<sup>63</sup> Միսիսի 80 տուն հայերից մնացել էր հազիվ 10 տուն, մյուսները հետացել էին Աղանա, Դյորք-Յոլ և այլ բնակավայրեր:<sup>64</sup> Ցավոր, չտիրապետելով ամբողջական տվյալների, չենք կարող տալ հայ բնակչության ընդհանուր թվաքանակի վրա կոտորածի ունեցած հետևանքների առավել ամբողջական պատկերը: Այնուամենայնիվ, ներկայացված օրինակներից երևում է, որ վերոնշյալ բնակավայրերում հայ բնակչության թվաքանակն ավելի քան կիսով չափ նվազել էր:

Այսպիսով, 1909 թ. կիլիկյան կոտորածները զգայի ազդեցություն ունեցան Աղանայի նահանգի հայության թվաքանակի վրա: Կոտորածներին զոհ գնացին հազարավոր հայեր, ջարդերից հետո շատերը մահացան հիվանդություններից, իսկ հայության մի ստվար զանգված էլ արտագաղթեց այլ երկրներ: Կոտորածներից հետո նահանգի բազմաթիվ բնակավայրերում նվազեց հայ ազգաբնակչության թիվը, հայարավիվեցին մինչև կոտորածները փոքրաթիվ հայություն ունեցող բնակավայրերը:

Կիլիկիայի կոտորածների մասին լորերը տարածվեցին կայսրության ողջ տարածքում՝ շատերի մեջ առաջ բերելով վախի և ապագայի հանդեպ անվստահության զգացումը՝ ուժգնացնելով դեւսն համիլյան ջարդերից ի վեր գոյություն ունեցող այս հոգեվիճակը: Այս մթնոլորտն էլ իր հերթին արտագաղթի մի նոր ալիք առաջացրեց, որի հետևանքով մինչև 1915 թ. կայսրության ողջ տարածքում նորանոր բնակավայրեր հայարավի եղան:

55 Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի 1910 սեպտ. 11-1912 սեպտ. 11, էջ 5:

56 Նոյն տեղում, էջ 54:

57 Թէրգեան Յ., Աղանայի կեանքը, Կ. Պոլիս, 1909, էջ 47:

58 Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 59:

59 Նոյն տեղում, էջ 61:

60 Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 75:

61 Նոյն տեղում, էջ 77:

62 Նոյն տեղում, էջ 78:

63 Նոյն տեղում, էջ 79:

64 Նոյն տեղում, էջ 79:

Arpine Bablumyan

**Demographic Changes After 1909 Massacres in Adana**

**and Aleppo Vilayets**

**Summary**

The article reveals the main features of population changes after Cilician massacres of 1909. After these massacres the number of Armenian population in the provinces of Adana and Aleppo decreased drastically. The Adana massacres resulted in:

1. mass killings,
2. deaths from starvation and illness
3. cases of forced conversion to Islam,
4. absolute loss of the Armenian population in some settlements with former large number of Armenians
5. immigration.

## 1909 ԹՎԱԿԱՆԻ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՆ ԲԱՏ ԻՏԱԼԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

Արամայիս Բալոյան

Արամայի և Հալեպի նահանգների հայարնակ շրջաններում 1909 թ. ապրիլին երիտրուրքական իշխանությունների կազմակերպած և իրականացրած կոտորածներին ականատես խտալացի դիվանագետներն, իրենց կառավարության հետ տարվող գրագրություններում անդրադանալով այս խնդրին, արժեքավոր տեղեկություններ են հաղորդել տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների մասին։ Իտալական դիվանագիտական փաստաթղթերը, որոնք մինչ վերջին ժամանակները հիմնականում հասանելի չեն ուսումնասիրողների համար, այժմ շրջանառության մեջ են դրվում հնարավորություն տալով խնդիրն առավել հաճամանորեն ուսումնասիրելու համար։

1909 թ. երիտրուրքական կառավարության կողմից Արամայի և Հալեպի նահանգների հայկական շրջաններում իրականացրած կոտորածների խնդրը, թեև բավական ուսումնասիրված է, գրվել են բազմաթիվ աշխատություններ, իրապարակվել և հայերեն թարգմանվել են այս խնդրին առնչվող եվրոպական մի շարք երկրների դիվանագիտական փաստաթղթեր, այդուամենայնիվ, ակնհայտ է, որ շատ նորություններ են դեռևս ի հայտ գալիս, որոնք նոր լույս են սփյուռ այս ժամանակաշրջանի վրա և հնարավորություն տալիս առավել հաճամանորեն ուսումնասիրություններ կատարել այդ ուղղությամբ։

Իտալական դիվանագիտական արխիվներում պահվող և Հայկական հարցին ու Հայոց ցեղասպանությանն առնչվող փաստաթղթերը մինչև վերջերս, որոշ բացառություններով, գրեթե անհայտ էին հանրությանը։ Ահա հենց այդ փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով 2005 թ. Իտալիայում ՀՀ դեսպանատան միջնորդությամբ հեղինակին հնարավորություն ընձեռնվեց ուսումնասիրություններ սկսել Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվում։

Այդ ուսումնասիրությունների արդյունքում կազմվեց Հայկական հարցին առնչվող Իտալիայի արտաքին գործերի նախարարության դիվանագիտական փաստաթղթերի երկիասոր ժողովածու, որի առաջին հասորում տեղ են գտել 1913-1917 թթ. իրադարձություններին առնչվող 225, իսկ երկրորդ հասորում՝ 1918-1923 թթ. իրադարձություններին վերաբերող 241 փաստաթուղթ։<sup>1</sup>

Թեև ժողովածուի ամբողջական երկիասորյակն ընդգրկում է 1913-1923 թթ. փաստաթղթերը, այսուհետեւ նպատակահարմար գտանք առաջին հասորի հավելվածում՝ ի նպաստ 1909 թ. Կիլիկիայի հայկական կոտորածների ուսումնասիրության, զետեղել նաև այդ իրադարձություններին առնչվող 20 փաստաթուղթ։

Ներկայացվող փաստաթղթերն ամբողջությամբ հանրությանն են ներկայացվում առաջին անգամ։

Ինչպես հայտնի է, 1909 թ. ապրիլին երիտրուրքական իշխանությունները կազմակերպեցին և իրահրեցին հայերի կոտորածներ Արամայի և Հալեպի նահանգների հայարնակ շրջաններում, որին զոհ գնացին ավելի քան 30 հազար հայեր։ Դեպքերին ականատես եվրոպական, այդ թվում և խտալացի դիվանագետներն ահազանգել են իրենց կառավարություններին, որպեսզի դրանք միջոցներ ձեռնարկեն հայերի դեմ ուղղված բռնությունները

1 Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին, 1913-1923, Հայոց ցեղասպանության բանագան-ինստիտուտ, Հատոր Ա, 2008, Հատոր Բ, Երևան, 2010։

կասեցնելու համար: Այդ շրջանի խոպական դիվանագիտական փաստաթղթերը վկայում են, որ կոտորածներն ու բռնույթունները չեն սահմանափակվել միայն վերոհիշյալ նահանգներով և ընդգրկել են Օսմանյան կայսրության այլ նահանգներ ևս: Հայկական ջարդերը՝ երիտրուրքական իշխանության կողմից կազմակերպված լինելու հաճամաճքը ապացուցվում է հիշյալ դիվանագիտական վավերագրերից, որոնցում արձանագրվում է, որ քաղաքային իշխանություններն ու կանոնավոր զորքերն անմիջական մասնակցություն են ունեցել հայերի կոտորածներին և նրանց գույքի թալանմանն ու ավերմանը:

Եվ այսպես.

Դեռևս 1908 թ. հոկտեմբերի 29-ին Կոստանդնուպոլսում Խոտայի դեսպան Իմպերիալին Խոտայի արտօքին գործերի նախարար Տիտոսոնիին ուղարկած հեռագրում գրում է. «Պարոն նախարար, Պարոն Պալլավիշինին ինձ ցույց տվեց անցած կիրակի օրը Ֆրանշայի, Ռուսաստանի, Ալստրո-Հունգարիայի և Անգլիայի դեսպանատների ստացած մի հեռազիր, որով Սամսոնի համապատասխան հյուպատոսները հայտնում էին քրդերի կողմից տեղի քրիստոնյա բնակչության բնաջնջման վտանգի մասին և խնդրում էին, որպեսզի դեսպանատները շտապ միջոցներ ձեռք առնեն արհասվիրքից խոսափելու համար»:<sup>2</sup>

Դեսպան Իմպերիալին իր այս հեռագրում տեղեկացնում է նաև, որ իր եվրոպացի գործընկերների հետ դիմել է Մեծ Վեգիրին, որպեսզի վերջինս միջոցներ ձեռնարկի արհավիրը կանխելու համար: Հեռազրին կից Խոտայի դեսպանն իր նախարարին է ուղարկել կաթողիկ հայերի պատրիարքի կողմից հոկտեմբերի 18-ին իրեն ուղարկած նամակի կոկորինակը, որում կարդում ենք. «Զնայած սահմանադրական կարգին, Վիրան քաղաքի խաղաղ բնակչությունը ենթարկվում է մարդկային զգացմունքներն անարգող բռնությունների: Բնակչները թալանվում են, նրանց պատիվն անարգվում է: Զինվորական հրամանատարները օգնություն ցուցաբերելուց հրաժարվում են, որն էլ կեղերիչներին առիթ է տալիս բռնություններն իրականացնել առավել բիրու միջոցներով: Բնակչությունը, հանուն արդարության, կոչ է անում, որ հաշվի առնեն այս փաստերն ու միջոցներ ձեռք առնեն կարգ ու կանոնը վերահստատելու և բռնազավթված գույքը իրենց տերերին վերադարձնելու ուղղությամբ»:<sup>3</sup>

Երիտրուրքական հեղաշրջումից հետո, եթք նրանք հանդես եկան Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրբների հավասարության, ազատության, իրավունքների և եղայրության մասին կարգախոսներով, բազմաթիվ քրիստոնյաներ, այդ թվում և՝ հայերը, որոնք արդուիամիդյան վարչակարգի տարիներին հալածանքներից խուս տալու նապատակով լրել էին իրենց բնակավայրերը, հավատացին երիտրուրքերին և սկսեցին վերադառնաւ՝ փորձելով օրենքի շրջանակներում տեր կանգնել իրենց ունեցվածքին և իրավունքներին: Սակայն հայերը ոչ միայն հանդիպում էին դժվարությունների, այլև՝ ենթարկվում էին նոր բռնությունների: Այդ մասին է վկայում Տրավիզոնում Խոտայի արքայական հյուպատության տեղապահ Գուլիելմի կողմից 1908 թ. նոյեմբերի 4-ին Խոտայի արտօքին գործերի նախարար Տիտոսոնիին ուղարկած հեռազիր, որում ասվում է. «Պարոն նախարար, պատիվ ունեմ Ձերդ Գերազանցությանն ուղարկելու Էրզրումից ստացված մի հեռազրից հատվածներ, որ ինձ է ուղարկել մի վստահելի անձնավորություն:

Այստեղ ևս հայտնի են դարձել Դիարբերիի մոտ տեղի ունեցած դեպքերը, բայց դրանց

2 Խոտայի արտօքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվ: Այսուհետ՝ ԻՎԳՆԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ. LXVI, թիվ 551:

3 Նույն տեղում:

## Արամայիս Բալոյան

առնչությամբ վարկածները բավականին շատ են: Ոմանք ասում են, որ անկարգությունների պատճառը բուրդ Իբրահիմ փաշային բռնելու համար ուղարկված բաշիրողություններն են եղել: Մյուսներն ասում են, որ մահմեդական բնակչությունն է զինվորների օգնությամբ իրականացրել կոտորածները: Ամեն դեպքում զոհերի և վիրավորների քանակը շատ մեծ է, մահմեդականները թալանում, սպանում և անարգում են անգեն կանանց ու երեխաններին: Բացի այդ՝ իմ շրջայից ժամանակ, երբ հյուրընկալվում էի բուրդ բեյերի մոտ, հասկացա, որ եղայրության ու հավասարության զաղափարները տեղ չեն գտնում այդ բարբարությունների ուղղությունում: Սահմանադրությունն ու ազատության [զաղափարն] այդ բուրդ բեյերի համար բռնի ուժով ձեռք բերած [իրենց] իրավունքների կորուստ է նշանակում: Բնականաբար, նրանք չեն համակերպվում նոր համակարգին: Մյուս կողմից՝ զաղթական հայերն այժմ վերադառնում են հայրենիք [և,] զիտակցելով իրենց իրավունքները, փորձում են ետ վերցնել ժամանակին իրենցից խված ունեցվածքը՝ հողերը, անասունները և այլն: Նախկին կառավարությունն այդ ունեցվածքն արդեն բաժանել էր Ռուսաստանից եկած մոնիացիրներին: Այժմ ինչ միշտցնելով պետք է վերականգնի արդարությունը: Սա ևս բավական մեծ և խրժին դժվարություն է: Ինչպես է հնարավոր խոսել խաղաղության և ներդաշնակության մասին, երբ տեղի բնակչության մեջ շահերի և մտածելակերպի մեջ այսքան տարրերություններ կան: ... Եթե Դարրեքիրի դեպքերի մեղավորներին ըստ արժանավոյն չպատժեն, չպետք է զարմանալ նոր կոտորածների մասին լուրերից ...».<sup>4</sup>

Իսկապես, նոր կոտորածների և բռնությունների մասին լորերն իրենց երկար սպասել չուվեցին: Թեև, ինչպես զիտենք, Աղանայի և Հալեպի նահանգներում կոտորածները սկըսվել են 1909 թ. ապրիլի սկզբին, բայց Խտախայի արտաքին գործերի նախարարության արխիվներում այդ օրերի վերաբերյալ գրագրություններն ու հեռագրերը չեն պահպանվել: Այդ դեպքերին առնչվող առաջին հեռագիրը թվագրվում է 1909 թ. ապրիլի 16-ով, որով Կոստանդնուպոլսում Խտախայի դեսպանատան հանձնակատար Սֆորցան Խտախայի արտաքին գործերի նախարար Տիտանիին տեղեկացնում է: «Մերսինի մեր արքայական հյուպատոսական գործակալության տեղապահն երեկ ինձ է ուղարկել հետևյալ հաղորդագրությունը: «Երեկ երեկոյան Աղանայում սկսվել է հայերի կոտորածը: Զինվորականներն ի վիճակի չեն կանխելու արհավիրքը: Զինվորները սկսել են թալանել. իրավիճակը չափազանց ծանր է: Մեր հայրենակիցների կյանքն ու ունեցվածքը վտանգված են: Խնդրում եմ պաշտպանության համար շտապ մի ռազմանավ ուղարկել այստեղ...».<sup>5</sup>

Նոյն օրը՝ ապրիլի 16-ին, Խտախայի արտգործնախարար Տիտանիին երկու հեռագիր է ուղարկում նաև Հալեպում Խտախայի արքայական հյուպատոս Քեռիքարդը: Առաջին հեռագրում ասվում է: «Աղանայում երեկանից վերսկսված հայերի կոտորածների մասին այս գիշեր հեռագիր ստացա Մերսինից: ... Լուրեր են տարածվում, որ ողջ երկրում անկարգություններ են սկսվել: Այստեղի բնակչությունը սարսափահար վիճակում է: Այժմ գնում եմ զիսավոր կառավարչի մոտ՝ վիճակը շտկող ձեռնարկումներ պահանջելու»:<sup>6</sup> Երկրորդ հեռագրում Քեռիքարդը գրում է: «... կոտորածներ են սկսվել նաև Ալեքսանդրիայի մոտակա զյուղերում, որոնցից երկուսը թալանվել ու հրի են մատնվել: Դորթյու զաղթած հայերը պաշտպանվում են: Իրավիճակը ծանր է: Ալեքսանդրիայի ողջ բնակչությունը ջղագրգիռ վիճակում է, իսկ իշխանությունները վստահ են, որ բավարար ուժ

4 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ. LXVI, թիվ 552:

5 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ. XVI, թիվ 2399:

6 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ. XVI, թիվ 2401:

ունեն վիճակը շտկելու համար».<sup>7</sup> Վերսկսված այս կոտորածներն իրենց բնույթով տարբերվում էին նախորդ շրջանի կոտորածներից: Եթե նախկինում հալածանքների էր ենթարկվում հիմնականում կայսրության հայ բնակչությունը, ապա այժմ սպառնալիքի տակ էին բոլոր քրիստոնյաները, այդ թվում նաև՝ Եվրոպահպատակները, որոնք Թուրքիայում էին գտնվում աշխատանքի բերումով: Դա է պատճառը, որ Եվրոպական տերությունների անհանգստությունը և ձեռնարկած միջոցներն իրենց որակով տարբերվում էին նախկինում ձեռնարկած միջոցներից: Կոստանդնուպոլսում Խոտակայի դեսպանատան հանձնակատար Սֆորցան ապրիլի 17-ին Խոտակայի արտաքին գործերի նախարար Տիտոնիին գրած հեռագրում հայտնում է. «Անզիայի հյուպատոսը վիրավորվել է, իսկ զերմանական ընկերություններին մեծ վնաս է հասցվել: Անզիայի դեսպանը, որը լիազորություն է ստացել օգտագործել Մալթայի նավերը, կարգադրել է, որ մի ռազմանավ մոտենա Մերսին քաղաքին: Գերմանիայի դեսպանն էլ կարգադրել է, որ Միջերկրականից մի հածանավ մտնի Դարդանել: Հաշվի առնելով ստեղծված վիճակը շտապ մի ռազմանավ էլ մենք պետք է մոտենենք Մերսինին».<sup>8</sup>

Հաջորդ օրը՝ ապրիլի 18-ին, Սֆորցան նախարար Տիտոնիին է ուղարկում Մերսինում Խոտակայի հյուպատոսական գործակալությունից ստացված հեռագիրը, որում ասվում է. «Արհավիրքը զնալով սաստկանում է, ազգային կյանքը վտանգված է: Անիշխանության պատճառով Աղամայի հետ միասին իրի ու արյան մեջ է նաև Տարսոն: Անզիայի հյուպատոսը, որ ուզում էր ստանձնել Աղամայի զինվորական հրամանատարությունը, վիրավորվել է: Անզիացիներն իրենց համերկրացիներին պաշտպանելու համար մի ռազմանավ են ուղարկել: Մերսինի քաղաքապետը փորձում է բոլոր հենարավոր միջոցներով փրկել քաղաքը: Աղամայի և Տարսոնի հետ հալորդակցությունն ընդհատվել է»:<sup>9</sup>

Իսկ Հալեպում Խոտակայի արքայական հյուպատոս Բեուրեզարդը ապրիլի 20-ին Խոտակայի արտաքին գործերի նախարար Տիտոնիին հեռագրել է. «Անտիրում երեկ մեծ կոտորած է տեղի ունեցել: Անզիայի հյուպատոսը հեռագրել է, որ վտանգի մեջ է գտնվում: Զեյթունում հեղափոխություն է սկսվել: Քիլիս քաղաքը սպառնալիքի տակ է: Քրդերն այստեղ են հասել, Հալեպը վտանգված է, իսկ քաղաքի վայրին հայտարարում է, որ անհրաժեշտ միջոցներ չունի քաղաքի պաշտպանության համար: Եղած ուժերը գտնվում են քաղաքից դուրս՝ ներսում միայն մեկ գումարտակ է մնացել».<sup>10</sup> Բեուրեզարդը նոյն օրը մեկ այլ հեռագիր է ուղարկել Կոստանդնուպոլսում Խոտակայի դեսպանատան հանձնակատար Սֆորցային, որը նոյն օրն այդ հեռագիրն ուղարկել է Խոտակայի արտաքին գործերի նախարար Տիտոնիին: Այդ հեռագրում ասվում է. «Աղամայի քրիստոնյա խոտակացիները սպառնալիքի տակ են, քաղաքից դուրս նրանցից շատերը սպանվել են: Տեղի իշխանությունների հանդեպ հավատ չունենք: Օսմանիեռում 100 բողոքական քարոզիչներ այրվել են հենց եկեղեցու մեջ: Գլխավոր կառավարչին հղած մեր բողոքներն արդյունք չեն տալիս: Բոլոր քրիստոնյա հայերն անհետացել են Աղամայից և Անտիրից: Շատ գյուղեր իրի ու սրբ են մատոնվել: Սովորական ընտանիքներն օգնություն են խնդրում».<sup>11</sup>

Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքը օգնություն ստանալու ակնկալիքով, ապրիլի 19-ին այցելել է Կոստանդնուպոլսում գտնվող Խոտակայի դեսպանատուն: Այդ հանդիպման մասին դեսպանատան հանձնակատար Սֆորցան նախարար Տիտոնիին ամսիք

7 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, h.XVI, թիվ 2406:

8 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, h.XVI, թիվ 2412:

9 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, h.XVI, թիվ 2418:

10 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, h.XVI, թիվ 2453

11 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, h.XVI, թիվ 2514:

## Արամայիս Բալոյան

20-ին ուղարկած հեռագրում գրում է. «Պարոն նախարար, Գրիգորյան [Առաքելական եկեղեցու հետևողը] հայերի պատրիարքը երեկ եկել էր դեսպանատուն և իման ներկայացրեց Աղանայից և շրջակա բնակավայրերից ստացված հեռագրերը: Դրանցում խոսվում էր այրված և թաղանալա քաղաքների, ինչպես նաև՝ հաղածանքների ենթարկված հայկական համայնքների մասին: Պատրիարքին պատասխանեցի, որ Մերսինի մեր արքայական հյուպատոսական գործակալությունից առաջին իսկ հեռազիրը ստանալուց հետո հանդիպել եմ Մեծ Վեզիրին, որին հասկացրել եմ, որ իրենց կառավարության պարտականությունն է շուապ միջոցներ ձեռնարկել, որպեսզի անհապաղ կասեցվեն արյունալի իրադարձությունները: ... Ավելացրեցի, որ մեր արքայական կառավարությունն արդեն մի ռազմանալ է ուղարկել, որը բացի մեր հայրենակիցներին պաշտպանելուց, անշուշտ, ամեն ինչ կանի, որպեսզի ուժեղացնի իշխանությունների պարտավորության զգացումը և բնակչության շրջանում վերականգնի վատահությունն ու հանդարտությունը»:<sup>12</sup>

Կոստանդնուպոլսում Խոտալիայի դեսպանատուն է այցելել նաև կաթողիկ հայերի պատրիարքը: Այդ հանդիպման մասին Խոտալիայի դեսպան Խմբերիալին մայիսի 5-ին հեռագրել է Խոտալիայի արտաքին գործերի նախարար Տիտանիին: «Կաթողիկ հայերի պատրիարքն այս ասավոտ եկավ ինձ մոտ և խնդրեց, որպեսզի Նորին Գերազանցություն թագավորին և նրա կառավարությանը փոխանցեմ իր բարձր և խորը հարգանքը՝ հայ փախստականներին արքայական «Պետմոն» ռազմանավում տեղակայելու համար: Պատրիարքին ասաց, որ Աղանայում իրականացվող դաժանությունների ու բռնությունների վերաբերյալ բազմաթիվ տեղեկություններ է ստացել»:<sup>13</sup>

1909 թ. գարնանը տեղի ունեցած այս սարսափելի իրադարձությունների նկարագրության, դրանց իրական մեղավորների և կազմակերպիչների բացահայտման առումով չափազանց կարևոր նշանակություն ունի Հալեպում Խոտալիայի արքայական հյուպատոս Բենուրեգարդի հեռազիրը, որը մայիսի 8-ին նա ուղարկել է Խոտալիայի արտաքին գործերի նախարար Տիտանիին: Հաշվի առնելով հեռազիրի կարևորությունը՝ նպատակահարմար ենք գտնում այս ներկայացնել ամբողջությամբ:

«Պարոն նախարար, Մուհամետ V-ի սուլթանական զահին զալուց հետո հյուպատոսական այս տարածում կոտորածները դադարել են: Կատված տա, որ սա միայն հերթական դադարը չինի: Ապրիլի 25-ից 28-ը խեղճ Աղանա քաղաքը դարձյալ սգում էր: Եվս 8 հազար զոհեր եղան, և այսպիսով 70 հազարանց քաղաքում արդեն 25 հազար սպանվածներ կան:

Ճիզվիտների և ֆրանսիական կուսերի կրոնական շինությունները ավերվել են, սրի են քաշվել ոչ միայն այնտեղ ապաստան գտածները, այլ նաև որոշ ճիզվիտներ:

Արդեն այստեղի ջրերում էին զտնվում եվրոպական ռազմանավերը, երբ տեղի ունեցան Անսուրի, Քասասրի, Մարաշի և այլ շրջանների սպանդները: Ինչպես 1895-1896 թվականներին, մահմեղականները ծիծաղում էին ուժերի այս կուտակումների վրա և ծաղրում այլահավատ զինվորներին, որոնք եկել էին տեսնելու, թե ինչպես են կոտորվում իրենց կրոնակիցները:

Քրիստոնյաներին կոտորելու հրամանը կայսերական պալատից տեղի գլխավոր կառավարչին հասավ ապրիլի 14-ին թվագրված հեռագրով: Ամեն ինչ պատրաստ էր իրագործելու համար այդ հրեշտակոր ծրագիրը: Բոլոր քրիստոնյաների տներին արդեն նշաններ էին արված:

Այդ ամենի մասին ես գիտեի, սակայն չէի համարձակվում բարձրաձայնել, քանզի հստակ ոչինչ հայտնի չէր: Տեղի վալին, որը հաստատապես հետադիմական է և միշտ

12 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ.XVI, թիվ 2507:

13 ԻԱԳՆՊԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ.XVI, թիվ 2580:

զավված էր պահվում Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի հյուպատոսների, ինչպես նաև «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամների կողմից՝ անկարգությունները հրահրելու [իրեն ներկայացվողը] մեղադրանքը մեղմելու համար, ստացված որոշումը ամսի 28-ին ներկայացրեց զինվորական հրամանատարներին և կոմիտեին անդամագրվելու ցանկություն հայտնեց, սակայն նրա խնդրանքը մերժվեց:

Վիլայեթի քաղաքական գործերի տնօրեն Նարմի բեյը, որ այժմ նոյն պաշտոնն է զբաղեցնում Սալոնիկում, այլ անձանց ներկայությամբ երեք անգամ հաստատեց, որ նման հրահանգ է ստացվել:

Քերվին ավագակախմբերը կազմ ու պատրաստ սպասում էին քաղաքի շրջակայրում: Հալեպում [այդ օրագիրն իրականացնելու] համար քրդերը, որոնք ավելի շուտ գողեր են, քան' մարդասպաններ, չին բավականացնում և այդ պատճառով թերեցին նաև անապատի վայրագ արարեներին, որոնք գերազույն հաճույք են ստանում արյան սարսափի մեջ:

Զպետք է մոռանալ, որ պալատի չորս զիլսալոր էմիսարները ոչ միայն հրահրել են, այլև անմիջական մասնակցություն են ունեցել ջարդերին և ձերբակալվելուց հետո ազատ են արձակվել:

Խարրերի մոլորարիք Առևոլլա բեյը, որն Անտիոքի կայյմակամի և հասարակական կարծիքի կողմից պաշտոնապես մեղադրվում էր ոչ միայն կոտորածները կազմակերպելու այլ նաև՝ մարդասպանության և գողության համար, ազատ է արձակվել՝ իր հետ տանելով գողացված ձիերն ու կառքերը:

Ժանդարմերիայի կապիտան Սարհան աղան, որին բոլորը մեղադրում են բերվին ցեղերին հավաքագրելու և դեսպի Անտիոք ու Քեսար ուղղորդելու մեջ, դեռևս ազատ շրջում է Հալեպում:

Էլ չեմք ասում Հալեպում ու Սարաշում անկարգություններ կազմակերպելու համար Կոստանդնոպոլսից ժամանած պաշտոնյա Մասսուդ բեյի և Աղանայի նողկալի կոմիսար Ներքի էֆենդու մասին:

Անտիոքում կոտորածների հրամանը տրվեց երեք օր առաջ՝ հենց այն օրը, երբ իշխանության ներկայացուցիչներն այստեղ էին եկել, որպեսզի քրիստոնյա քնակչությանն արգելեին փողոց դուրս գալ և քացել իրենց խանութները, քանզի այդպիսով ավելի հեշտ կլիներ կոտորել նրանց: 350 սպանված կա: Չեն խնայել նոյնին կանանց ու երեխաներին, կանանցից շատերն իմբնասպան էին լինում: Մարտիրոս էֆենդին, որը կառավարության քարտուղարն էր, իր կնոջն ու երեխաներին զուալ դաժանորեն սպանված: Հանցանքը կատարել էին իր գրասենյակի աշխատողները, որոնց հետ նա այնքան բարեհամրույր էր եղել: Վերջում նրան ևս մորթեցին:

Եպիսկոպոս Տեր Արտեմը, որի նախ ականջները կտրեցին, հետո քիթն ու զլուխը, եկեղեցուց քարշ տրվեց մինչև ծով և ջուրը նետվեց:

Աղանայում, մի կոտոր ստիպեցին ուտել իր երեխայի միսը, ապա սպանեցին:

Բացում էին հոլի կանանց որովայնը և պատուր համելով ցուցադրում էին քաղաքի փողոցներում:

Հատկապես ծանր էր ընտանիքների վիճակը: Ոտարորիկ կանայք և երեխաները սովահար շրջում էին քաղաքում հուսալով մի կտոր հաց գտնել, սակայն դրա բացակայությունը բացատրվում էր երկրում ալյուրի բացակայությամբ:

1895-1896 թվականների կոտորածները սկսվեցին Բիթլիսից և տարածվեցին Դիարբերիում և Զեյթունում, որտեղից էլ՝ Էրզրումում, Վանում և Տրապիզոնում: Այդժամ կոտորածներին զոհ գնաց 300 հազար մարդ: Այժմ ամերածեցին էր ավարտին հասցել սկսված գործը. հրաման էր տրվել կոտորելու Հայաստանի այս վերջին հատվածի քրիստոնյաների:

Այդ նողկալի ծրագիրը հնարավոր չեղավ լիովին իրագործել, և ոչ բոլորին հնարավոր եղավ վերացնել: Մուսուլմանները հակադրվում են նոր սուլթանին, որին անվանում են քրիստոնյաների մարդ: Հետադիմականները վառ են պահում դժգոհության ալիքը և երգեր

## Արամայիս Բալոյան

Են ձռնում Իսլամի փայլուն ներկայացուցիչ ու անհավատների ահարելիչ Արդու Համիդին:

Դորթյոլում, չնայած իշխանությունների պետություններին, թուրքերի ու քրիստոնյաների հարաբերություններն այդքան էլ լարված չեն: Այս ամսվա 3-ին քաղաքի կառավարիչը տեղի հայ եպիսկոպոսից պահանջեց, որպեսզի նա կարգադրի հայերին վայր դնել գենքը, բայց նա, հաշվի առնելով անցյալի և ներկայի փորձը, նրան պատասխանել է, որ նման կարգադրություն չի կարող տալ, մինչև որ մահմետականներն իրենք զենքը վայր չդնեն: Այդժամ Ռաշիդ բեյը կարգադրել է, որ 50 հեծյալներ և մոլեռանդների կես գումար-տակ գնան և իրականացնեն զինաթափումը:

Այդ մասին անմիջապես տեղեկացրի մեր արքայական դեսպանատանը, իսկ Անգլիայի իմ գործընկերը զգուշացրեց Ալեքսանդրիայի մոտ գտնվող իրենց նավերին: Նորին Գերազանցություն Իմպերիալիի միջամտությունն անկասկած դրական արդյունք ունեցավ: Դորրյոլի գործերի հաճանակատարն իր դեկավարի անունից ինձ տեղյակ պահեց, որ քաղաքը շրջափակման մեջ է, իսկ կառավարիչը հրահանգել է զինաթափել թե՛ քրիստոնյաներին և թե՛ մահմետականներին: Բացի նրանից, որ մեր և ֆրանսիացի պաշտոնյաները կարողացան արգելել ներխուժումը քաղաք, այլև՝ մեր նավերից հրամանատարներ ուղարկվեցին՝ քաղաքի իրավիճակին ծանոթանալու համար:

Մոհամետ բեյն ինձ ինձ ասաց, որ եթե երկարատև խաղաղություն ենք ուզում, ապա անհրաժեշտ է պատճամիջոցներ կիրառել: Բանակն, իրականում, ցանկանում է այդ ուղղությամբ գործել, սակայն, արդյոք կարողանա ճիշտ գործել: Աստված տա այդպես լինի, սակայն, հակառակ պարագայում, դարձալ անտեղի արյուն կրավիլի:

Կոստանդնուպոլիսից ստացված հրահանգների համաձայն, Անտիոքում ձերքակալվել են զինավոր մեղավորները, սակայն բնակչությունը պահանջում է, որպեսզի նրանց ազատ արձակեն, քանզի չի կարելի պատժել սուլթանի հրամանը կատարելու համար:

Գյուղերում և հատկապես Բեյլանում ու Մարաչում, քրիստոնյաները ջարդի են սպասում, իսկ Զեյյունի բնակիչները վախենում են, որ ուղարկված գործը քաղաքում կիրագործի այն, ինչ՝ Աղանայում և Քեսարում:

Ոչ մի քրիստոնյա չի կարողանում դուրս գալ տներից, քանզի նրանց սպասում են: Այս շրջանում առևտուրը լիովին կազմալուծվել է, աղքատությունը զնալով ավելի է սրբում:

Կարծում էինք, որ արհավիրը կվերաբերի միայն հայերին, սակայն սուժում են նաև օտարերկրացիները: Մեր հայրենակիցներից շատերը ևս ծանր կորուստներ են ունեցել: Մեր տեղի արքայական գրասենյակի երկու քարգմանիչները՝ Արմանդ Կոուսան և Հոմին, Աղանայի հրեեի ժամանակ կորցրել են ավելի քան 130 հազար ֆրանկի կարողություն:

Բոլոր այն մարդիկ, ովքեր խիզճ ունեն, մտածում են մեղմել այս թշվառների վիճակը: Անենոր գրասենյակներ են քացլում այս ահավոր արհավիրը վճասները մեղմելու համար: Անգլիան և Ֆրանսիան շատ առատաձեռն են, Գերմանիան ևս շատ քան է անում:

Մերսինի և Ալեքսանդրիայի մեր գրասենյակներում շատ ընտանիքներ ապաստան և սնունդ են ստանում: Արքայական փոխսեյուպատու Սոլան դարձել է շատ դժբախտների պահապան».<sup>14</sup>

Տեղի ունեցած կոտորածների և դրանցում կանոնավոր գորքերի մասնակցության մասին է վկայում Կոստանդնուպոլսում Խտալիայի դեսպան Իմպերիալիի կողմից նայիսի 21-ին Խտալիայի արտաքին գործերի նախարար Տիտոնիին ուղարկած հեռագիրը. «...Ֆրանսիացի իմ գործընկերը, որ մանրամասն [տեղեկություններ] է ստացել իր հյուպատուններից և ուսումնավերից, վատահենում է, որ շատ վայրերում կոտորածներն, իրոք, ահավոր բնույթ են կրել: Հանգանանքները ծանրացնում և օսմանյան կառավարության

14 ԻԱԳ-ՆԴԱ, Տպագրված դիվանագիտական փաստաթղթեր, հ.XVI, թիվ 2641:

պատասխանատվությունը մեծացնում է նաև այն հանգամանքը, որ կարգ ու կանոնը վերականգնելու համար Աղրիանապոլսից ուղարկված զորքը, տեղ հասնելուն պես միացել է կոտորածներն իրականացնողներին: Կարելի է ասել, որ քրիստոնյաների պարբերական կոտորածներն իրենց զագաթնակետին են հասնում, երբ տեղ են հասնում ջարդերը կասեցնելու համար ուղարկված զորքերը ...»:<sup>15</sup>

Որբան էլ երիտրուքական կառավարությունն ազատորեն և հետևողականորեն իրականացնում էր իր առջև դրած ծրագրերը, այնուամենայնիվ, եվրոպական երկրների ճնշումներից խուսափելու համար փորձում էր կոտորածների ողջ պատասխանատվությունը բարդել նախակին՝ արդուխամիջյան վարչակարգի վրա: Դրա մասին է վկայում նաև Խոտալիայի դեսպան Իմալերիային արտաքին գործերի նախարար Տիտոննիին ուղարկած հովիսի 9-ի իր հեռագրում. «... Երբ Աղանայի կոտորածներն ավարտվեցին և զորքը մտավ Կոստանդնուպոլիս, այստեղ ամեն ինչ անում են, որպեսզի կարծիք ձևավորվի, որ կոտորածներում պետք է տեսնել Արդու Համիդի մեղասկցությունը: ...»:

Զպետք է մոռանալ, որ Աղանայի կոտորածների պատճառները չպետք է փնտրել նախկին վարչակարգի, կամ որևէ պաշտոնյայի հրահրումների մեջ: Դրա պատճառն այն զայրույթն է, որով բուրք բնակչությունը վերաբերվում էր հայերին, որոնք սահմանադրության ընդունումից հետո հանդգնում էին խոսել, գործել և ծրագրեր կազմել մահմեդականներին հավասարի պես: Անցյալ ապրիլին տեղի ունեցած կոտորածներն ամսիչապես հօդս ցնդեցրին քրիստոնյաների այն պատրամքները, որոնք նրանց էին տրվել սահմանադրության ընդունումով:...»:<sup>16</sup>

Նոյն հեռագրում դեսպանն անդրադառնում է նաև Աղանա ուղարկված պատգամավորական հետաքննական հանձնաժողովին, որի կազմում է եղել նաև հայազգի պատգամավոր Հակոբ Պապիկյանը: «...Թեկուզ հենց պատմական տեսանկյունից շատ կարևոր է այն հանգամանքը, որ ներկա խորհրդարանից մի պատգամավոր, այն էլ հայ, ուղարկեց Աղանա՝ իրավիճակին ծանոթանալու համար: Արդու Համիդի հանդեպ ունեցած այդ պատգամավորի ատելությունը բացատրելի է, բայց նա, տեսնելով իրավիճակը, ստիպված էր հայտարարել, որ դրանցում արդուհամիջյան մեղավորության և պատասխանատվության ոչ մի հետք չկա:

Ինչ վերաբերում է ներկային և ապագային, պետք է նշել, որ պատգամավոր Պապիկյանը նոր արհավիրքներ է կանխատեսում, քանի այդ շրջանում թուրքական իշխանությունները՝ լինեն որամբ բաղարական, թե ուզմական, հավասարություն չեն պատկերացնում: Այսինքն, թե՛ պաշտոնյա, թե՛ հասարակ թուրքերը չեն կարող ընդունել այն, որ հայերն իրենց հավասար են:...»:<sup>17</sup>

Կոտորածների իրական մերավորներին թաքցնելուն ուղղված երիտրուքական կառավարության հերթական քայլը ռազմական դատարանների ստեղծումն ու ուղարկումն էր դեսպի վայրեր: Այս դատարանների իրական դերի և գործունեության մասին ուշագրավ տեղեկություններ ենք կարդում Հակեպում Խոտալիայի արքայական հյուպատոս Բենութ-գարդի՝ հովիսի 15-ին Խոտալիայի արտաքին գործերի նախարար Տիտոննիին ուղարկած հեռագրում. «...Ինչպես արդեն տեղեկացրել եմ իմ նախորդ հաղորդագրություններում, այսօրվա թուրքն ու երեկանը՝ 1896 թվականինը, ցանկանում է ատելության իր ողջ մեղքը բարդել բացառապես քրիստոնյաների և, հատկապես, հայ ժողովրդի վրա, քանզի նրանք

15 ԻԱԳՆԴԱ, Քաղաքական շարք թ. 1891-1916թթ. թղթապահակ 332:

16 ԻԱԳՆԴԱ, Քաղաքական շարք թ. 1891-1916թթ. թղթապահակ 332:

17 Տնտ նոյնը:

## Արամայիս Բալոյան

անպաշտպան են և հեշտ է նրանց մեղադրել:

Ադամայում և այլ քաղաքներում վերջին կոտորածների իրական մեղավորներին չեն անհանգստացնում, քանզի պետք է մեղադրվեր ողջ քաղաքացիական և զինվորական իշխանությունը: ...Եթե ռազմական դատարանը դեռևս ավարտված չի համարում իր նողկալի գործը և միջոցներ ձեռք չի առնում, որպեսզի ազատ արձակվեն շատ անմեղ բանտարկյալներ, որոնք պարզապես կտուանքների են ենթարկվում ու սպանվում, ապա, չնայած բոլոր հնչած գեղեցիկ խոստուանքներին, տեղի քրիստոնյա բնակչությանը հաղածանք է սպավում:

Այս ամբողջ շրջանում Հայեպում և Ադամայում, մահմեղական բնակչությունը չափազանց կատաղած է, որովհետև Անգլիայի հյուպատոսը հրաժարվում է թուրքական դատարանին հանձնել իր մոտ ապաստանած չորս հայերին և հայտարարել է, որ նրանց կոտադի միայն անգլիական դատարանը՝ այդպիսով ցուց տալով իր վերաբերմունքը թուրքական դատարանի հանդեպ:

Մի քանի օր առաջ Անտիոքում ձերբակալվեցին հայերի կոտորածների կազմակերպիչներն ու իրազործողները, որոնք բոլորին քաջ հայտնի էին: Ուազմական դատարանն անմիջապես լրատվական միջոցներով հայտարարեց, որ Եվլոպան արդարություն է ուզում, սակայն, շոտով ազատ արձակելով ձերբակալվածներին, հայտարարեց, որ նրանք մեղավոր չեն: Ամբողջ մահմեղական աշխարհում գոհունակությամբ են ճշում կոտորածների հիմնայի կազմակերպված լինելու հանգանակները, քանզի դրանց արդյունքում ոչ մի մահմեղական ոչ միայն չափանվեց, այլ նոյնիսկ չվիրավորվեց:

Մարաշում արդեն հինգ շաբաթ է, ինչ ռազմական դատարանն իր նիստերը սկսում է նշանավոր մարդկանց ձերբակալությամբ և ստիպում, որպեսզի ժողովուրդը գենքը վայր դիմի: Այսուհետև, ազատելով ձերբակալվածների մի մասին, դատապարտում է ուրիշներին: Խոսքը քրիստոնյա նշանավոր մարդկանց մասին է և ոչ թե մահմեղականների:

Տեղի բանտերում են գտնվում հայ հոգևորականներ, բողոքականներ, դպրոցի դասաւուներ և այլք, որոնցից կտուանքների միջոցով փորձում են խոստովանություն ձեռք բերել, որ անդամակցել են իրականում գոյություն չունեցող կոմիտեներին:

Շատերը բանտ են նետվում և բռնությունների ենթարկվում: Նրանցից պահանջում են ասել, թե ո՞վ է գենքը բերում Մարաշ: Մահմանադրության ընդունումից հետո, սակայն, գենքի առևտուրը ազատ է:

Մյուս քաղաքները խնդրում են, որպեսզի այդ արյունարու դատարանը չմտնի իրենց քաղաքները, չնայած, որ իրենց մոտ էլ են տեղի ունեցել քրիստոնյաների կոտորածներ: Այժմ բնակչությանը զինաթափելու և նրանց զիսավորներին դատապարտելու համար այդ դատարանը մեկնում է Զեյթուն, ուր դեռևս 9 հազար հայ կա:

Բոլոր քրիստոնյաները սարսափում են, քանզի անցյալի հիշողությունից զատ, նրանց աչքի առաջ է նաև ներկան: Նրանք ասում են, որ նշանավորներին վերացնելուց և բնակչությամբ զինաթափելուց հետո սկսվում է կոտորածը: Մահմեղականներն էլ, ոգևորվելով իրենց հաջողությունից, առավել քացահայտ են ցուցադրում իրենց ատելությունը քրիստոնյաների նկատմամբ, որից էլ քաղաքի և, հատկապես, զյուղերի քրիստոնյա բնակչությունն ուղղակի սարսափում է»:<sup>18</sup>

Ինչպես տեսանք, Օսմանյան կայսրությունում գտնվող իտալացի դիվանագետները քավական ակտիվութեն արձականքել են տեղի ունեցող իրադարձություններին: Փաստաթղթերից ակնհայտ է դատնում, որ հետագրերն ու նամակներն ավելի շատ են եղել, որոնք, ցավոր, չեն պահպանվել: Այսուհանդերձ, կարծում ենք, որ հիշյալ վավերագրերն էականորեն կլրացնեն մեր գիտելիքներն ու տվյալները կիլիկյան իրադարձությունների վերաբերյալ:

18 ԻԱԳՆԴԱ, Քաղաքական շարք թ. 1891-1916 թթ. թղթապանակ 332:

Aramayis Baloyan

**The Italian Diplomatic Documents on the 1909 Massacres  
of Armenians in Cilicia**

**Summary**

The Italian diplomats, who eyewitnessed the massacres of the Armenian population in the provinces of Adana and Aleppo in April of 1909, have passed very notable information to the Italian government. In their telegrams and diplomatic dispatches they have clearly emphasized the fact that the Armenian massacres had been organized and implemented by the Young Turkish government. These documents mostly unknown to the researchers until recently. Now by putting these documents into circulation, we're sure that they will strongly contribute to the comprehensive study of the problem.

**1909թ. ԱԴԱՆԱՅԻ ԵՒ ՀԱԼԵՊԻ ՎԻԼԱՅԵԹ-ՆԵՐՈՒՄ ՏԵՂԻ  
ՈՒՆԵՑԱԾ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ.  
ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ**

Հայկ Դեմոյան

1909 թ. Օսմանյան կայսրության Հալեպի ու Ադանայի վիլայեթներում տեղի ունեցած հայերի զանգվածային կոտորածների դրդապատճառների ու հետևանքների ուսումնասիրությունն առանձնահատուկ կարևորություն ունի օսմանյան կառավարության, ինչպես նաև քեմալականների կողմից կայսրության քրիստոնյա բնակչության, ի մասնավորի, հայերի դեմ իրազործված ցեղապահական քաղաքականության տնտեսական, քաղաքական, սոցիալական և հոգեբանական շարժադրությունների լուսարանման տեսանկյունից:

Այս առումով կարևոր են կոտորածներին ականատես դարձած հայ և օտարազգի հեղինակների վկայությունների վերլուծությունները: Վերջիններիս հաղորդումները, հիշարժան են, քանի դրանք հիմնականում ներկայանում են կողմնակի անձանց (bystanders) վկայությունների տեսքով: Դրանց թվում կարելի է հիշատակել Ալեքսանդր Աղոսիդեսի,<sup>1</sup> Ֆերհման Դարերի,<sup>2</sup> Ռուուլ Լամբերտի,<sup>3</sup> Հենրի Վուդսի<sup>4</sup> և այլոց վկայությունները:

1909 թ. կիլիկյան կոտորածները ուսումնասիրելիս առաջին հերթին պետք է դրանք դիտարկել թրքական վարչակարգերի փոփոխման, սակայն Հայկական հարցի լուծման և հայերի նկատմամբ եղած ընդհանուր քաղաքական գծի անփոփոխականության համատերսում:

Համբողիանուր հոգեբանական իրավիճակը, որը ստեղծված էր Օսմանյան կայսրությունում 1894-1896 թթ. հայկական կոտորածներից հետո և դրան հաջորդած տեղային բնույթ կրած բռնությունների ու զանգվածային սպանություններից հետո, բնութագրվում էր մահմեդական զանգվածի շրջանում՝ «կոտորածներից հետո հայերին տվերք քանի տարի և նրանք պատրաստ կլինեն հաջորդ կոտորածին» հայտնի կարգախոսով:

Այս առումով հատկանշական է ազգությամբ հովն հեղինակ Ա. Աղոսիդեսի աշխատության մեջ բերվող այն դրվագը, երբ թուրք պաշտոնյաններից մեկը խոսելով Կիլիկիայում տիրող իրավիճակի և մոտապուտ հայկական կոտորածների մասին, նշում է. «Սպասում ենք, որ փեթակը լցվի մեղրով և այդժամ այն հավաքելու առիթը կներկայանա»:<sup>5</sup> Այսպիսով ստեղծված իրավիճակը կարելի է բնութագրել նաև որպես թուրքական իշխանությունների ու մահմեդական հոծ բնակչության շրջանում կոտորածների հանդեպ եղած հոգեբանական սպասումով և նախատրամադրվածությամբ:

Հարկ է նշել, որ համիլյան կոտորածների ընթացքում կիլիկիահայությունը հիմնականում զերծ մնաց կոտորածներից ու բռնություններից: Այս հանգամանքը էապես նպաստեց երկրամասի հայ բնակչության թվաքանակի աճին ու բարեկեցության մակարդակի բարձրացմանը, ինչն աննկատ չմնաց հիմնականում հետամնաց ու քրիստոնյաների նկատմամբ մոլեռանդ ու անհանդուժողական տրամադրություններ ունեցող մահմեդական շրջապա-

1 A. Adossidès. Arméniens et Jeunes-Turcs: Les massacres de Cilicia, Paris, 1911.

2 Ferriman Duckett. Armenian Atrocities. Young Turks and the Truth about the Holocaust at Adana, London, 1913.

3 Rose Lambert. Hadjin and the massacres of Armenians. New York: Fleming H. Revell, 1911.

4 Henry Charles Woods. The Danger Zone of Europe: Changes and Problems In The Near East. Fisher Unwin, 1911.

5 Ա. Աղոսիդես. Հայեր և երիտրութեր. Կիլիկիայի կոտորածները, Երևան, ՀՅԹ-Ի, 2012, էջ 8:

տից: Այս հանգամանքը կարևոր դեր խաղաց հայ բնակչության թիրախավորման, իսկ հետագայում՝ կոտորածների իրականացման համար:

Կոտորածների նախապատրաստման, իրահրման ու իրազործման համար կարևոր դերակատարություն ունեցավ ջարդարաբների շրջանում անհրաժեշտ հոգեբանական մթնոլորտի ստեղծումը: Այդպիսի հանդիսացան սաղրանքների կիրառումը, ապատեղեկատվության տարածումը, մոլեռանդ զանգվածների մոտ կրոնական անհանդուրժողականության կրքերի բորբոքումը և այլն: Այդպիսի երևույթների և վկայությունների հանդիպում ենք ժամանակին լույս տեսած մամուլի և սկզբնադրյուրային գրականության մեջ: Ժամանակակիցներից անզիւցի դիվանագետ Ֆերիման Դաքետը հիշատակում է նաև տեղի թուրք կրոնավորների կողմից հատուկ ֆերվայով Սրբազն պատերազմ հայտարարելու և մահմեդականներին՝ հայերի դեմ կոտորածներ իրականացնելու համար իրահրելու մասին:<sup>6</sup> Այս փաստը նույնպես խոսուն հանգամանք է տեղի ունեցած նախճիրի հոգեբանական դրդապատճառները լուսաբանելու համար:

Ականատեսներն ու ժամանակակիցները մատնանշում են, որ կիլիկյան կոտորածների համար ոչ երկրորդական ազդեցություն ունեցան օսմանյան մամուլում, ի մասնավորի տեղական «Իթիդալ» թերթում այդ օրերին լույս տեսած գրգրիչ հոդվածները, մահմեդականների շրջանում ստահող լուրերի տարածումը, ինչպես նաև միտումնավոր կազմակերպված սարդիչ գրձողությունները, ինչպես օրինակ մզկիթներից մեկի վրա կերպ քսելը և դրանում հայերին մեղադրելը: Սրանք ակնհայտորեն միտված էին կոտորածների նախապատրաստման ու իրականացման համար որոշակի հոգեբանական նախադրյալներ ստեղծելուն:<sup>7</sup>

Ա. Աղոսիդեսը կոտորածների հոգեբանական պատճառների թվում կարևորում է թուրքերի, որպես արտոնյալ տարրի շրջանում այդպիսի կարգավիճակի կորուսի մտահոգությունը, որով փաստորեն մերժվում էր հայերին ու քրիստոնյաներին Սահմանադրության հոչակմամբ տրվելիք հավասար իրավունքները: Նրա կարծիքով սա տիրապեսող ռասայի ատելությունն էր ենթակա ռասայի նկատմամբ: Աղոսիդեսի կարծիքով, հենց այդ պատճառով էր, որ այս կոտորածները կոչված էին վարկարեկելու երիտրուրքերին մահմեդականների շրջանում մոլեռանդություն սերմանելով, ովքեր նոր գաղափարների նկատմամբ թշնամական զգացումներ ունեին:

Այս դիտարկումը պայմանավորված էր 1908 թ. երիտրուրքերի հեղաշրջումից և Սահմանադրության հոչակումից հետո կայսրության նախկինում հալածյալ ու իրավագործկ կարգավիճակում գտնվող քրիստոնյա բնակչության՝ այդ թվում հայերի շրջանում տիրող համընդհանուր խանդավառության ու ոգևորության երևույթներով: Նույնիսկ օտարերկրյա դիվանագետները վկայում են կայսրության տարրեր հատվածներում նման կտրուկ փոփոխությունների ու քրիստոնյաների ու մահմեդականների իրավահավասարության գաղափարի վտանգավորության ու հնարավոր հետևանքների մասին:<sup>9</sup>

Այս ամենի հետ մեկտեղ, ժամանակակիցները բազմաթիվ անգամ հիշատակում են Կիլիկիայում քրիստոնյա և մահմեդական համայնքների հարաբերականորեն խաղաղ համակեցության մասին: Դաժան կոտորածների համար որպես ազդակ ծառալած այլ հո-

6 Ferriman Dackett. The Young Turks and the Truth about the Holocaust at Adana in Asia Minor, during April, 1909, Yerevan, AGMI, pp. 16-17.

7 Տե՛ս Յ. Թէրզեան. Կիլիկիոյ աղէտը, Վ. Պոլիս, 1912, էջ 11-12, 26:

8 Տե՛ս A. Adosides, էջ 7, 8, 139-140.

9 Տե՛ս Из донесения русского генерального консула в Эрзеруме послу в Константинополе И. А. Зиновьеву, см. Геноцид армян в Османской империи, Ереван, Айастан, 1983. С. 188.

## Հայկ Դեմոյան

գերանական դրդապատճառների կողքին օտար աղբյուրները նախանշվում են կրոնական մոլեսանդրությունը և մահմերականների մոտ բռնության հանդեպ բնատոր հակումը դեպի մոլեսանդրությունը:

Թուրքիայի պատմությունը հուչում է, որ քաղաքական վարչակարգերի փոփոխելիության պայմաններում հայ բնակչության դեմ բռնությունների կիրառումը դիտվել է որպես մնայուն ու անփոփոխ քաղաքականություն: Հատկանշական է, որ այս հանգամանքի վրա ուշադրություն է հրավիրում Աղանայի հայոց առաջնորդ Մուշեղ Եպիսկոպոսը, իր հայտնի կոչում նշելով հետևյալ «Քաղաքական ու կրօնական մոլեսանդրությամբ զազանցած թուրք բռնապետութիւնը 1896-06-ին իր կազմակերպած ջարդերով Հայաստանը սպանդանցի մը վերածելէ վերջ, ապրիլ 1/14 էն ի վեր ամենասուկալի հարուածը կուտայ Կիլիկիոյ սրտին: Են մենք ամենատխուր փորձառութիւնը ունեցանք, թէ Թուրքիան, վարչական ինչ փոփոխութիւններ ալ որ կրէ, ըլլայ միապետական թէ սահմանադրական, հայացինց սկզբունքը իր այլամերժ ծրագիրներուն հիմնակէտը պիտի կազմէ...»:<sup>10</sup>

Այսուհետո հեղինակը շարունակում է. «Ոչ ոք կրնար երևակայել, թէ անցեալին մեջ կրած այնքան զրկանքները, տառապանքները, թափած այնքան արինները մոռնալու տրամադիր հայութեան հանդէպ, սահմանադրական թէժմին մը օրով, կեղրոնական կառավարութեան, Աղանայի կուսակալութեան և իսլամ խուժանին եղբայրակցութեան համակական ցոյցը այսքան արինուու պիտի ըլլար...»:<sup>11</sup>

Նոյն հեղինակը, Աղանայի ողբերգական իրադարձությունները որակելով որպես «կանխամտածված ոճիր» իր աշխատանքներից մեկում նշում է. «Սահմանադրական թէժմին Թուրքիոյ մէջ հոչակուելէն յեսոյ Հայերը եթէ յանցանք մը ունեցան՝ յաս յետադիմական Թուրք տարրին, որ դժբախտաբար ահաւոր թիւ մը կը կազմէ տակալին, այն ալ Օսմ. Սահմանադրական Թէժմին իրենց անկեղծ եւ բողոքանուր փարումն էր: Եթէ Հայերը յանցանք մը ունեցան իրենց անձին հանդէպ, այն ալ Սահմանադրական թէժմին վրայ իրենց չափազանց վատահութիւնն էր, վատահութիւն մը, թէ Սահմանադրական թէժմին տակ այլեւս ջարդերն ու կողոպուտները անկարելիութիւններ էին»:<sup>12</sup>

Չնայած որոշ օտար և հայ հեղինակներ հակված էին կարծելու, որ կիլիկյան ողբերգության հիմնական մնացակորը սուլթանական վարչակարգի մնացուկներն ու Կոստանդնուպոլիսից ստացված հրամանն էր կոտորածներ իրականացնելու համար, այդուհանդերձ կոտորածների ծավալները, տեղական իշխանությունների ակնհայտ պասիվ, իսկ որոշ դեպքերում էլ բացահայտ իրահրիշ գործելատն ակնհայտորեն մղում էին հենց երիտրությական վարչակարգի ձեռագիրը տեսնել դժնդակ այս իրադարձությունների մեջ: Այս առունուլ մեկ այլ հեղինակ՝ Հելեն Գիրքնար, Աղանայի կոտորածներից հետո գրում է. «Այժմ մենք հասկացանք, որ միակ տարրերությունը հին ու երիտասարդ թուրքերի միջև դա այն է, որ երիտրութերն ավելի գործունյա և կատարյալ էին ջարդեր իրականացնելիս»:<sup>13</sup>

Անդրադառնալով կիլիկիահայության դեմ իրականացված կոտորածներում թուրքական կառավարության մեղակացության հարցին, Ֆերիման Դաքեթը, դատապարտելով Աղանայի կոտորածների իրականացման մեջ երիտրութերի մեղակացությանը, միաժամանակ նշում է. «Նրանք, ովքեր ծանոթ են Թուրքիային և թուրքերին զիտեն, որ առանց կառա-

10 Տե՛ս Կոչ համան հայութեան արինազանգ Կիլիկիային համար, «Տարագ»,, 1909, No. 5-6, տես Հայ բռնանիք, Վենետիկ, 1985, էջ 43:

11 Նոյն տեղում:

12 Մուշեղ Եպիսկոպոս. Աղանայի ջարդը եւ պատասխանատուները, Գահիրէ, Արարատ տպարան, 1909, էջ 8:

13 Helen Gibbons. The Red Rugs of Tarsus. A Woman's Story of the Armenian Massacres. Paris, 1919, p. 127.

վարության նախաձեռնության կամ համաձայնության Թուրքիայում երբեք կոտորածներ չեն լինում»:<sup>14</sup>

Արևմտահայ որոշ մտավորականներ փորձեցին իրենց վերլուծությունները ներկայացնել Աղանայի ողբերգության պատճառների շորջ, անուշադրության չմատնելով նաև հայկական կողմի անհեռատեսությունն ու անհրաժեշտ զգուշավորություն ցուցաբերելու կարևորությունը զանց առնելու հանգամանքները։ Այս առումով բավական տպավորիչ վերլուծություն է տալիս հայ մարմնամարզիկ, «Մարմնամարզ» հանդեսի խմբագիր Շավարշ Քրիստոնը, ով ի մասնավորի գրում է. «Սահմանադրությունն ասդին նոր կեանք մը սկսած Թուրքիոյ համար, բոլոր բաղկացուցիչ ազգերը սկսան իրենց բոլոր թափովը ինքնազարցման, բաղաքակրթութեան և յառաջադիմութեան հետամուս ըլլալ. հայերս ալ շարժեցանք, բայց բնականարար ոչ այն առողջ և գիտական թափով՝ որով պարտ էին շարժիլ, ի հարկէ մենք ամենէն աւելի զգացած ըլլալով բռնապետության շղթաներու ծանրութիւնը, մեր ուրախութիւնը և յառաջադիմութեան եռանդը ամենէն աւելի պիտի ըլլար, բայց այդ ուրախութեան և իմբնամոռացման օրերուն մէջ մոռցանք նկատի առնել բնական և բնախօսական օրէնք մը՝ որուն համեմատ, շատ նաստող մը, երկար ատեն պատկած հիւանդ մը, ապաքինելէլ վերջ, պարտասոր է քիչ մը ատենուան համար յամրաբար ընթանալ, իր ուժերը չսպառել, մինչեւ որ բոլորովին ապաքինի, մենք այս ճշմարտութիւնը մոռցանք ու ուղեցինք մէկ յափով ընթանալ և Թուրքիոյ առաջադէմ ազգը ըլլալ, սիսակեցանք ու չարաչար սոուժեցինք, վկայ՝ Ատանան, որ մեր կուրծքին վրայ գիտակցօրէն բացուած վէրը մէ մեզի յիշեցնելու համար թէ մեր յառաջադիմութեանք նախանձողներ կան, մենք մեր գործունեութեան մէջ մէթոս մը ի գործ չի դրինք և նմանեցանք այն վաճառականին՝ որ առանց կանոնաւոր տետրակի իր գործառութիւնները կը կատարէ և յետոյ կը զարմանայ իր անգիտակցօրէն կրած վնասին և զլխուն եկած փորձանքներուն համար, ահաւասիկ մենք ալ ազգային տեսակէտով ճիշդ այդ վաճառականին վիճակի մէջ կը գտնուինք»:<sup>15</sup>

Տնտեսական գործոնը Աղանայի ջարդերի իրականացման ժամանակ հիմնականում պայմանավորված էր բարեկեցիկ կյանքով ապրող ու զարգացած հանրութիւն դեմ կուտակված անհանդուրժողականությամբ և այդ հանրութիւն տնտեսական առավելությունները վերացնելուն կամ դրանց բռնությամբ տիրելու մղումով։ Պատահական չէ նաև այն հանգամանքը, որ կոտորածների հենց սկզբում զարդարաբները, Հենրի Վուդսի հիշատակմամբ, առաջին հերթին ոչնչացրեցին մահմեդականների պարտացուցակները։<sup>16</sup>

Աղանայի երեսփոխան Ալի Մյոնիֆ թէյն հետևյալ կերպ է մնենաբանում Աղանայի իրադարձությունները. «... Դուք՝ Քրիստոնեաներ՝ կը յառաջադիմեք, կրթական և առեւտրական ուղղութեանը յառաջ՝ կ'անցնիք. Օտարները ձեզի համար դպրոցներ կրանան, Պատրիարքարանը կ'օգնէ և դուք կզարգանաք. Բայց մեր իսպամները չեն յառաջիններ եւ եղած տեղերնին կը մնան։ Եթէ երկրի մը մեջ ժողովուրդի մը մէկ մասը յառադիմէ, իսկ որիշ մէկ մասը յետադիմէ՝ ահա այսպէս կրլլայ»:<sup>17</sup>

Օտարազգի ականատես-վկանները ևս մատնանշում են, որ «համակարգված» կոտորածների և ջարդերի հիմնական պատրվակներից մեկն է հանդիսացել 1895 թ. արհավիրքներից խուսափած և զգալի ազգային հարստություն կուտակած կիլիկիահայությունը,

14 Ferriman Duckett, նշվ. աշխատ. էջ 6.

15 Շավարշ Քրիստոն. Հայ մարմնամարզական միութեան կատարելիք գործը, «Մարմնամարզ», թի 17, օգոստոսի 31, 1912, էջ 309:

16 Henry Woods. The Danger Zone of Europe, p. 140.

17 Համբարձում Յ. Աղմանայի Եղեռնը և Գոնիայի յուշեր, Նիւ Եորք, Կոչնակ տպարան, 1950, էջ 79:

## Հայկ Դեմոյան

քանի «հին թուրքերը առավել քան երբեք ատում էին նրանց և միայն սպասում էին առիթի թաղանթելու նրանց ինչըր»:<sup>18</sup>

Հարկ է նշել, որ Սահմանադրության հոչակումից հետո զենքի ազատ վաճառքը և քրիստոնյաների կողմից աննախադեպ ծավալների հասնող զենքի ձեռքբերումը, հանդիսությունների ու տոների ժամանակ պարբերաբար կրկնվող հրաձգությունները, աննկատ չեն մնացել մահմեդական զանգվածի ու իշխանությունների ուշադրությունից: Քրիստոնյաների համար ինքնապաշտպանության հավանականության մեծացումը արտոնյալ ու նախահարձակի իրավունքը ու կարգավիճակը ունեցող մահմեդական մոլեռանդ հատվածը չէր կարողանում ընդունել ու հաշտվել այդ իրողության հետ:

Քրիստոնյաների ու մահմեդականների իրավահավասարության անհնարինությունը, քրիստոնյաների առաջադիմությունը և հաջողությունները լրացուցիչ լիցք հաղորդեցին կոտորածների ժամանակ մոլազարության աստիճանի հասնող դաժան սպանությունների իրազործման համար:

Հատկանշական է, որ կոտորածներից մի քանի օր առաջ հոյն ըմբիշը պարտության էր մատնել թուրք ըմբիշին, ինչը լուրջ ընդվզումներ էր առաջացրել Աղանայի մահմեդական բնակչության մոտ:<sup>19</sup>

Ա. Աղոստիեսի կարծիքով, Սահմանադրության հոչակումից հետո ազատական զաղափարախոսությունները որևէ ազդեցություն չեն թողել թուրք հավաքականության վրա: Նա նշում է, որ նոր վարչակարգին մահմեդական զանգվածները թեև առերևույթ ենթարկվում էին, սակայն թշնամի դիրք էին բռնել դրա նկատմամբ: Այն բնազդաբար մերժում է ամեն կարգի բարենորոգում, որն օտար էր և հանդիսանում էր նմանակում քրիստոնեականի հետ: Ահա այս միջավայրն է, որ հնարավոր դարձեց նոր վարչակարգի օրոք հայկական կոտորածները, որոնք անպատճ մնացին Սահմանադրությունից և հետո:<sup>20</sup>

Ֆրանսիացի հեղինակ Ժան դ'Աննեկն ընդգծում է արմատացած թշնամական վերաբերմունքի և հայկականի հոգեբանական գործոնի նշանակությունը 1909թ. կոտորածների պատճառների մեկնարաննան հարցում, որը պայմանավորված էր հայերին բնորոշ առավելություններով՝ աշխատասիրությամբ և առևտրական մրցակցության ոլորտում թուրքերի նկատմամբ նրանց գերիշխող դիրքով, ինչը թուրքերին դրդել է կողոպուտի և սպանության:<sup>21</sup>

Հավասարության անհնարինության վկայությունը հանդիսացավ «Ազատություն, հավասարություն, եղայրություն» կարգախոսերով իրազործված Սահմանադրության խորհրդանշան հանդիսացող հայկականարի ոչնչացումը կոտորածների ժամանակ և «հայկական կոտորածի իրազործմամբ հավատարմության ուղղույնի ուղերձը հղում սովորական Արդու Համիլին»:<sup>22</sup>

Հ. Վուդսը կոտորածների պատճառներից նշում է նաև հարյուրամյակների ընթացքում գոյություն ունեցող ընդդիմացումը հավասարության զաղափարին, ինչպես նաև ազգամիջային ատելության զգացումը (feeling of racial hatred):<sup>23</sup>

18 Alice Shepard Riggs's Shepard of Aintab, Gomidas Institute Books, Princeton and London, 2001, p. 78.

19 Ferriman Duckett, op. cit. p. 67.

20 Տե՛ս A. Addossides. Arméniens et Jeunes-Turcs; pp. 8-9.

21 Տե՛ս Վ. Պողոսյան. 1909թ. հայկական կոտորածները Կիլիկիայում ֆրանսիական պատմագրության գմանամամբ, Երևան, 2009, էջ 69:

Siamanto and Varuzhan did not survive the Genocide of 1915 to immortalize in their greatness, the truth of the Genocide as it occurred. But take any of the pieces they created in response to the massacres of 1909 and change the date they were written, you will have a landscape of the atrocities of the 1915 before your eyes. These literary gems served the survivors of the 1915 Genocide to commemorate and mourn their dead, to express anger, sorrow, and vengeance.

It can be easily said that in terms of magnitude, extent, duration, and participation of the populace, the massacres of 1909 present a microcosm of the genocide of 1915. But the literary responses to the massacres of 1909, the poetic tools, the language, and the intensity of images in literature remained unsurpassed and shadowed the immediate responses to the 1915 Genocide. They became powerful sources of inspiration for new art forms to introduce the truth about the Armenian Genocide. They built a paradigm to last and to assist the poets and the writers of the future in their struggle to portray the Catastrophe, the genocide of Armenians at the hands of the Turks.

**Ո-որինա Փիրումյան  
Թռնության պոետիկան Աղանայի կոտորածների  
գրական արձագանքներում**

ամփոփում

Հոդվածում ներկայացվում է 1909 թ. Աղանայի հայերի կոտորածների թեմայի արտացոլումը գրականության մեջ: Հեղինակն անդրադառնում է Սիամանթոյի, Դամիել Վարուժանի և հայ մյուս գրողների ստեղծագործություններին, վերլուծում դրանք և ցոյց տալիս Աղանայի որթերգության կապը դրանց հետ՝ համեմատելով Աղանայի 1909 թ. կոտորածի և 1915-1923 թթ. կոտորածների արձագանքները գրականության մեջ: Հեղինակն Աղանայի կոտորածները հակված է դիտելու որպես 1915 թ. ցեղասպանության խտացված դրսւում: Հեղինակի մյուս կարևոր եզրակացությունն այն է, որ գրականության մեջ Աղանայի կոտորածի արտացոլումը որոշակիորեն ստվերում է մնացել՝ ի համեմատություն 1915 թթ. ցեղասպանությանն անդրադառնող գրական ստեղծագործությունների:

**1909 թ. ԿԻԼԻԿՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔԸ  
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔԸ  
(ՀԱՄԱՌԱՋԱՐԿՈՒՄՆԵՐ)**

Վարուժան Պողոսյան

1909 թ. գարնանը Կիլիկիայում տեղի ունեցած հայկական կոտորածները<sup>1</sup> Հայոց ցեղասպանության զործներացի (1894-1922) բաղկացուցիչ մասն են: Հայոց ցեղասպանության պատմության հետազոտողներն անհամենատ նվազ ուշադրություն են դարձրել այս կարևոր իրադարձության պատմությանը, հավանաբար, այն պատճառով, որ այն չեն դիտել իբրև ցեղասպանության անքակտելի օղակներից մեկը: Կիլիկյան կոտորածները մտահղացել, կազմակերպել և իրականացրել է 1908 թ. հեղափոխության արդյունքում Օսմանյան կայսրությունում իշխանության եկած քաղաքական նոր ուժերի՝ երիտրութերի վարչակարգը, սակայն, դրանց իրականացմանն անմաս չեն մնացել նաև իր մայրամուտն ապրող համիլյան վարչակարգի ներկայացուցիչները, մասնավորապես տեղական օսմանյան բարձրաստիճան պաշտոնյաները:

Կիլիկյան կոտորածների պատմությունն ի սկզբանե առ այսօր, շատ ավելի մանրակիխ է ուսումնասիրվել Ֆրանսիայում, քան որևէ այլ երկրում: Դրանց պատմությանը նվիրված առաջին ուսումնասիրությունները պատկանում են դեռևս իրադարձության ժամանակակից ֆրանսիացի պատմաբանների և մտավորականների գրչին: 1910-ական թվականներին Ֆրանսիացի պատմաբանների և մտավորականների գրչին: 1910-ական թվականներին Ֆրանսիացի լույս ընծայված պատմագիտական գրականությունը հարկ է բաժանել երեք հիմնական խմբերի՝ փաստագրական բնույթի հրատարակությունների, բուն իրադարձության պատմությունը լուսաբանող աշխատությունների և Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված հետազոտությունների, որոնցում այս կամ այն չափով մեկնաբանվել է կիլիկյան կոտորածների պատմությունը:

Առ այսօր իրադարձության պատմությանը նվիրված միակ փաստաթղթերի ժողովածուն լույս է ընծայվել 1911 թ. Ժորժ Բրեկող կեղծանվամբ հանդես եկած հայազգի Պետրոս Ազնավորի աշխատասիրությամբ՝ «Այստեղից թուրքերն են անցել» խորագրով:<sup>2</sup> Այն ընդգրկում է մեծ մասամբ հայ ականատեսների և զիսավորապես հայ հոգևոր առաջնորդների վկայությունները՝ գեկուցագրեր, նամակներ և այլն, որոնք հնարավորություն են ընձեռում պատկերացում կազմելու Կիլիկիայում և հարակից տարածաշրջաններում հայ ժողովրդի բնացնչման գործընթացի վերաբերյալ: Բրեկողը գետեղել է նաև իրադարձության պատկերը խեղաթյուրող թուրքական փաստաթղթեր:

Հայկական վավերագրերը, որոնց գերակշռող մասում չկան վերլուծություններ, անստորագիր են և նկարագրողական բնույթի են: Դրանց հեղինակները սահմանափակվում են հիմնականուր բնույթի դիտողություններով, ինչը վկայում է, որ նրանք ոչ միայն դեռևս չեն ըմբռնել իրադարձության իրական պատճառները, այլև ի վիճակի չեն եղել հստակորեն կողմնորոշվել կոտորածների կազմակերպիչների ինքնության բացահայտման՝ ժամանակակիցների համար դեռևս խրթին հարցում, քանզի դրանք հաջորդել են

1 Զոհերի թվաքանակի շուրջ պատմաբանները հայտնել են իրարամերժ կարծիքներ: Ընդհանուր առմամբ նրանք կարծում են, որ զոհված հայերի թիվը տատանվում է 25.000-ից 30.000-ի միջև (տե՛ս, օրինակ, Dadrian V., Histoire du génocide arménien. Conflits nationaux des Balkans au Caucase, Paris, 1996, p. 305; Kévorkian R.H., Le génocide des Arméniens, Paris, 2006, p. 100): Փոքր-ինչ այլ է ակադեմիկոս Հ. Սիմոնյանի մտեցումը. ըստ նրա հաշվարկների՝ զոհերի թիվը հասնում է 40.000-ի: Տե՛ս Սիմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Եր., 2009, էջ 206:

2 Brézol G., Les Turcs ont passé là... Recueil de documents, dossiers, rapports, requêtes, protestations, suppliques et enquêtes établissant la vérité sur les massacres d'Adana en 1909, Paris, 1911.

1909 թ. մայիսի 31-ի սուլթանական հեղաշրջմանը և դրա ճնշմանը երիտրուրքերի կողմից: Նրանք, ըստ էության, բավարարվում են գլխավորապես Աղանայի վիայերի կուսակալ Զևադ թեյի և զինվորական հրամանատար Մուսթաֆա Մեմզի փաշայի հանցագործ դիրքորոշման դատապարտմամբ:

Ընդհանուր առմամբ, հայ ականատեսների մոտեցմանը բնորոշ է Կիլիկիայում սանձազերծված հայկական կոտորածների շաղկապումը սուլթանական հեղաշրջմանը: Նրանց մեկնարանությունների համար խորհրդանշական են վավերագրերից մեկի հեղինակի խորհրդածությունները, որոնցից կարելի է կրահել, որ միայն Աբդուլ Համիդն էր իրավասուլուծում տալ պետության առջև ծառացած խնդիրներին, ուստի կոտորածների պատասխանաւորությունը հարկ է վերագրել միայն սուլթանին:

Հայ ժամանակակիցների, այդ թվում՝ հոգևոր առաջնորդների, շրջանում միանգամայն ակնհայտ է 1908 թ. հեղափոխության արդյունքում Օսմանյան կայսրությունում իշխանության դեկը ստանձնած երիտրուրք պարագլուխներին հայկական կոտորածների պատասխանաւորությունից գերծ պահելու միտումը, ինչը հետևանք է նրանց մոտ արմատացած այն թյուր մտայնության, թե իբր 1908 թ. հեղափոխությունից հետո վերջիններս հետամուտ են եղել 1908 թ. վերահաստատված՝ 1876 թ. սահմանադրությամբ հռչակված դրույթների կենսագործմանը: Ուստի հայ հոգևոր գործիչները կոտորածների իրականացումը պայմանավորում են միայն մարտի 31-ին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած սուլթանական հեղաշրջմամբ և միաժամանակ շրջանցում երիտրուրքերի դեկավար դերը: Չի բացառվում, որ երիտրուրք պարագլուխներին հղած փաստաթյութերում նրանք կիլիկիահայության բնաշնօման պատասխանաւորությունը բարդել են միայն համբյան վարչակարգի վրա գուցելու գիտակցարար, քանզի գերադասել են ձեռնպահ մնալ իշխանության եկած քաղաքական նոր ուժերի հասցեին բացահայտ բննադատական խոսքեր ուղղելուց՝ նրանց հակահայկական տրամադրվածությունն ավելի չքորեցրելու մտադրությամբ:

Մանրամասնենք, որ հայ հոգևորականները, ենթով իրենց աշխարհայացքից, կիլիկիյան կոտորածների պատճառները վերլուծել են սահմանափակ կտրվածքով, ուշադրությունը կենտրոնացնելով մահմեդականներին և քրիստոնյաներին զանազանող կրոնական առակատման վրա, ինչը բացահայտ շեղում է պատմական իրականությունից: Այնուամենանիվ, նրանց հաջողվել է մեկնարանել կոտորածներին առնչվող մի շարք էական հիմնախնդիրներ: Հատկանշական է, որ նրանց գրագրություններում բազմիցս ընդգծվում է և հիմնավորվում ցեղասպանության՝ իբրև երևոյթի, իմանական բնորոշչներից մեկի՝ կիլիկիահայության բնաշնօման պարագայում կանխամտածվածության առկայությունը (մահմեդականներին գենք տրամադրելը և այլն):

Հարկ է ընդգծել, որ Աղանայի կաթողիկ հայերի հոգևոր առաջնորդ Հակոբ Եպիսկոպոս Թերզյանը բացառում է հայերի՝ կոտորածների սանձազերծմանը պատճառ դարձնալու հավանականությունը, ինչը խիստ կարևոր է, քանզի դրանով նա հոմլու հակահարված է հասցնում ոչ միայն իր ժամանակակից թուրք պաշտոնյաների, այլև հետագա տասնամյակներում կիլիկյան կոտորածների պատմության աղավամանը միտված՝ Հայոց ցեղասպանության պատմությունը նենագափոխող տարրեր հեղինակների առաջադրած ստահող մեկնարանություններին:

Կիլիկյան կոտորածների առնչությամբ նշենք, որ հետաքրքրություն են ներկայացնում նաև ժողովածուում զետեղված օսմանյան պաշտոնյաների գրագրությունները: Դեռևս Զևադ թեյը կոտորածները լիտիարար մեկնարանելով սուկ իբրև «հուզումներ», դրանց պատասխանատու է համարում մի քանի հայ ֆիդայիների: Լստ նրա՝ Աղանայում պաշտպանության տակ են գտնվել ոչ միայն օսմանահավատակների քաղամասերը, այլև եվրոպացիներին պատկանող հաստատությունները, ինչը բացարձակապես չի համապատաս-

## Վարուժան Պողոսյան

խանում իրականությանը: Արդարացնելու համար օսմանյան բանակի միջամտությունը կոտորածների երկրորդ փուլին՝ նա դեռևս դրանց սանձազերծման առաջին օրերին իրավիճակը կարգավորելու միակ հնարավոր միջոցը համարում է բացառապես զինված ուժերի միջամտությունը:

Ըստաքրքրական է նշել, որ երիտրուքերի իշխանության վերահաստատումից հետո միայն, ի տարբերություն նախորդ հաղորդագրությունների, Զևսդ թեյն առաջին անգամ օգտագործում է «կոտորածներ» բառը, ինչը պատահականության արդյունք չէ: Կոտորածների պատճառները, սակայն, նա մեկնարանում է այն «անիրազեկությամբ», որում գտնվում էին մահմեդականներն ու քրիստոնյաները (ինչը, ըստ նրա, պայմանավորված է եղել բռնակալական դարաշրջանով), ինչպես նաև տարբեր ժողովուրդների՝ միևնույն տարածաշրջանում համախմբման ցանկության բացակայությամբ, համակեցության անբավարար ձգությունով: Ակնհայտ է, որ սուլթանական վարչակարգի տապալումից հետո Զևսդ թեյն ընդունում է կոտորածների փաստը, սակայն դրանց պատասխանատվությունը բարդում է միայն նախկին վարչակարգի վրա:

Ժողովածում իրապարակված են նաև տարբեր փաստաթղթեր, որոնք առնչվում են հայերի ինքնապաշտպանությանը, մահմեդականների կողմից հայերին ցույց տրված օգնությանը, արտասահմանյան քաղաքացիների միջամտությանը, ինչպես նաև պաշտոնական գեկուցագրեր, օրինակ՝ իրադարձության հետաքննությունը վարած հանձնաժողովի անդամ, երիտրուքրական կոսակցության անդամագրված հայազգի պատգամավոր Հակոբ Պապիկյանի գեկուցագրից որոշ հատվածները: Քրեզոլը, ի դեպ, շրջանցել է գեկուցագրի վերջին մասը, որտեղ Պապիկյանը կոտորածների պատասխանատվությունը բացահայտորեն բարդել է երիտրուքրական վարչակարգի վրա: Նման դիրքորոշումը կարելի է մասամբ մեկնարանել այն հանգամանքով, որ նա, թերևս, հույսեր է կապել կիլիկիահայերի իրավիճակի բարելավման հարցում իշխանության եկած սահմանադրական ուժերի հետ և, հավանաբար, չի ցանկացել նրանց ավելի բորբոքել: Չի բացալիմ նաև, որ երիտրուքերի հանդեպ ակնկալիքներով լի իրատարակիչը գերադասել է սրողել կոտորածներին ունեցած նրանց վճռական դերը՝ գերարված իրավիճակը լիցրաթափելու մտադրությամբ:

Թեև Քրեզոլը ջանքեր է գործադրել իրադարձության համապարփակ պատկերը ներկայացնելու ուղղությամբ, այդուհանդերձ, նրա ուշադրությունից վրիպել են մի շարք կարևոր հարցեր, ինչպիսիք են, մասնավորապես, կոտորածների իրական պատճառների, եվրոպական տերությունների քաղաքականության բացահայտումը:

Չնայած այս բացթողումներին, ինչպես նաև որոշ իմնահարցերի շուրջ, այդ թվում՝ խիստ էական (կոտորածների պատճառների լուսաբանման, պատասխանատունների դիմագերծման), հայկական փաստաթղթերի հեղինակների՝ ընդգծված միակողմանի մեկնարանություններին, Քրեզոլի իրատարակած ժողովածոյի նշանակությունը մեծ է: Հայոց ցեղասպանության պատճագրության մեջ այն առ այսօր 1909 թ. կիլիկյան կոտորածների պատճույքանը նվիրված միակ փաստագրական իրատարակությունն է, որը ժամանակակիցներին, ինչպես նաև հետագա սերունդներին, հնարավորություն է ընձեռել տարատեսակ սկզբնաբրյութների համադրման միջոցով պատկերացում կազմել ոչ միայն Կիլիկիայում և հարակից տարածաշրջաններում ծավալված հայկական կոտորածների, այլև հայազգի գործիչների և օսմանյան դեկանականների՝ իրադարձությանը տված իրարամերժ մեկնարանությունների մասին: Ըստ այդմ՝ Քրեզոլի ժողովածուն մինչ օրս պահպանում է իր գիտական և ճանաչողական նշանակությունը:

Կիլիկյան կոտորածների պատճությանը Ֆրանսիայում անդրադակել են իրադարձության սակավաթիվ ժամանակակիցներ՝ Ա. Աղոսիդեսը, Ժ. դ'Անգեն և Ժ. Վեսիեն, որոնց

աշխատանքները պատմագիտականից զատ ունեն նաև աղբյուրագիտական նշանակություն։<sup>3</sup>

Նրանց թվում բազմազան հիմնախնդիրների ընդգրկման առումով առավել հետաքրքիր է Ա. Աղոսիդեսի աշխատությունը: Նա հերքում է օսմանյան պաշտոնյաների առաջարքած՝ հայկական խոռովության կեղծ վարկածը, կոտորածների պատասխանատվությունը հայերի վրա բարդելու հերյուրանքը, շեշտով կոտորածների հակահայկական միտվածությունը, հայ տղանարդկանց հանդեպ դրսորված առանձնահատուկ դժնի վերաբերմունքը: Աղոսիդեսի արժանիքներից նշենք նաև հայ ժողովրդի կրած նյութական վնասների քննարկումը, կիլիկիահայության բնաջնջման պարզաբնույթը կանխամտածվածության առկայության փաստումը, ինչպես նաև օսմանյան իշխանությունների թողտվության և նրանց դեկավար դերի բացահայտումը տարածաշրջանի տարրեր վայրերում ծավալված կոտորածները նախապատրաստելու գործում:

Ավելորդ չենք համարում պարզաբանել, որ Աղոսիդեսը կիլիկյան կոտորածների կանխամտածվածության և նախապատրաստվածության շուրջ առաջադրում է անհարիբ մեկնարանություններ: Փաստելով, որ «իշխանությունների մի մասը նախապես տեղյակ է եղել ծրագրված կոտորածներին», նա, այնուամենայնիվ, գերադասում է այս հարցը թողնել «օդում կախված», քանի կոտորածների սանձազերծման համար վերստին էական է համարում սոսկ «կայծի» բռնկումը: Ուստի կիլիկյան կոտորածների իրականացումը կանխամտածվածության հիման վրա, Աղոսիդեսը, ըստ Էության, ըմբռնում է խիստ սահմանափակ կտրվածքով և այն քննարկում հայերի և թուրքերի դավանանքների զանազանությամբ պայմանավորված՝ մահմեդականների և քրիստոնյանների միջև առկա հակամարտության հարթության վրա:

Ինչ վերաբերում է կիլիկյան կոտորածների իրական պատճառների լուսաբանմանը, ապա նրա մեկնարանությունները սպառիչ չեն: Նախ նա երբեմն իրադարձության պատճառները շինորում է շարժադիմների, օրինակ՝ հայերի անզգույց պահվածքի հետ, բացի այդ, ըստ իր հայեցակարգի, դրանց թվում մեծ նշանակություն է հատկացնում կրոնական զանազանությանը, որը, անտարակույս, չի կարելի դասել պատճառների շարքը:

Օսմանյան տարրեր՝ համիլյան և երիտրուրքական վարչակարգերի՝ 1909 թ. Կիլիկիայում տեղի ունեցած կոտորածների խնդրում կրած պատասխանատվության հարցի շուրջ ևս հեղինակը, ինչպես և նրա ժամանակակիցների գերակշռող մասը, չի ունեցել հստակ դիրքորոշում: Նախ փաստերով նա բացահայտում է երիտրուրքերի չարագուշակ դերը կոտորածների իրականացման հարցում: «Այս վարչակարգը, որից նրանք (հայերը – Վ. Պ.) ակնկալում էին իրենց փրկությունը, դարձավ... նրանց սարսափելի ողբերգության թե՛ պատճառը և թե՛ առիջը»: Հեղինակի այս եզրահանգումը միանգամայն ընդունելի է: Միաժամանակ, սակայն, մեկ այլ առիջով նա նշում է: «Կիլիկիայի հոլորուսը, անտարակույս, երիտրուրքերի գործը չէ: Այս իրեշավոր հանցափորձի պատասխանատվությունն ամրող ջուրյամբ բարդվում է հետադիմության և համիլյան վարչակարգի վրա»:

Այսպիսով, միանգամայն ակնհայտ է, որ Աղոսիդեսը խարիսափում է զանազան հակասությունների մեջ: Անկախ երիտրուրքերի դերի բացահայտման առնչությամբ առաջադրած անհարիբ մեկնարանություններին՝ նա, բազմիցս շեշտելով 1909 թ. ողբերգության սանձազերծման և իրականացման գործում օսմանյան իշխանությունների, այդ թվում՝ տեղական պաշտոնյանների դերը, անուղղակիորեն հավաստում է իրադարձության՝ պետա-

3 Adossidès A., Arméniens et Jeunes-Turcs. Les massacres de Cilicie, Paris, 1910 ; d'Annezay J., Au pays des massacres, saignée arménienne de 1909, Paris, 1910 ; Vayssié G., Les vêpres ciliciennes // « La Revue » (Ancienne « Revue des revues »), 1er novembre 1909, N 21.

## Վարուժան Պողոսյան

կան քաղաքականության մակարդակով ծրագրված լինելու հանգամանքը, սակայն նրա հիմնական հետևողությունների մի մասը, ի վերջո, անհարիր է այս իրատեսական հավաստմանը:

Դ'Անգեն քազմաթիվ համոզիչ փաստերով ապացուցել է 1909 թ. հայկական կոտորածների իրականացումը պետական քաղաքականության մակարդակով՝ Կոստանդնուպոլիսից ստացված կարգադրության և կանխամտածվածության հիման վրա, ինչպես նաև տեղական բարձրաստիճան պաշտոնյաների գործուն աջակցությամբ: Այդուհանդերձ, հեղինակին չի հաջողվել անհրաժեշտ պարզություն մտցնել կիլիկիահայության բնաջնջման պատճառների բացահայտման կապակցությամբ: Այս հարցում դ'Անգենի մեկնարանությունները ևս խիստ թերի են, քանզի ուշադրությունը գրեթե ամբողջությամբ քենուում է երկրորդական բնույթի այնպիսի մի հանգամանքի վրա, ինչպիսին է քրիստոնյաների և հատկապես հայերի նկատմամբ մահմեդականների տածած ատելությունը:

Ըստ Էլության, հեղինակը հիմնավորապես բացահայտում է 1909 թ. կոտորածների սուկ շարժադիրը՝ կապված 1908 թ. հեղափոխությունից հետո երիտրուրքերի շուլքած խոսումների արդյունքում հայերին համակած ոգևորության հետ, սակայն, ինչը խիստ կարևոր է, միաժամանակ իրավամբ մատնանշում է, որ 1908 թ.՝ 1876 թ. սահմանադրության վերահստատմանը հաջորդած ժամանակաշրջանում, Մուշեղ Եպիսկոպոս Սերոբյանի գործունեության մեջ «հնարավոր չէ գտնել ոչ սահմանադրությանը դավաճանելու և ոչ իրական դավադրության հետք», ինչը բազմիցս դարձել է շահարկումների առարկա թե՛ թուրք ժամանակակիցների և թե՛ հետազայում պատմության կեղծարարների կողմից, որոնք ջանք ու եռանդ չեն խնայել՝ անհրավացիորեն նրա վրա բարդելու կոտորածների սանձազերծման պատասխանատվությունը:

Ի վերջո, դ'Անգեն իրեն կոտորածների «իրական պատճառ» առանձնացնում է այս «խեղա ժողովրդի» հանդեպ Արդուլ Համիդ II-ի տածած ատելությունը: Ակնհայտ է, որ նա բացարձակապես չի կողմնորոշվել 1908 թ. երիտրուրքական հեղափոխության հետևանքով Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած քաղաքական բարդ տեղաշարժերում, ինչը պատճառ է դարձել կիլիկիահայության ողբերգության մեկնարանության հարցում իրականությանը չհամապատասխանող այս անընդունելի հետևողությանը հանգելու համար: Ելնելով հեղինակի շարադրանքից՝ իրավասու ենք հավաստել, որ ըստ նրա հայեցակարգի՝ հեղափոխությունից հետո երիտրուրքը պետության ղեկավարմանը որևէ մասնակցություն չեն ունեցել, իսկ իշխանությունը երկրում միահեծանորեն շարունակել է տնօրինել Արդուլ Համիդը: Այս պայմաններում օրինաչափ է, որ 1909 թ. կոտորածների կազմակերպման պատասխանատվությունը նա բարդում է բացառապես սուլթանի վրա՝ դրանից ամբողջությամբ գերծ պահելով իրական իշխանության զավանակներն իրենց ձեռքում կենտրոնացրած երիտրուրք պարագուիլսներին: Ուստի կիլիկիահայության կոտորածները դ'Անգեն անքակտելիորեն շաղկապում է միմիայն դիրքերը զիջող իշխանությունը պահպանելու անսատելի ցանկությամբ համակված սուլթանի մտահղացած «սատանայական» ծրագրին: Այսպիսով, դ'Անգեն 1909 թ. հայկական կոտորածները հանիրավի մեկնարանում է իրեն միայն Արդուլ Համիդի նախաձեռնությամբ իրականացված իրադարձություն, որը, նրա կարծիքով, ընդամենն առաջադիմական քաղաքական ուժերի՝ երիտրուրքերի դեմ սուլթանի վարած հետադիմական քաղաքականության բաղկացուցիչ մասն էր: Նոյնքան անընդունելի են նաև նրա՝ հայերի բնաջնջումը կասեցնելու գործընթացին երիտրուրքերի ունեցած կարծեցյալ մասնակցության առնչվող մտորումները, ըստ որոնց՝ նոր զաղափարներին տուրք տված զինվորական իշխանությունները և երիտրուրքական «հզոր կուսակցությունը» կարողացել են ժամանակին թափանցել սուլթանի հանցագործ ծրագրերի էլության մեջ և դիմակայել դրանց:

Ժ. Վեսիեի հոդվածը հիմնված է սովորական կոտորածների՝ Եգիպտոսում, Սիրիայում և Կիպրոսում հանգրվանած հայ, ինչպես նաև թուրք և եվրոպացի ականատեսների վկայությունների վրա: Ի տարրերություն նախորդ հեղինակների՝ նա, ըստ էության, վերաշարադրում է իր զրուցակիցների վկայությունները: Հայ գաղղականները և թուրք ժամանակակիցները 1909 թ. կիլիկիահայության ոչնչացման գործընթացը մեկնարանում են վերը նշված անհարի մոտեցումների շրջանակներում: Նրանց թվում ավելի հետաքրքիր են եվրոպացիների վկայությունները, որոնք բացահայտում են օսմանյան տեղական պաշտոնյաների, մասնավորապես, Զևսադ թէյի և Ռեմզի փաշայի գիտակցաբար որդեգրած՝ կիլիկիահայերի շրջանում նկատելի խմբումների ծավալմանը նպաստող և վերջիններիս համար կործանարար հետևանքների հանգեցրած խորամանկ մարտավարությունը, նրանց փութեռանդ մասնակցությունը կոտորածներին, ինչպես նաև սուլթանական կենտրոնական վարչակարգի դեկալար դերը դրանց կազմակերպման գործում: Սակայն կազմակերպիչների մերկացման խնդրում նրանք ևս, ինչպես դ'Անզեն, հանիրավի պատասխանատու են համարում միայն Արդու Համիդին:

Հիմնավորապես փաստելով կոտորածների երկրորդ փուլի իրականացման ուղղությամբ իշխանությունների նախապատրաստական աշխատանքները, որոնք հաջորդել են սուլթանական հեղաշրջման ճնշմանը, նրանք, այդուհանդեռ, շրջանցում են իշխանության դեկն իրենց ձեռքում արդեն միահեծանորեն կենտրոնացրած երիտրուքների պարագլուխների՝ իրքի իրադարձության կազմակերպիչների կրած պատասխանատվությունը: Այսպիսով, ընդունելով, որ կիլիկիահայության բնաշխջման սանձազերծումը տեղի է ունեցել «պաշտոնապես»՝ նրանք, այդուհանդեռ, դրա պատասխանատվությունը բարդում են, ի վերջո, ոչ թե իշխանությունը սուլթանական հեղաշրջման ճնշումից հետո գրաված քաղաքական նոր ուժերի, այլ միայն սուլթանի համախոհների՝ օսմանյան տեղական պաշտոնյաների և «հետադիմության» վրա՝ նկատի ունենալով, հավանաբար, դիրքերը վերջնականապես գիշած սուլթանական վարչակարգի կողմնակիցներին: Ի դեպ, Վեսիեի սակավաթիվ մեկնարանությունները վկայում են, որ այս հարցում նրա դիրքորոշումն ամբողջությամբ համահունչ է նրա եվրոպացի զրուցակիցների տեսակետներին:

Քննարկվող ժամանակաշրջանում 1909 թ. Լիոնում անսորորագիր լուս է ընծայվել «Աղանայի կոտորածները և մեր միսիոներները: Ականատեսների պատմություն» գրքով,<sup>4</sup> որի հեղինակը միսիոներ է, և ըստ այդմ՝ կոտորածները Կիլիկիայում գերադասում է մեկնարանել հոգևորականներին խիստ բնորոշ հայեցակարգային դիրքերից, այն է՝ իրքն մահմեղականների և քրիստոնյաների միջև առկա կրոնական հակամարտությամբ պայմանավորված՝ քրիստոնեության դեմ ուղղված իրադարձություն:

1910-1918 թթ., կիլիկիահայության կոտորածներին հաջորդած տարիներից մինչև երիտրուքների իշխանության տապալումը, կիլիկյան կոտորածների պատմությունը ֆրանսիացի պատմաբանները այլևս հավուր պատշաճի չեն ուսումնասիրել: Փոխարենը՝ չսորանալով իրադարձության պատմությանն առնչվող մանրամասների մեջ, նրանք բավարարվել են 1909 թ. կոտորածների՝ ընդհանուր բնույթի գնահատականներով: Ըստ Էւլյան, նրանց գերակշիռ մասը, ինչպես և նախորդ հեղինակներն անկարող են եղել բացահայտել թե՛ կոտորածների պատճառները և թե՛ դրանց իրական կազմակերպիչներին՝ երիտրուքներին:

Պ. Լոլին, Ռ. Մոլենը, Ժ. Սամնեն և Ի. Գորլեն կիլիկյան կոտորածները մեկնարանում են բացառապես հայերի և մահմեղականների դավանանքների զանազանության հենքի վրա:<sup>5</sup>

4 Les massacres d'Adana et nos missionnaires. Récit de témoins, Lyon, 1909.

5 Louis P., Essai sur la Révolution turque // « Mercure de France », 16 mai 1909, N 286, p. 240 ; Moulin R.,

## Վարուժան Պողոսյան

Այլք ջանում են բացահայտել 1909 թ. կոտորածների կազմակերպիչներին. եթե Ա. Սարուն, տուրք տալրվ ամիսարկի ծայրահեղությունների, դրանց պատասխանատու է համարում բացառապես համիլյան վարչակարգը,<sup>6</sup> ապա կոմս դր Լանդեմոնը և Լյուդովիկոս դր Կոնտանտինը հայկական կոտորածների պատասխանատվությունը բարդում են միմիայն երիտրուրքերի վրա, ինչը ևս միակողմանի մոտեցման հետևանք է<sup>7</sup>: Նշված հեղինակների թվում առավել ընդգրկուն մոտեցում է ցուցաբերել Ի. Պոլը՝ 1909 թ. հայկական ջարդերի պատասխանատուների շարքում անուղղակիորեն դասելով թե՛ սուլթանին և թե՛ երիտրուրքերին:<sup>8</sup>

Առաջին աշխարհամարտի բռնկմանը հաջորդած ժամանակաշրջանում ֆրանսիացի պատմաբանների գնահատականները կրել են ակնհայտ փոփոխություններ: 1914 թ. հետո հանդես եկած մի շարք հեղինակներ՝ Է. Դոմերգը, Ժ. Բրիկոն, Ռ. Պինոն, Ա. Բարբին, Ֆ. Մակերը հարցը քննարկում են կիլիկիահայության ոչնչացման պատասխանատվությունը միայն երիտրուրքերին վերագրելու դիրքերից՝ շրջանցելով նախկին վարչակարգի դերին և մասնակցության առնչվող հանգամանքները:<sup>9</sup> Այս խնդրում հայեցակարգային նման հստակ դիրքորոշման որդեգրումը պայմանավորված է Գերմանիայի և նրա դաշնակից Օսմանյան կայսրություն դեմ Ֆրանսիայի՝ պատերազմի մեջ ընդգրկմամբ: Այս իսկ պատճառով ֆրանսիացի հեղինակները շահագրգռություն են դրսուրել նաև այս միջոցով վարկարեկելու ֆրանսիայի գլխավոր ախտյանի դաշնակցին:

Նշենք նաև, որ պատերազմյան ժամանակաշրջանում 1909 թ. կոտորածների պատմությունը քննարկած հեղինակներից Է. Դոմերգը, Ռ. Պինոնը և Ա. Բարբին կիլիկիահայության ոչնչացումը համարում են Հայոց ցեղասպանության զործներացի բաղկացուցիչ մաս,<sup>10</sup> ինչը մենք համարում ենք նրանց աշխատությունների անժամտելի արժանիքը:<sup>11</sup>

Միաժամանակ, վերոնշյալ ֆրանսիացի հեղինակներից ունաց աշխատություններում հիմնավորվում են ցեղասպանության՝ իրք երևույթի ժամանակակից մասնագետների առաջարկած մի շարք էական հայեցակարգային դրույթների՝ պետական քաղաքականության, կանխամտածվածության առկայությունը, 1909 թ. կիլիկիահայության բնաջնջման պարագային միանգամայն բնորոշ լինելու անառարկելի փաստը:

1920-ական թվականների սկզբից ի վեր Ֆրանսիայում մարում է հետաքրքրությունը Հայոց ցեղասպանության պատմության նկատմամբ, քանի 1923 թվականից թուրքիայում պետական քաղաքականության մակարդակով Հայոց ցեղասպանության փաստը շրջանցվել է լուրջամբ: Այդ իսկ պատճառով արևմտյան կապիտալիստական մեծ տերությունները, ենելով իրենց ռազմավարական շահերից, շահագրգռություն են հանդիս բերել թուրքիային Խորհրդային Միությանը հակադրելու հարցում և, հետևաբար, թուրքական

Force et faiblesse de la Jeune Turquie, Paris, 1910, p. 26-28 ; Samné G. & Goblet Y.M., La vie politique orientale en 1909, Paris, 1910, p. 79.

6 Sarrou A., La Jeune-Turquie et la Révolution, Paris-Nancy, 1912, p. 90.

7 Landemont c[om]pte de, L'Europe et la politique orientale, 1878-1912, Paris, 1912, p. 279 ; Contenson L. de, Les réformes en Turquie d'Asie. La question arménienne. La question syrienne. Deuxième édition, Paris, 1913, p. 35.

8 Paul I., La rénovation de l'Empire ottoman. Affaires de Turquie, Paris, 1909 p. 268.

9 Doumergue E., L'Arménie. Les massacres et la question d'Orient. Conférence, études et documents, Paris, 1916, p. 24 ; Bricaud J., L'Arménie qui agonise, Paris, 1916, p. 9 ; Pinon R., La suppression des Arméniens. Méthode allemande-travail turc, Paris, 1916, p. 16 ; Barby H., Au pays de l'épouvanter. L'Arménie martyre. Préface de M. Paul Deschanel, Paris, 1917, p. 13 ; Macler F., Autour de l'Arménie, Paris, 1917, p. 286-287.

10 Doumergue E., նշվ. աշխ., 24; Pinon R., նշվ. աշխ., էջ 16; Barby H., նշվ. աշխ., էջ 13:

11 1909-1918 թթ. ֆրանսիացի հեղինակների մասին մանրամասն տես՝ Պոլոսյան Վ., 1909 թ. հայկական կոտորածները Կիլիկիայում ֆրանսիական պատմագրության գնահատմամբ, Եր., 2009:

կառավարող շրջանակներին հաճոյանալու նպատակով մոռացության են մատնել Հայոց ցեղասպանությունը:<sup>12</sup> Տասնամյակներ շարունակ ստվերում է մնամ նաև 1909 թ. կիլիլյան կոտորածների պատմությունը:

Հայոց ցեղասպանության պատմության նկատմամբ հետաքրքրությունը Ֆրանսիայում կրկին աճում է միայն 1960-ական թվականների կեսից՝ կապված Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի հետ: Ուսումնասիրողներն ուշադրությունը քննուում են զլավորապես 1915 թ. Մեծ եղեռնի պատմության հիմնահարցերի վրա: Կիլիկիահայության՝ 1909 թ. կոտորածների պատմության գիտական ուսումնասիրությունը Ֆրանսիայում մինչև XX դարի ավարտը հասուկ ուսումնասիրության նյութ չի դառնում:<sup>13</sup> Այդուհանդերձ, 1970-ական թվականներից տարբեր պատմաբաններ Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված ուսումնասիրություններում, թեկողի թուցիկ, արժնորում են նաև 1909 թ. կոտորածների պատմությունը: Ըստ այդմ իմաստ ունի ստորև անդրադառնալ միայն նրանց հայեցակարգային մնացումներին:

Ֆրանսիացի անվանի պատմաբան Ի. Տերնոնը 1977 թ. տարակուում է էական մի հիմնահարցի շուրջ՝ արդյո՞ք 1909 թ. կոտորածները հարկ է զնահատել իրեն համիլյան վարչակարգի ավանդական քաղաքականության վերջին դրսուրում, թե՝ 1915 թ. ցեղասպանության նախերգանք:<sup>14</sup> Ավելի ուշ նրա հայացքներն այս հարցում բարեշրջվել են. ոչ հետավոր անցյալում կիլիկիահայության բնաջնջումը նաև բնորոշել է իրեն «ցեղասպանական կոտորած»,<sup>15</sup> որով նկատի ուներ մի «միտում, հայտանիշների ամբողջություն, որոնք հիմք են տախս երկյուղելու ցեղասպանության իրականացումից»:<sup>16</sup>

Տողերիս հեղինակն ի սկզբանե «ցեղասպանական կոտորած» տերմինին գիտական կարևորություն չի տվել, քանզի այն առաջադրած և որդեգրած հեղինակները, անկախ այս կապակցությամբ ամբողջությամբ չհամընկնող մեկնաբանությունների հանգամանքից, ըստ Էլոյչան, այս կամ այն իրադարձությունը՝ իրեն ցեղասպանություն բնութագրում են՝ ենթով զոհերի սահմանափակ թվաքանակից, ինչը չի դասվում ցեղասպանության՝ իրեն երևույթի բնորոշիչների շարքը: Վերանայելով իր մնացումը՝ Ի. Տերնոնը վերջերս, փաստորեն, իր տարակուսանքը է հայտնել «ցեղասպանական կոտորած» արտահայտությունն օգտագործելու նպատակահարմարության շուրջ՝ այն անվանելով «խոսափողական» (dérobade),<sup>17</sup> և ըստ այդմ 1909 թ. կիլիլյան կոտորածներին տվել է փոքր-ինչ այլ զնահատական: «Ցեղասպանային բնույթը ունեցող բռնությունների շարքում Աղանայի կոտորածները հասում են նոր հարթություն»<sup>18</sup> (ընդգծումը մերն է – Վ. Պ.), այն է՝ դուրս են գալիս սովորական սահմանից:

Կեր Մուրադյանի հայացքները փոփոխություն են կրել. թեև իր տարբեր աշխատություններում նա 1909 թ. իրադարձությունները բնորոշում է սույն որպես կոտորած,<sup>19</sup> այ-

12 Margossian N., L'avant et l'après du génocide des Arméniens.— «Գիտության զլորուս», Եր., 2005, h. 5, էջ 44-45:

13 Միայն 1999 թ. լույս ընծայվեց այս հարցի պատմությանը նվիրված առաջին մենագրությունը. Kévorikian R.H., Les massacres de Cilicie d'avril 1909.— La Cilicie (1909-1921). Des massacres d'Adana au mandat français. Volume préparé par Raymond H. Kévorikian, Paris, 1999.

14 Ternon Y., Les Arméniens. Histoire d'un génocide, Paris, 1977, p. 174.

15 Ternon Y., L'État criminel. Les génocides au XX<sup>e</sup> siècle, Paris, 1995, p. 183.

16 Նոյն տեղում, էջ 235:

17 Stéphane Ternon Y., Guerres et génocides au XX<sup>e</sup> siècle. Architecture de la violence en masse, Paris, 2007, p. 12, 87:

18 Նոյն տեղում, էջ 114:

19 Mouradian C., L'Arménie, Paris, 1996. p. 53 (2<sup>e</sup> éd.: Paris, 2002, p. 56); *idem* : La question d'Orient où la sanglante agonie de l'homme malade // « Revue d'histoire de la Shoah ». Le monde juif, N 177-178, janvier-

## Վարուժան Պողոսյան

դուհանդերձ, Ա. Դաստակյանի հետ մեկտեղ հրատարակած գիտահանրամատչելի գրքովում դրանք դիտում է իրքի «ցեղասպանական գործնթացի» բաղկացուցիչ մաս, որը սկիզբ է առել 1894-1896 թթ. կոտորածների սանձազերծմամբ:<sup>20</sup>

Ա. Կրիկորյանը և Ա. Ասոն 1909 թ. կոտորածները բնորոշում են իրքի Հայոց ցեղասպանության նախերգանը:<sup>21</sup> Ըստ Էռության, միևնույն դիրքերից են հարցը մեկնարանում Ա. Տեր-Մինասյանը և Հ. Պետրոսյանը, որոնք կիմիկյան կոտորածները բնութագրում են իրքի 1915 թ. ցեղասպանության նախատիպ:<sup>22</sup>

Ի տարրերություն նրանց՝ Ժ.-Պ. Ավեմը և Ռ. Գևորգյանը սահմանափակվում են իրադարձությունը սուկ իրքի կոտորածներ բնորոշելով:<sup>23</sup> Ռ. Գևորգյանի կարծիքով՝ «հայ ժողովրդի ֆիզիկական բնաշնչումը... մտահղացվել է իրքի թուրքական ազգային պետության կառուցման անհրաժեշտ նախապայման»,<sup>24</sup> ուստի Հայոց ցեղասպանությունը նա պարփակում է 1915-1916 թթ. սահմանելուում: 1909 թ. կիմիկյահայության կոտորածների պատասխանատվությունը նա բարդում է երիտրոլիքերի վրա՝ միաժամանակ ի դեր բերելով սովորական վարչակարգի ներկայացուցիչների դերը, ինչը վկայում է այս խիստ էական խնդրում նրա ցուցաբերած ընդգրկության մոտեցման մասին: Ժ.-Մ. Կարզուն ևս իրադարձությունը բնորոշում է իրքի կոտորած, սակայն, ի տարրերություն Ռ. Գևորգյանի, կիմիկյան կոտորածների պատասխանառու է համարում թուրքերին ընդհանուրացելու, առանց մանրամասնելու, թե քաղաքական ինչ ուժերի մասին է խոսը:<sup>25</sup>

1890-ական թվականներին սկզբնավորված Հայոց ցեղասպանության փաստը ժխտող ուղղության դրոշակակիրը Ֆրանսիայում XX դարի վերջին քառորդում Պ. Ա. Սովետը է, որը 1909 թ. կոտորածների հիմնախնդիրները լուսաբանում է իր թուրք և այլազգի նախորդների դիրքորոշմանը համահուն՝ սուսկ կարծեցյալ հայկական ապստամբության ճնշման անհրաժեշտության հակագիտական հարթության վրա՝<sup>26</sup> չառաջադրելով, ի դեպ, որևէ նոր կամ ինքնատիպ մեկնարանություն:

Կիմիկյան կոտորածների պատմության մասին հպանցիկ հիշատակում է ժխտողական ուղղությանը բողարկված ձևով տուրք տվող հայտնի թուրքագետ Ֆ. Ժորժենը: Ի տարրերություն Սովետի՝ նա փաստում է 1909 թ. մարտի 31-ի հեղաշրջման հետևանքով գավառներում տեղի ունեցած «արյունալի խովությունները», ինչպես նաև հայկական կոտորածները (ի դեպ, միայն Աղանայում): Էականը, սակայն, կոտորածների աշխարհագրական շրջանակների սահմանափակումը չէ: Հեղինակի խորամանկ մարտավարության իմաստը հանգում է, ի վերջո, կիմիկյահայության կոտորածների պատասխանատուների բացահայտման շրջանցմանը: Ժորժենը ոչ միայն չի հիշատակում երիտրոլիքերի՝ իրքի կոտորածների կազմակերպիչների և դեկավարների դերի մասին, այլև, ըստ Էռության, նոյնիսկ Արդու Համիդին անվարան գերծ է պահում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իրադարձությունների, այդ թվում՝ Կոստանդնուպոլսում իրականացված պետական

août 2003. Ailleurs, hier, autrement : connaissance et reconnaissance du génocide des Arméniens, p. 81.

20 Dastakian A., Mouradian C., 100 réponses sur ... Le génocide des Arméniens, Clamecy, 2005, p. 13.

21 Krikorian A., Dictionnaire de la Cause arménienne, Créteil, 2002, p. 15, 22 ; Asso A., Le cantique des larmes. Arménie, 1915. Paroles des rescapés du génocide, Paris, 2005, p. 27.

22 Ter-Minassian A., 1918-1920, La République d'Arménie, 2006, p. 12 ; Bedrossian H.G., Préface // Duckett Ferriman F.Z., Les Jeunes-Turcs et la vérité sur l'Holocauste d'Adana en Asie Mineure en avril 1909, Chamigny, 2008, p. 8.

23 Alem J.-P., L'Arménie, Paris, 1959, p. 54 ; Kévorkian R.H., Le génocide des Arméniens, p. 10.

24 Kévorkian R.H., Le génocide des Arméniens, p. 9.

25 Carzou J.-M., Un génocide exemplaire. Arménie 1915, Paris, 1975, p. 93, 95.

26 Moser P.A., Arméniens, où est la réalité ? Saint-Aquilin-de-Pacy, 1980, p. 58-61.

հեղաշրջման անհաջող փորձի պատասխանատվությունից, ինչը միանգամայն բնորոշ է օսմանյան գահակալին առհասարակ քարեհած լույսի ներքո ներկայացնելու՝ զիտակցարար որդեգրած նրա հայեցակարգին։ Արդյունքում՝ Ժորժենոն անուղղակիորեն ժխտում է «քաղում հազարավոր հայերի կրտսերածների» իրականացումը Կիլիկիայում պետական քաղաքականության մակարդակով։<sup>27</sup>

Փխարենը՝ ժխտողական ուղղությանը հարող այլ պատմաբաններ գերադասում են իրադարձության մասին պահպանել լուրջուն։<sup>28</sup> Թեպես գործադրած շանքերին՝ նրանց աշխատանքները չունեն լուրջ տեսակարար կշիռ։

Մեր ուրվագծած, անկասկած, խիստ համառոտ ետնախորքի վրա, այդուհանդերձ, ակնհայտ է, որ ֆրանսիացի ժամանակակից պատմաբանները 1909 թ. կիլիկյան կոտորածները չեն համարում իրքն Հայոց ցեղասպանության գործընթացի բաղկացուցիչ մաս, ինչը պայմանավորված է իրադարձության պատմության համեմատ նրանց որդեգրած հայեցակարգային մոտեցմամբ, ըստ որի ցեղասպանությունն իրականացվել է 1915-1916 թթ.՝ Երիտրուրեթի որդեգրած թուրքիզմի գաղափարախոսության հիման վրա, ինչը մեր կողմից անբնդունելի է։

Ամփոփենք. 1909 թ. կիլիկիահայության կոտորածների պատմությունը Ֆրանսիայում, ինչպես և Հայոց ցեղասպանության ժամանակակից պատմագրության մեջ ընդհանրապես, շարունակում է մնալ իրադարձության պատմության խորյ զավակը։

Varuzhan Poghosyan

### The 1909 massacres of Cilicia in the French historiography (brief observations)

Summary

This article refers to the elucidation of the 1909 massacres of Cilicia in French historiography. The author divides the French historiographical literature into three main groups: documentary publications, works elucidating the history of the main event and researches dedicated to the history of the Ottoman Empire where the history of the massacres of Cilicia was interpreted to some extent. The author concludes that the history of the 1909 massacres of the Armenians in Cilicia, in general, remains the step-child of the history in France as well as in the modern historiography of the Armenian Genocide.

27 Georgeon F., Abdülhamid II. Le sultan calife (1876-1909), Paris, 2003, p. 420. Նոյն մոտեցումն է նա ցուցաբերել նաև դեռևս 1989 թ. Ռ. Սանտրանի խմբագրությամբ լույս լմծադրված Օսմանյան կայսրության պատմության նվիրված ժողովածուում. Dumont P. et Georgeon F., La mort d'un empire (1908-1923).— Histoire de l'Empire ottoman. Sous la direction de R. Mantran, Paris, 1989, p. 583.

28 Տես օրինակ՝ Mantran R., Histoire de la Turquie, Paris, 1952 ; Garnier J.-P., La fin de l'Empire ottoman du Sultan Rouge à Mustafa Kemal, [Paris], 1973.

## ԱՏԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾՔ Եւ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՐՈՒՏԸ

Հարություն Մելիմյան

Ապրիլ 2009-ը հարիսկերորդ ամեակն է Ատանայի կոտորածին, որուն զիհ գացին Ատանայէն եւ շրջակալիքն չուրջ 30,000 հայեր: Ասիկա 1894-96 Համիտեան ջարդերէն ետք եւ Սուլթան Համիտի զահիրնկեցոյթէնէն ետք սանձազերծուած առաջին լայնածաւալ կոտորածն էր, որ տեղի ունեցաւ 1909-ի Ապրիլին: Իթթիհատականները, որոնք Յունիս 10, 1908-ին «Ազատութիւն եւ հաւասարութիւն» լօգունգներուն ներքոյ կայսրութեան ժողովուրդները ոգեւորելով տիրացած էին իշխանութեան, սկզբնական շրջանին ձեւացուցին թէ իբր իրենք հայ եւ թուրք ժողովուրդներու եղբայրութեան ջատագովն են, ինչը զայրոյթ եւ ատելութիւն յառաջացուց թուրք ծայրահեղականներու քով, որոնք ապրիլ 1909-ին կազմակերպեցին Ատանայի կոտորածը: Մինչեւ ամսուան վերջը, զոհուածներուն թիւ հասաւ 30,000-ի, իսկ ինչո՞ւ յատկապէս Ատանան ընտրուեցաւ անխնայ կոտորած իրազործելու որպէս վայր: Բազմազգ Ատանայի մէջ, որ կողը-կողը կապրէին՝ Հայեր, Թուրքեր, Հոյներ, Մակերտչունացիներ եւալին: Հայերը ունիին ծաղկուն գիտեր եւ բարգաւաճող տնտեսութիւն, որը նախանձի եւ ատելութեան առիթ հանդիսացաւ տեղույն թուրք ազգայնամոլներուն քով: Ատելութեան զիհ դարձաւ ոչ միայն հայ ազգաբնակչութիւնը, այլ անոնց ինչքն ու ունեցուածքը:

Հայերս կը սպաննուիին ամէն ուր՝ գիտերուն, քաղաքներուն, իրենց արտերուն մէջ: Գործնարար շատ յատակ էր թուրքերուն համար. հայերուն անուանացանկը գտնել, սպաննել բոլորը, դիակները հաշուել, գտնել պակսող անձերը, զանոնք եւս ոչնչացնել, անունները ջնջել ցանկէն, այրել փաստաթուղթերն ու տիրանալ անոնց ինչքերուն: Թուրքերը նոյնիսկ ոչնչացուցած էին հայերուն բոլոր դրամատնային փաստաթուղթերը, որպէս զի ջարդելին ետք ոչ ոք կարենար իր իրաւունքը պահանջել: Այսպիսով՝ զրկելով հայութիւնը իր ամէն տեսակի սեփականութիւններէն եւ ձերբազասուելով անոնցմէ:

Ատանայի մէջ կատարուած վայրագութիւններուն դէմ պայքարիլը անկարելի եղաւ փոքր գիտերու մէջ, որ հայերը վայրագօրէն մորթուեցան: Երկու զրեթէ ամրողութեամբ հայաբնակ գիտաքաղաքներ՝ Հաճին ու Տէօրթէօլը միայն կրցան պայքարի եւ խուսափի անտարակոյն կոտորածէն: Անոնց տասը հազար հայ բնակչութիւնը հերոսարար կրցաւ հեռու պահել եօթ հազար թուրք գիտեալ խուժանին, որոնք շրջապատած էին շրջանն ու անջատած ջուրի մատակարումը:

Ատանայի կոտորածը ի յայտ թերաւ Իթթիհատականներուն իսկական դիմագիծը, որ ազատութիւն, արդարութիւն, եղբայրութիւն լօգունգներուն տակ բացայատուեցաւ Օսմանացիներու իսկական թշնամական կեցուածքը քրիստոնէական փոքրամասնութիւններու եւ անոնց լայնամիտ ու յառաջինական գաղափարներուն հանդէպ: Կայսրութեան մէջ հակառակ սահմանադրական կարգի վերականգնման, վայրագութիւններու որուականը վերստին յայտնուեցաւ, այս անգամ պետական ուժի կառուցուած տեսքով:

Իթթիհատ Վէ Թարաքքէ (Միութիւն եւ Յառաջդիմութիւն) երիտասարդ Թուրքերու վարչակազմը թէեւ առ երեսոյթ ազատութիւն, հաւասարութիւն եւ եղբայրութիւն կը քարոզէր, սակայն ըստ էութեան ան փոքրամասնութիւններու հակառակ էր: Երիտասարդ Թուրքերու ծածուկ նպատակն էր ձուլել ոչ-իսլամ տարրերը եւ համաթրքական հսկայ կայսրութիւն մը ստեղծել: Այդ պատճառով էր որ երբ 1909-ի Ապրիլ 1-ին թուրքերու առաջին յարձակումը սկսաւ Ատանայի հայկական թաղերուն վրայ, թուրք ոստիկանութիւնը միացաւ խուժանին եւ մասնակցեցաւ ջարդերուն: Անտարակոյն, Իթթիհատականներ լոելեան իրենց հայ-

նութիւնը տուած էին Աստանայի Կոտորածին նկատմամբ: Երեւոյթները փրկելու համար էր, որ անոնք դատապարտեցին պատահած աղետը: Եթի հայ եկեղեցական և աշխարհական դեկավարներ իրենց բարկութիւնը յայտնեցին և իրենց բողոքի ձայնը բարձրացուցին, անոնք ուրացան ջարդարարի դերը և հանաձայնեցան քննիչ յանձնախումբ մը նշանակել՝ ատենապետութեամբ երեսփոխան Յակոր Պապիկեանի: Պապիկեանի տեղեկագիրը դրժբախտաբար լոյս չտեսաւ, քանի որ տեղեկագիր պատրաստող հայ երեսփոխանը առաւոս մը իր ննջարանին մէջ անյատ պայմաններուն մէջ խեղդամահ գտնուեցաւ:

Աւելի ոչ, 1909 թ-ի Յուլիսի 17-ին, թորքական իշխանութիւնները հեռազիր-նամակ մը կը ստանան, ստորագրուած զանազան եկեղեցականներու կողմէ, որուն պարունակութիւնը հետեւեալն էր.

Աստանայի ու շրջակայքին մէջ, առանց հիմնաւոր պատճառներու, մարդիկ ու սեփական ստացուածքներ ահաւոր վնասի կ'ենթարկուին: Քրիստոնեաններուն հոն մնալու և ապահովութեան հարցը զինուորական դատարանի խնդիրն է: Մենք յուսահատ ենք, քանի որ ոճազործները բացարձակապէս չեն դատապարտուիր, հետեւաբար, իրենց անպատճելիութիւնը աւելի կը ոգեստրէ չարագործները: Պետութիւնը հակասակը՝ ոճազործներ կ'որսայ, որոնք իսլամ, տգես ու աղքատ զիւղացիներ են ու անոնցմէ կը պահանջէ իրենց տուած հրահանգներուն հետեւիլ և անոնք ալ անզիտակցարար ոճիրներ կը գործեն: Փոխարենը անմեղ Հայերն են, որ զրապարութեան կամ պարզապէս ինքնապաշտպանութեան արդիւնքին մէջ կը դատապարտուին: Զինուորական դատարանը դժբախտաբար յանցաւոր կը գտնէ զանոնք: Այս պարագային որո՞ւ կրնանք դիմել ու պատմել մեր վատ կացութեան մասին: ինչպէս կրնանք մեր անօգնական ժողովուրդին հանգիստը ապահովել:

Ի սէր Ասսուծոյ, խոճացէ՛ք:

-Սուրիոյ Կաթողիկէ Պատրիարքի ներկայացուցիչ: Գլխաւոր քահանայ՝ Հայր Ֆիլիփոս  
-Բողոքական եկեղեցական պետ՝ Համբըրսալմ

-Հայ կաթողիկէ եպիսկոպոս՝ Եպիսկոպոս Պօղոս

-Սուրիոյ Լուսաւորչական Պատրիարքի ներկայացուցիչ՝ Հայր Մանսուր

-Ցոյն Կաթողիկէ կղերական պետ՝ Հայր Իլիաս

-Հայկական եպիսկոպոսական ներկայացուցիչ՝ Հայր Արաս

-Քիլտանիներու Պատրիարքի ներկայացուցիչ՝ Հայր Ստեփան

Յունիս 17.1909



- 10 -

شودا کاره میر بروی پر عالم) ...  
سرین قدریات خود بخوبی میگیرد  
سرین قدریات بکار برداشته  
الغور علی صاحب  
بردم قولانک میگردیم  
عده قلب بطریق و کلی  
صلاده ریشه و کلیه  
القصیه ایام  
القصیه میگذرد  
الغور علی صاحب  
حیاتیم  
بردم قولانک میگردیم  
القصیه ایام  
صلاده ریشه و کلیه  
القصیه میگذرد

- **Պոլսոյ Առաջին Գեսպանը կ'ըսէ:**

Թուրքական Խորհրդարանի նախկին անդամ Զոհրապ, եւ հայոց պատրիարքարանի խառն ժողովի անդամ Մարտիկեան ինձի կուգան ըսելով թէ՝ նոյնիսկ Աստանայի 1909 թ-ի սարսափելի կոսորտածը ներուեցաւ թուրքերուն ու մեղքը իին վարչակարգին վերագրուեցաւ: Յետազայ հանգամանքները հայերուն ստիպեցին դառնօրդն զղալ իրենց դիրքահաւատութեան համար: Քիրտերը առաջուայ պէս կը բալանեն, կը թունաբարեն ու կը սպանեն անպաշտպան հայ բնակչութիւնը, իսկ թուրքերուն վարչութիւնը երկերեսանհօրդն ներկայ կըլլայ այդ բոլոր սարսափելի իրադարձութիւններուն՝ ոչ մէկ միջոցի չփակուով ատոնց առաջքը առնելու համար ... Կութանանան նոր ջարդերու մասին չարագուշակ լուրերը ...

Հայոց զաւաներուն մէջ բարենորդումներու մասին հոչակագիրը, որ հրապարակեց

Սովորական Ապսուլ Համիտ 1895 թ-ի Հոկտեմբեր 20-ին՝ Ռուսաստանի, Ֆրանսայի ու Անգլիայի ճնշման տակ, մնաց որպէս մնած տառ ...

Անկասկած, Աստանայի Կոստրովը, նախափորձը դարձաւ Երիտասարդ թուրքերու համարդուրանական քաղաքականութեան: Քանի մը տարի ետք՝ հայկական Մեծ Եղեռնը, լրումը պիտի ըլլար իրենց կանխամտածած ցեղասպանութեան, որով կը յուսային լուծել Հայկական հարցը:

Դժբախտաբար, մեր եկեղեցական եւ աշխարհական ղեկավարութեան մեծամասնութիւնը միամտաբար խարուեցաւ կեղծաւոր եւ նենգամիտ Իթթիհատական Երիտասարդ թուրքերէն եւ չլրցան նախատեսել վերահս վտանգը:

• Արևմտահայոց Պատրիարք Յովհաննու Արքեպիսկոպոս Արշարունին՝ Կաթողիկոս Գէորգ Սուրբնեանին:

Կը սպասէինք ազգութին եւ լի յոյսով, որ Օսմաննեան սահմանադրութեան հոչակումն ետքը, որ քանի հայոց արեամբ ողողուած բռնապետական նախորդ դրութիւնը, այլևս վերջ գտնեն այդ անլուր չարիքները, սակայն, ցաւոք սրտի, կը հարկադրուինք հաստատելու, որ հայոց նկատմամբ որեւէ նպաստաւոր փոփոխութիւն չեղաւ, եւ Աստանայի ահաւոր կոստրածով սկսաւ այնպիսի նոր շրջան մը, ուր անպակաս եղան ամէնուրեք նորանոր չարագործութիւններ ...

Ըստ սովորականին, դարձեալ խոստումներ եղան ազդու հրամաններ ուղղելու գաւառական իշխանութեանց, պատժելու եւ զայելու չարագործները, հրամաններ, զորս փութացինք հաղորդել մեր առաջնորդարաններուն, եւ սակայն ի պատասխան Մուշկին, Բաղեշէն եւ Սղերդէն գումար հեռագիրներ հասաւ մեզի, նոր ի նորոյ ծանուցող, թէ ոչ մէկ գործադրութիւն տեղի ունեցած է, թէ վիճակը կը շարունակուի եւ թէ ժողովուրդը նոյնիսկ ընդհանուր կոստրածի վտանգին մատնուած է:

Երբ Թուրք խուժանը հայկական թաղերու վրայ յարձակում գործեց 1909-ի Ապրիլ 1 թուականին, հայերը ինքնապաշտպանութեան դիմեցին: Այդ ատեն, Երիտասարդ Թուրքերու կառավարութիւնը անզիշիական հիպատոսին միջնորդութիւնը խնդրեց որ, խռովութիւններուն վերջ դնելու համար, հայերը իրենց գէնքերը յանձնեն կառավարութեան: Հիւպատոսը իր տխուր առաքելութիւնը կատարեց եւ հայեր յանձնեցին իրենց գէնքերը:

Թքարկան չարդերը շարունակուեցան եւ Երիտասարդ Թուրքերու կառավարութիւնը գործնապէս չմիջանուեց: Արդինքը ահաւոր եւ եկեղեցական եղաւ: Աստանայի նահանգին մէջ տարրեր քաղաքներու, գիւղերու եւ առաններու մէջ մօտաւրապէս 30,000 անմեղ հայեր զոհ գացին: Եկեղեցիներ, դպրոցներ, բարեսիրական եւ մշակութային կեդրոններ քանդուեցան: Բազմաթիւ որբեր եւ որբեւայրիներ անպատսպար մնացին:

• «Թիֆլիսեան Թէրթիկ»-ը իր 1909թ-ի 93-րդ թիվին մէջ կը հաղորդէ.

Կ. Պոլիս, 26 Ապրիլ, 1909 թ.

Թէրթերը Աստանայի, Անտիոքի եւ Սուրբոյ զանազան վայրերու մէջ եղած սարսափելի կոստրածներու մանրամասն նկարագրութիւնները կու տան: Ըստ հաշուառումներուն, 35,000-էն աւելի մարդ սպաննուած է եւ տասնեակներով զիւղեր այրած ու աւերուած են: Աստանան բոլորութին ոչնչացած է ... վարչական կեդրոն, բամպակի ու հացի աշխոյժ առեւտորի քաղաք Աստանան...

1909 թ-ի Ապրիլ 1-ի երեկոյեան, Աստանայի փողոցներուն մէջ խւամները խիստ անբարեւացակամ ու կրուարար տրամադրութիւններ կը դրսեւուեն: Թուրքական թաղերէ պատահաբար անցնող հայեր, կը սպաննուին ... լուրը կայծակի արագութեամբ կը տարածուի եւ հայերը արագ կը զցեն իրենց խանույթներն ու արհեստանոցները: Մարդիկ կը պատրաստուին իրենց տուններուն մէջ: Առաւոտ կանուխ կը սկսի խուժանին յարձակումը զոց

## Հարություն Սելիմյան

խանութներուն վրայ:

Գործողութիւնները ամվլիկա միայն հայերու խանութներն է որ կոչնչացնեն, յատակօրէն զանց առնելով խլամներուն ունեցուածքը:

Խանութներէն՝ կարգը տուններուն կը հասնի ... կը յարձակին կացիններով, մահակներով ու զենքերով և կը կոսորեն մոլուցրով, առանց խնամելու: Եփոթած ու խելակորոյս հայերը պաշտպանութեան կը դիմեն իրենց նտերիմ խլամներուն, նաեւ յատուկէն երոպացիներու ... անոնք, որոնք զենք ունին, մոռնալով խանութ ու սեփականութիւն, հայկական թաղամասերու մէջ դիրքեր կը գրաւեն ու ինքնապաշտպանութեան կանցնին: Յաջորդ օրը ասոնց վիճակը կը վատքարանայ դրացի հայկական գիղերն ու ազարակներուն աերումով, որիկ 5-7 հազար կին ու երեխայ կու զան քաղաք՝ Աստան:

1909 -ին, Կիպրոս ընտանիքը ականատեսը կ'ըլլայ Թուրքիոյ մէջ տեղի ունեցած Հայկական կոսորածներուն, որոնց մասին աւելի ուշ Հելէն Կիպրոս, Ամերիկացի հեղինակ ու թղթակից, 1917-ին գիրք մը կը գրէ Թարսուսի Կարմիր Գորգերը խորագոռվ, որ իր նամակներու հաւաքածոն է, ուր մանրամասն կը նկարագրէ այդ օրերու դէպքերը: «Կրակոցները սկսան ու շարունակուեցան ամբողջ օրը: Հրացանաձգութեան ձայներուն հետ միատեղ, կը լսուին մեռնողներուն աղաղակները:

Շատեր վիրաւորուած էին. մեծ մասը իրենց ամուսիններն ու երեխանները կը փնտրէին ու չին գտներ: Տղամարդիկ իրենց տկար կիմները կրնակներուն վրայ շալկած, հոգնած երեխաններ չափահասներուն հետ դժուարութեամբ կը փորձէին քայլ պահել: Խումբերը լեցուն էին տարեցներով, հիանդներով, անդամալոյներով ու անօգնականներով, որոնք այս բոլորով հանդերձ, Աստուածատուր ուժով մը օժտուած ըլլային կարծես:»

Երեք օր ու գիշեր կոսորածն ու աւերածութիւնը քաղաքը դժխային խառնարանի կը վերածեն: Կոսորած, իրդեհ, թալան, կին-երեխայ, մեծ ու պատիկ ... մղձաւանջը կը շարունակուի, իսկ իշխանութիւններուն միակ օգնութիւնը կ'ըլլայ սպաննուած հայերուն դիակները սայլերուն վրայ բարձրելն ու գետը թափելը...

Ապրիլի 14-ին, իրածգութիւն կը սկսի հայկական թաղամասի բոլոր կողմերէն: Հրդեհի խոշոր կրակէ լեզուները կը լափեն քաղաքը, իսկ տեղական դեկալարութիւնը հրշէներու միջոցաւ ոչ թէ ջուր, այլ նավթ կը լեցներ քարաշէն տուններուն, եկեղեցիներուն ու դպրոցներուն շորջ ...

Քաղաքը կաներուի, կը կողոպսուի, բնակիչները կը սպաննուին ... Աստանայի կոսորածը ազդանշան էր կարծես, որ կերպունէն տարածուեցաւ ու հասաւ զատարին խորերը... Աստանա քաղաքին մէջ իրոյ ճարակ դարձած են 1190 տուն, 6 եկեղեցի և հայկական մեծ շուկան:

Աստանայի Կոսորածը մեծ կորուստներ պատճառեց Կիլիկիոյ բովանդակ հայութեան: Հայ երեք յարանուանութիւններն ալ մեծ կորուստներ ունեցան: Բայց բաղդատարար աւելի մեծ եղան Կիլիկիոյ շրջանի Հայ Աւետարանականութեան կորուստը, Կիլիկիոյ Հայ Աւետարանական եկեղեցիները, հաստատութիւնները եւ կազմակերպութիւնները կորսնցուցին իրենց հոգեւոր եւ աշխարհական դեկավարներ 50 առ հարիւրը: Օսմանիէ քաղաքին մէջ, Հայ Աւետարանական եկեղեցւոյ մէջ Ապրիլ 14-ի արշալոյսին իրկիզուեցան 7 հոգեւոր հովիսներ եւ 4 աշխարհական դեկավարներ: Երեք այլ վայրերու մէջ անգթօրէն սպաննուեցան 13 այլ հովիսներ եւ 9 այր եւ կին եկեղեցական պատուիրակներ եւ երկու ամերիկացի միսիոնարներ:

Այս աղէտը կը զուգադիպէր Կիլիկիոյ Հայ Աւետարանական Միութեան 1909-ի տարեկան համաժողովին: Նախապէս որոշուած էր այս համաժողովը Մարաշ գումարել Յունիս ամսուն վերջաւորութեան: Բայց որոշ նկատումներով, ժողովին վայրն ու թուականը

փոխուեցաւ: Որոշուեցաւ համաժողովը գումարել Աստանա քաղաքին մէջ 1909-ի Ապրիլի կիսուն:

Կիլիկիոյ տարբեր քաղաքներէն ճամբայ ելած էին պատուիրակները դէպի Աստանա: Այնթապի եւ Մարաշի կողմներէն մեկնող կարաւանները Ապրիլ 13-ի երկեղեան, Օսմանիյէի մէջ իրար հանդիպեցան այն յոյսով որ յաջորդ օրը ճամբայ պիտի ելիկին դէպի իրենց ժամադրավայրը: Բայց այդ քստմնելի զիշերը, թորք ոճրագործներու ոհմակը յարձակեցաւ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ շենքին վրայ, որ օթևանած էին Միութեան պատուիրակներու մէկ մասը, եւ կրակ տալով շենքին ամեն կողմներէն, իրկիզեց անմեղ անձեր: Միս քաղաքներէ ճանապարհի վրայ գտնուող Եկեղեցական եւ աշխարհական պատուիրակները անխողորդն խոշտանքուեցան ու սպաննուեցան երեք այլ վայրերու մէջ՝ Զայզը Աղզը, Սայ Կիչիս եւ Համիտիլ:

- Մէջքերենք Կարապետ Գ. Տաղեանի 1917-ի Նյու Եօրքի Ալֆրէտ Համալսարանի մէջ տուած դասախոսութենէն:

«Երբ կը շրջէի երկրի այն մասին մէջ, որ ջարդերը տեղի ունեցած էին, շատ մը մարդկային կմախքներ տեսայ հոս ու հոս: Գիտերէն մէկուն մէջ, կանգ առի հանգիստի համար, ու թշենիի մը տակ նատեցայ ... դիմացս այրած բողոքական Եկեղեցի մըն էր, որ տապը կողերականներ համաժողովի մեկնուուի իրենց ճամբուն վրայ, նոյնպէս այրած էին: Համալսարանի դասախոսներէն մին ալ այդ խոմքին մէջ էր, զիս տարին այն հայկական Եկեղեցին, որ 250 մարդ այրած էին, պատերուն վրայ դեռ կարելի էր մարդկային ճարպին հետքերը տեսնել»:

- Ստորեւ կը գտնէք նահատակներուն անունները, պաշտօնավայրերը եւ իրենց նահատակութեան վայրը:

#### **Օսմանիյէի մէջ նահատակ Հովհիներն էին:**

Փրոֆ. Սարգսի Լեւոնեան - Այնթապի Կեդր. Թուրքիոյ Գոլէճին ոստոցապետը, Վեր. Կիրակոս Ժամկոչեան- Հովհի՝ Սեւերեկի Հայ Աւետ. Եկեղեցւոյ, Վեր. Նազարէթ Հեղինեան- Հովհի՝ Մարաշի Հայ Աւետ. Երրորդ Եկեղեցւոյ, Վեր. Զաքարիա Պետրոսեան- Հովհի՝ Ուրֆայի մօս Կարմուճի Հայ Աւետ. Եկեղեցւոյ, Վեր. Ներսէս Գույումճեան- Հովհի՝ Ուրֆայի Ասորի Բողոքական Եկեղեցւոյ, Վեր. Սեղրակ Էքմէքեան- Հովհի՝ Ուրֆայի Հայ Աւետ. Առաջին Եկեղեցւոյ:

#### **Չայքր Աղզը կոչուած վայրը (Օսմանիյէի եւ Համիտիյէի մէջտեղ) նահատակ Հովհիներն էին.**

Վեր. Յակոբ Գունտարճեան- Հովհի՝ Հասանպէյլի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ, Վեր. Ստեփան Յովհաննեսեան- Հովհի՝ Խառնի Հայ Աւետ. Եկեղեցւոյ, Պատ. Թագուր Յակոբեան- Հովհի՝ Պաղչէի Հայ Աւետ. Եկեղեցւոյ, Պատ. Կարապետ Քիսիկեան- Հովհի՝ Օսմանիի Հայ Աւետ. Եկեղեցւոյ:

#### **Սայ Կէչիտի մէջ նահատակուեցան.**

Պատ. Լեւոն Սողոմոնեան- Հովհի՝ Համայնքի Հայ Աւետ. Երկրորդ Եկեղեցւոյ, Պատ. Ասատոր Թօփալեան- Հովհի՝ Ֆէքէի Հայ Աւետ. Եկեղեցւոյ, Պատ. Մելիսոն Մալեան- Հովհի՝ Սիսի Հայ Աւետ. Եկեղեցւոյ, Պատ. Արտաշէս Պօյաճեան- Հովհի՝ Շարի (Կոմանա) Հայ Աւետ. Եկեղեցւոյ, Պատ. Յակոբ Ալպարեան- Հովհի՝ Կապանի Հայ Աւետ. Եկեղեցւոյ, Պատ. Կոստանդին Սիյահեան- Հովհի՝ Կարս-պազարի Հայ Աւետ. Եկեղեցւոյ,

### **Համիտիկի մէջ նահատակուեցան.**

Պատ. Մարգար Գալուստեան- Հովիլ՝ Համմիտիկի Հայ Աւետ. Եկեղեցւոյ,  
Պատ. Յովակիմ Գայաեան- Հովիլ՝ Ալպուսթանի Հայ Աւետ. Եկեղեցւոյ,

Հայ Աւետ. նահատակ հովիմերու հետ նաեւ նահատակուեցան երկու ամերիկացի միսիոնարներ՝ Վեր. Դամիկ Ռաճրը, Ատանայի շրջանի Ամերիկայի Անտարանչական կազմի ներկայացուցիչը և Վեր. Հենրի Մառլը, Հաճընի շրջանի միսիոնարը:

Օսմանեան դեկավարութիւնը բացարձակապէս հերքեց իր պատասխանատուութիւն կապուած Ատանայի մէջ կայացած Ամերիկացի երկու Միսիոնարներուն սպանննութեան հետ ու ըստ, թէ Հայերն էին որ սպանեցին Բողոքական Միսիոնարներ S.Ս. Բոներգ և Հենրի Մորը՝ « մինչ անոնք կ'օգնէին թուրք այրի կնոջ մը, իր այրուող տան կրակը մարելու:»<sup>1</sup>

Աւելի ուշ, Օսմանեան կարծիքին հակադրուեցաւ ականատեսի մը՝ Ամերիկացի քահանայ Մթիլը Թրոպիկին (Պրոբլինէն) վկայութիւնը: Ան կը նշէր, թէ Միսիոնարները սպանուեցան « Մուլումաններու ծեռով, երբ կը փորձէին կրակը մարել, որ կը սպանար արգելք հանդիսանալ իրենց առաքելութեան:»

Ըստ Էլիզապէջ Ս. Ուէպի, որ նոյնական դարրոցին կողմէ Միսիոնար մըն էր, Վիճակը ահաւոր էր: « Շէնքին մէջ կիներն ու աղջիկները առանձին ու անպաշտպան էին, մինչ դուրս դաժան ոճագործներու խումբեր, որ դանակներ ու փամփոշներ կը կրէին Հայերուն դէմ օգտագործելու համար, նաեւ ջահեր անոնց տուներուն համար: »

Բաց աստի, նահատակուեցան 13 աշխարհական պատուիրակներ (9 այր և 4 կին): Անտարակոյս, ասիկա մեծ հարուած մը եղաւ Կիլիկիոյ Հայ Անտարանական Միութեան համար, որուն դեկավարութեան կէսէն աւելին բնաշնչուեցաւ ....:

Հրաշրով վերապրող հոգեւոր առաջնորդներէն մէկն էր Վեր. Համբարձում Աշճեան (1863-1938), հովիլ՝ Ատանայի Հայ Անտարանական Եկեղեցւոյ: Ինը այն բախտաւորներէն մէկը եղաւ, որ աղջտի օրերուն զոհը չդարձաւ թուրք բարբարոսութեան: Կոտորածէն ետքն ալ թէեւ թիրախ դարձաւ յարձակումի, բայց մազապուրծ ազատւեցաւ ստոյգ մահէն: Որպէս հետահայեաց, խոհեմ և հասուն եկեղեցական դեկավար՝ Աշճեան ընտիր առաջնորդութիւն հայքայթեց մասնաւրապէս իր վերապրոց համայնքի անդամներուն և ընդհանրապէս իր տագնապող և բարոյալքուած հայ հայրենակիցներուն:

Կոտորածին յաջորդող օրերուն Պատուելի Աշճեանը մեծ դեր խաղցաւ երբ Ատանայի հոգեւոր Պետերը ժողովի մը համար համախմբեց աղէտը դիմագրաւելու նպատակով, և այսպէս հոգեւոր Պետերու մարմին մը ծնունդ առաւ Աշճեանի ատենադպրութեամբ: Ան թրակցութիւններ կը կատարէր ամէնայն խոհեմութեամբ: Ան դիպուկ նամակներ ուղարկեց օրուան Թուրքիոյ պետական դեկավարներուն ու բանակցութիւններ կատարեց պետական պաշտօնեաներու հետ:

Վերոյիշեալ միացեալ ժողովներուն հետեւանքով ծնունդ առին հետեւեալ դրական կէտերը ի նպաստ հայ ժողովուրդին:

- 1) Միջ-համալիքային գործակցութեան սքանչելի մթնոլորտ
- 2) Արդիւնարեր հայ-թուրք յարաքերութիւն
- 3) Հայ դատի հետապնդում

**1.Միջ-համալիքային գործակցութեան սքանչելի մթնոլորտ մը ստեղծուեցաւ:** Աղէտին որպէս հետեւանք, հայ համայնքները մոռցան իրար հանդէպ ունեցած իրենց ան-

հաշտութիւններն ու սերտ կապեր հաստատեցին: Ամենաշատ վնասուածը Հայ Աւետ Եկեղին էր, հետեւարար, հայ Առաքելական Եկեղեցին իր Եկեղեցաշնորհ տրամադրեց իր քոյր Եկեղեցին ազնուօրէն որը օրինակ ծառայեց փոխադարձ համագործակցութեան: Կ. Պոլսոյ հրաժարեալ պատրիարք Եղիշէ Աքք. Դուրեանի և Մեծի Տաճակ Կիլիկիոյ Կաթողիկոս S.S. Սահակ Խաչապյանի սիրոյ սերտ կապերը Վեր. Աշճեանի հետ սրտառուց օրինակներ հանդիսացան միջ- համայնքային գործակցութեան:

**2. Կոտորածէն տասը ամիսներ ետք, Ատանայի նոր կուսակալ՝ Ճեմալ Պէյր հաշտութեան ճաշկերոյթ մը կազմակերպեց (Փետրուար 5- 1910-ին) ուր Վեր. Հ. Աշճեան իր ուղերձին մէջ բառ: «Ձեր ազնիս ներողամտութիւնը հայցելով կուզեմ հետեւեալ խնդրանքը ներկայացնել: Նախ, կը խնդրեմ մեր կառավարութեան չդատապարտէք ամբողջ ազգը գործուած ոճիրին համար: Զայն գործող սակաւաթի մարդիկն են միայն մեղանոր: Երկրորդ, պիտի խնդրեի մեր խալամ հայրենակիցներէն իրենց շահը չփնտռեն ուրիշներու կորուստին մէջ: Ատանայի աղէտին պատճառով մենք քրիստոնեաներս մեծ կորուստներ արձանագրեցինք: Արդեօք մեր խալամ հայրենակիցները այս դժբախտ պատահարէն վսեմացան թէ նուաստացան: Երրորդ, մենք անկեղծօրէն այս երկիրը կը սիրենք, եւ ի սէր Աստուծոյ արդարութիւն կը պահանջենք: ... Եթէ կը սիրէք ձեր հայրենիքը, եթէ կը սիրէք ձեր Աստուծոյ, այլեւս վերջ տուէք այսպիսի վարմունքներու, եւ համերաշխորհեամբ ապրինք եւ այս հայրենիքին տկարացման պատճառ չըլլանք ... մէկ նապատակով եւ մէկ սրտով այս նուիրական հայրենիքը ամրացնենք եւ փառաւորենք, որովհետեւ միութեամբ հաստատ կը մնանք, բաժանումով կիյնանք»:**

### 3. Եկեղեցւոյ առաջնորդները պահանջեցին

- Յանցաւորներուն պատժուիլը
- Նիթական վնասից հատուցում
- Պաշտօնական յայտարարութիւն մը թէ հայերը գոհեր էին եւ ոչ յանցաւորներ:

Վերյիշեալ պահանջքները հեռագրով հաղորդուեցան Սովորանին, մեծ եպարքութեան եւ երեսփոխանական ժողովին: Այս բոլորին որպէս արդիւնք հազարաւոր ոճագործներէն պատժուեցան 50 հոգի, որպէս նիթական հատուցում կառավարութիւնը երկու առիթներով տուաւ 350,000 Օսմ. Ուսի, խսկ որպէս պաշտօնական յայտարարութիւն, մեծ եպարքու Հիսուսն Հիմի Փաշան յայտարարեց թէ հայերը Ատանայի դէպին մէջ անմեղ գոհեր էին պարզապէս:

Դժբախտաբար, Երիտրուրքեր չընդունեցին իրենց դերակատարութիւնը Ատանայի Կոտորածին մէջ: Ճուատ Պէյ Ատանա Վիլայէթի նախանգապետի նախազահութեամբ, խորհուրդի նիստ տեղի կունենայ, ուր որոշում կառնուի պատժել հայերը (1909 ապրիլի 13,) ... ջարդեր տեղի կունենան զատկէն յէտոյ, Ապրիլի 14,15,16-ին ... Ատանայի մէջ մէկ լօգունգ կը լսուք. «Սպաննել միայն հայերը»...»:

Երիտրուրք Բամայիլ Սեֆան հանդէս կուզայ հետեւեալ լիտի խօսքով. «Այն ինչ կատարուած է, դեռ անբարար է ու ամէն ինչ չէ: Մենք միայն կարձ դադար մը առած ենք, բայց դեռ կը տեսնենք, թէ ամէնը ինչով կատարտի ...»:

---

Ապրիլ 1909-էն - Ապրիլ 2009-ը հարիւր տարի ....: Այսօր հարիւր տարի ետք, մենք իրեւ համայնք եւ իրեւ ազգ՝ կանք ու կը մնանք, զոհի հոգերամութեան դուրս ելած՝ վերածնած ենք: Ատանայի Կոտորածին 100-ամեակը վերանորոգման տարեղարձ մըն է, մեր կորսուած իրաւոնքներու պահանջատիրութեան, մեր վերանորոգման, մեր կենսունակութեան եւ վերակերտման վճռականութիւնը վկայող հանգրուան մը: Միանգամայն, սոյն հա-

## Հարություն Սելիմյան

բիրամեակը անցեալէն դասեր սորվելու դիպուկ առիթ մըն է ,թէ՝ մեր ազգային կենաւկան հարցերու մէջ միամիտ եւ պատրաճախաք չըլլանք, այլ միշտ իրատես եւ հեռատես, շրջահայեաց եւ իմաստուն: Օտարներու օգնութիւնը հայցենք, բայց օտարներէն փրկութիւն չսպասենք, որովհետեւ վերջին հաշուով մեր սեփական միջոցներով միայն կրնանք տիրանալ մեր իրաւունքներուն: Ուրեմն, անհրաժեշտ է միարան ու միակամ ըլլալ: Բաւարար չէ միասնակամութեան մասին տարին օր մը կամ հազուադիպ ոգեկոչման հանդիսարեան առիթներով միայն մտածել, այլ հարկ է զայն մեր առօրեային հետ շաղկապել, միասնական ճակատով թիկունք կանգնիլ հայ դատին:

Արդ, ոգեկոչենք Աստանայի Կոտորածին 100-ամեակը, յարգանքով խոնարիինք մեր նահատակներու յիշատակին առջեւ, բայց Աստուծոյ վրատահելով, ամբողջական յանձնառութեամբ, արժեւորենք մեր ներկան եւ անյոդողոդ հաստրով քալենք դէպի ապագան:

### Օգտագործուած Աղբիւներ

«Եսլամական Զարդերուն Զոհ Կ'երթայ Հինգհազար Կեանք», Նյու Եօրք Թայմզ,  
Ապրիլ 21, 1909.

«Պրուրլինէն Մարդ մը Ականատես Կ'ըլլայ Միսիոնարի մը Սպանութեան»,  
Նյու Եօրք Թայմզ, Մայիս 2, 1909.

«Կմմ մը կը Նկարագրէ Խոռվութիւն Աստանայի Մէջ», Նյու Եօրք Թայմզ,  
Մայիս 3, 1909.

Վեր. Հ. Աշճեան. «Աստանայի Եղեռնը» Նիւ Եորք 1950, հատընտիր հասուածներ, էջ 108-112:

Տիգրան Խրլորեան, Ուկեմատեան, Պէյրութ, 1950 Հատոր Բ. 124-125

Վեր. Համբարձում Յ. Աշճեան, Աստանայի Եղեռնը եւ Գոնիայէ Ցուշեր, (Նիւ Եորք, Կոչնակ տպ., 1950) էջեր՝ 15-120

Վեր. Եղիա Ս. Քասունի, Լուսաշալիդ (Պէյրութ. Ամերիկեան Տպարան ) էջեր՝ 263-269.

Վեր. Կ. Պ. Աստանայեան, Յուշարձան (Ֆրէզնոյ, 1952), էջեր 330, 339

Գրիգոր Յ. Գալուստեան, Մարաշ կամ Գերմանիկ եւ Հերոս Ձեյթուն (Նյու Եօրք, Կոչնակ տպ., 1934), էջ 929

Հայաստանի Կոչնակ (Նիւ Եորք, Կոչնակ տպ., 1938), էջեր՝ 81-82

Դոկտ. Յակոբ Չագմարձեան, Հայ Անտարաճական Շարժումը (Ֆրէզնոյ, 1985), էջեր 81-82

Վեր. Համբարձում Յ. Աշճեան, Յիշատակարան 70-ամեակի Տօնակատարութեան (Լու Անձիլու, 193 6) էջեր՝ 17-53

Վեր. Պարգև Ն. Տարագճեան, «Վեր. Համբարձում Յ. Աշճեան», Զանասէր, Յուկիս-Օգոստոս, 1974, էջեր՝ 254, 259 Մեպտ. - Դեկտ. 1997 Էջեր՝ 365-37

Թիֆլիսեան Թերթիկ, 26 Ապրիլ, 1909.

Տիգրան Խրլորեան, Ուկեմատեան, Պէյրութ, 1950, Հատոր Բ.

Դասախոսութիւն՝ Կարապետ Գ. Տաղեանի, Ալֆրէտ Համալսարանի աշակերտու-թեանց, Նյու Եօրք, Փետրուար 21, 1912.

Հայերի Յեղապահութիւնը Օսմանեան Կայսրութիւնում, խմբագիր՝ Մ. Ք. Ներսիսեան, 1991, Երեւան.

Էմմա Կոստանդիեան, «Հարյուր Տարի Առաջ, Կամ ինչ դասեր քաղել Պատմությունից», «Ազգ Օրաթերթ», Ապրիլ 1, 2009.

<http://net.lib.byu.edu/~rdh7/wwi/1915/bryce/a14.htm> հասուած «The Treatment of

Armenians in the Ottoman Empire» գիրքն, (փաստաթուղթեր ներկայացուած Viscount Bryce-ին.)

Կիպռնս, Հելեն Տիտնբորդ, Թարսուսի Կարմիր Գորգերը: Կնոջ մը զրառումները 1909-ի Հայկական կոստրածներուն . Նյու Եօրք:1917, Գլուխ 8, էջ: 115-116.

Դոկտ. Բախոն Տոնիք, 1909: Ottoman Archives related to the Adana Massacres, Սիստի,Աւստրալիա, 2008

Harutyun Selimyan

**The Massacre of Adana and the Losses of  
the Armenian Evangelics**

Summary

This article shows the losses of the Armenian evangelics as a consequence of Adana massacres. The author presents the details of the Adana massacres, human and material losses, the pain and grief of the Armenian people; he exhorts not to be naive in essential national questions, on the contrary always to be realistic and long-sighted, reasonable and wise. The author advises to ask for help from the foreigners, but not to expect a salvation and to acquire rights by own means; to be united and to have will, to evaluate the present and to step towards the future with unshakable belief.

## ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅԱՏԱՌ- ԹՈՒՐՔԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հասմիկ Ստեփանյան

Հայատառ թուրքերեն գրականությունը մեր մշակութային ժառանգության անքակտելի մասն է, որը մինչ օրս շատ քիչ է ուսումնասիրված: Այն իր մեջ ներառում է հսկայական վավերագրական նյութ Օսմանյան կայսրության պատմության, նրա ժողովուրդների լյանքի բոլոր ոլորտների մասին: Այն նաև մեր ազգային ազատագրական շարժման փայլուն էջերի ու եղերական շրջանների վերաբերյալ կարևոր սկզբնաղբյուր է, որը չպետք է անուշադրության մատնվի ուսումնասիրողների կողմից:

Ժեռագրական 600-ամյա ու տպագրական 250-ամյա պատմություն ունեցող այս գրականությունն ապացույցն է ողբերգական մի երևույթի, որն այնքան տարածված էր ողջ Օսմանյան կայսրությունում: Այն վկայությունն էր սոցիալ-տնտեսական, քաղաքական, կրոնական մոլեանդ հետապնդումների հետևանքով բռնի թուրքալեզու դարձած հայ ժողովուրդի ավելի քան կես միլիոն մի հատվածի գոյության: «Մեկ ազգ, մեկ կրոն» սովորական կարգախոսի քաղաքականության առաջին քայլերից մեկը (հպատակ տարբեր ժողովուրդների դեմ իրականացվող պարբերական ջարդերին զուգահեռ)՝ մահվան սպառնալիքով թուրքախոս դարձնելու, մասսմբ պասկել էր հաջողությամբ: Այս սովար հատվածի ողջ ստեղծագործական միտքը մեզ է հասել մասսմբ կամ լիովին հայատառ թուրքերենով: Հայատառ թուրքերենը մեծ առաքելություն ունեցավ նրանց ուժացումից փրկելու, հայկական ինքնությանը վերաբարձնելու, հայախոսությունը վերականգնելու և առաքելական կրոնին հավատարիմ մնալու գործում: Հայատառ թուրքերենով ստեղծվեց հսկայածավալ ձեռագիր ու տպագիր գրականություն, որը հետագայում այնքան տարածվեց ու ինքնարավ դարձավ, որ սկսեց ծառայել ոչ միայն իր սկզբնական առաքելությանը, այլև դարձավ կարևոր մշակութային գործոն հայերենին ու թուրքերենին տիրապետող օտարերկրացիների համար:

Հայատառ թուրքերենով իրատարակված 2000-ից ավելի անուն գրքերը, ավելի քան 120 անուն պարբերական մամուն այնպիսի հարուստ ու հզոր ուժ դարձան, որ ակամա սկսեցին ազգել կայսրության ողջ թուրքախոս բնակչության մշակույթի վրա: Դա Օսմանյան կայսրությունում ընդհանուր զարթոնքի շրջանի բուն զարգացման խթանը հանդիսավագ, դառնալով նաև եվրոպական իրականության, մթնոլորտի, մշակույթի, առաջադիմական գաղափարների ներթափանցման գործիք և միջոց:

Պետք է փաստել, որ ամենամեծ օգուտն այս գրականությունից ունեցավ նախևառաջ թուրք ժողովուրդը: Հայկական թատերախմբերի թուրքերեն ներկայացումները ողջ կայսրությունով մեկ հեղափոխական նշանակություն ունեցան և մշակութային և զաղափարախոսական առումով, ինչպես նաև գիտության, տեխնիկայի, գրական նոր թուրքերենի, լուսավորական գրականության ու նրա գործիքների կազմակերպման, օսմանյան լրագրողական արվեստի, երաժշտության ու թատրոնի, կյանքի ամենատարբեր ճյուղերի զարգացման տեսանկյունից: Կայսրության բոլոր անկյուններում, սկսած պալատական պաշտոնյաներից մինչև զավառի այլազգիները, նախընտրում էին կարդալ այս պարզ ու հասկանալի լեզվով մամուլ՝ սեղմ ժամկետում սովորելով հայկական տառերը:

Հայատառ թուրքերենի ժողովրդականությունը պայմանավորված է եղել ժամանակի ամենազարգացած մարդկանց գործունեությամբ: Հրաշալի կրթություն ստացած, բազմաթիվ լեզուների գիտակ այս գործիքներն իրենց ուսերին էին վերցրել Օսմանյան կայսրության բազմակեզու պարբերականների տպագրության ողջ ծանրությունը. շուրջ երկու

հարյուր հայտառ թուրքերեն, օսմաներեն, եռալեզու, քառալեզու մամուլ, երկու տասնյակի հասնող ֆրանսերեն պարբերականներ: Եվ դրանք բաժանորդներ են ունեցել երկրի տարրեր ծայրերում ու արտասահմանում, թղթակիցներ ունեցել անգամ հեռավոր հայկական գավառներում: Հայտառ թուրքերեն գրքեր ու պարբերականներ կարդում էին պալատում, կառավարությունում ու պաշտոնական վայրերում, տարրեր ազգերի ընտանիքներում, սրճարաններում և անգամ հարեմներում: Հայտառ թուրքերեն պարբերականների մեծագույն արժանիքն այն էր, որ նորությունները (մանավանդ արտասահմանյան) 1-2 օր անց ընթերցողի սեղանին էին լինում: Իսկ հրապարակվում էին դրանք ֆրանսիական մամուլի օրինակով՝ ունենալով բազմաթիվ ենթավերնագրեր, որոնք ոչ մի բաց անկյուն չէին թողնում ընթերցողների հետաքրքրությունը բավարարելու հարցում: Ամենահայտնի պարբերականներից էին «Մանզումի Էֆքեար»-ը, «Մէնուայի Ախապար»-ը, «Մէնուայը Հավատիս»-ը, «Մինատիի Էրճիաս»-ը, «Թէրճմանը Էֆքեար»-ը, «Ճէրխտի Շարքի»-ը<sup>1</sup> և այլն: Այս դեպքում մեզ համար կարևոր են բոլոր այն խորագրերը, որոնք ներկայացրել են գավառը:

Նոյնքան կարևոր են գավառում լոյս տեսած պարբերականները, ինչպես՝ «Էնվարը Շարգիե» (Կարին), «Կիլզարը Գայսերիեի» (Կեսարիայի համար, սակայն տպագրվել է Պոլսում), «Մենտոր» (Այնթասպ) և այլն: Եթե նկատի ունենանք, որ հայտառ թուրքերեն պարբերականները շուրջ 40 տարի շարունակ հրատարակվում էին, ապա կարող ենք պատկերացնել այն հսկայական ծավալը, որն արևմտահայության ու Պոլսի ամենօրյա կյանքի յուրօրինակ մի հայելի էր, որում արտացոլվում էր առօրյան, մշակութային և հոգևոր կյանքը, նրա զարթոնքը, եվրոպականացման շարժման միտումները և այլն: Այն արտահայտել է բոլոր իրադարձությունները՝ տեղական և համակայսերական նշանակության:

Հայտառ թուրքերեն մամուլն իր բովանդակությամբ, իր խաղացած հասարակական-քաղաքական դերով անքակտելիորեն կապված է հայ ժողովրդի պատմության հետ: Հայկական որոշ պարբերականներ անգամ ունեցել են հայտառ թուրքերենով հավելվածներ կամ տպագրել են հայտառ թուրքերենով հոդվածներ (նկատի ունենալով թուրքախոս ընթերցողներին), երբեմն էլ անփոփոխ ձևով ներկայացրել են թուրքերեն թղթակցությունը: Հայտառ այս պարբերականները հաճախ փակվել են, խմբագիրները՝ բանտարկվել: «Մանզումի Էֆքեար» թէրթի տնօրեն Կարապետ Փանոսյանը, որը բոլորից հետևողական է պայքարել հայ ժողովրդին ստրկացնելու, ջլատելու, ձուլելու քաղաքականության դեմ և տպագրել ծանրագույն փաստերով թղթակցություններ գավառից, բազմից բանտարկվել է, սակայն վերատին շարունակել իր գործը: Լոյս են տեսել հոդվածներ, որոնք աղմուկ են առաջացրել մայրաքաղաքի ոչ միայն հայկական, այլև եվրոպական դիվանագիտական շրջանակներում, կառավարությունում: Այդ պարբերականները լավագույն դեպքում կարողացել են վերաբացվել նախկին կամ նոր անվանմամբ՝ շարունակելով իրական մամուլի գործը: Եթե դրանց հավելենք Պոլսում մոտ երկու տասնյակ օսմաներեն ու եռալեզու, քառալեզու թէրթերը, նաև ֆրանսերենով լոյս տեսնող շուրջ մեկ տասնյակ պարբերականների նյութերը, որոնք հրատարակում էին հայերը, ապա կարելի է պատկերացնել, թե ինչ հարուստ նյութ է պարփակված հայտառ թուրքերեն մամուլի էշերում ազգային-ազատագրական շարժումների, հայ ժողովրդին պատուհասած կոտորածների վերաբերյալ, ինչպես նաև դրանց լուսաբանման և հետապնդման գործում:

<sup>1</sup> Հայտառ թուրքերեն գրքերի և պարբերական մամուլի մասին տես Ստեփանեան Յասմիկ Ա., Հայտառ թուրքերեն գրքերի և հայտառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտությին. Ստամբուլ, «Թուրքուազ» հրատ., 2005թ.

## Հասմիկ Ստեփանյան

Նման ողբերգություն դարձավ 1909 թ. Աղանայի կոտորածը, որը նաև հայտառ թուրքերն մամուլի միջոցով իր բազմաթիվ մանրամասներով անմիջապես հրապարակ իշավ՝ ներկայացնելով փաստական հսկայական նյութ, որը հիմնականում օտարերկրյա դեսպանատների միջոցով տարածվեց արտերկրում:

Իսկ Աղանան այդ ժամանակ լուսավորական շարժման կենտրոններից էր: Այնտեղ մի քանի դասական նվազախմբեր էին գործում (1901 թ. առաջին հայկական նվազախումբը Սահակ Տեր-Սահակյանի ու Ալեքսան Չորեքչյանի ղեկավարությամբ և 1902 թ.՝ Վահան Բեղելյանի 13 երաժիշտներից դասական նվազախումբը), բազմաթիվ բարեսիրական, մշակութային միություններ ծնվում:

Երիտրուրքական հեղաշրջումից հետո (1908 թ.) հայտառ թուրքերն մամուլում, ավելի, քանի հայալեզու պարբերականներում, արտաստվել են արտասահմանյան, հիմնականում՝ ֆրանսիական, սովորական, հայկական շրջանակների տարրեր հանձնաժողովների գործունեության արդյունքները: Պատկառելի թիվ էին կազմում Արդու Համբիին նվիրված գրքերը այնպիսի բացասական վերնագրերով, ինչպես «Կարմիր գազանի որջը» (1909), «Կոշմարներ» և այլն: Այդ հրապարակումները ներառում էին նաև Պատրիարքարանի, Ազգային Ժողովի ատենագրությունները և Կիլիկիո որբախնամ ու այլ հանձնաժողովների տեղեկագրերը:

Լոյս տեսան հայերեն ու հայտառ թուրքերն գրքեր, որոնք հիմնականում հրատարակվեցին Եգիպտոսում, Ֆրանսիայում: Պոլսում տպագրվեցին գրքեր,<sup>2</sup> որոնց հասույթը տրամադրվեց Աղանայի ողբերին: Մեր գրեթե բոլոր անվանի մտավորականներն անդրադարձան այս խնդրին՝ գործուն մասնակցություն ունենալով «Կիլիկիոյ աղյուսակներում»:

Հարկ է նշել, որ մեր ժողովրդի ողբերգական շրջանների մասին հայերի ու օտարների տեղեկությունների բազմալեզու աղբյուրների կողմին պահպանվել են նաև հայտառ թուրքերներ նյութեր և վավերագրեր, որոնց մեծ մասը մինչ օրս:

Բազմաթիվ անգամներ առիթ ենք ունեցել համոզվելու, որ դեռ այսօր էլ սփյուռքահայ մեր հայրենակիցների օջախներում սրբությամբ են պահվում հայերեն, հայտառ թուրքերն լեզուներով ձեռագիր տեսրակներ, գրքեր, որոնք եղեռնն անցած տարաբախտ մեր հայրենակիցների կյանքի սև օրերի պատմություններն են: Դրանց մի մասը լույս է տեսել հենց ականատեսների, մյուս մասը՝ նրանց ժառանգների կողմից: Մեզ վիճակվել է նաև տեսնել մի քանի հայերեն ու հայտառ թուրքերեն ձեռագիր հուշագրություններ: Դրանց հեղինակների այսօրվա ժառանգները սրբությամբ են պահում դրանք՝ թարգմանելու, հրատարակելու համար:

Մատենադարանի ձեռագրական նոր հավաքածուի 361 համարի ձեռագիրը գրվել է Աղանայում, կոչվում է «Թուրքիադա էրմենի հայաթը» (Հայերի կյանքը Թուրքիայում): 1950-ական թթ. գրված երկմաս, 80 թերթից բաղկացած ձեռագիրը պատկանում է Լևոն Էպիկանի գրչին: Ձեռագիրը նվիրված է Աղանայի ողբերգական ղեպքերին: Առաջին մասը

2 Տես մի քանի գրքեր Աղանայի շարդերի մասին. Թապագեան Միհրան, Ալունայի ծննդեան ծառը, Կ.Պոլիս, 1910: Թէռողիկ Արշակուի, Ամիս մը ի Կիլիկիա, Դատաստան, Կ.Պոլիս, 1910: Թէրզեան Յակոբ, Կիլիկիոյ աղլտոր, Կ.Պոլիս, 1912., տպ. Ասատորեան ո որդիք: Նոյնի՝ «Ալունայի կյանքը», 1909, Կ.Պոլիս: Գուտուլեան Գրիգոր. Հայ լեռ. Կարմիր Դրվագներ Կիլիկիոյ աղետէն. Կ.Պոլիս, Տպ. Տողրամաճյան, 1912: Մուշեղ Եպիսկ., Աղանայի շարդը և պատասխանատունները, Կ.Պոլիս, 1909: Հակոբ Թէրզյան, Ալունայի կեանքը (Կ.Պոլիս, 1909): Սուրեն Պարթեւեանի, Կիլիկիան արհաւիրքը (Կ.Պոլիս, 1909): Ալանան Յարութիւն Աղնարապի, Խնչպէս դատուեց արդարութիւնը Ալունայի մէջ, 1909թ.: Հայատառ թուրքերներ, Պեհսնիլյան Ե., Նահատակների հուշագիրը, հայատառ թուրքերները, Կ.Պոլիս, 1910: Զալյան Կ. Աղանայի ղեպքերը և պատասխանատունները, Կ.Պոլիս, 1910 թ. և այլն:

բաղկացած է երեք բաժինից, սուլթանների երկրում հայերի կյանքի ու Աղանայի զուլումի մասին: 47-րդ թերթից սկսվում է ձեռագրի երկրորդ մասը, որը չափածո՞ւ բաղկացած քաղել, դիվան, քոշմա... Բոլորն էլ անդրադառնում են հայկական ջարդերին: Այսպիսի եղերերգեր հնարավոր է գտնել Արևմտյան Հայաստանի մանավանդ թրրախոս շրջանների բանավոր ու գրավոր մշակույթում՝ հեղինակային կամ ժողովրդական: Հայատառ թուրքերենով հայտնի են նաև մի շարք այլ հրատարակություններ, այդ թվում չափած գործեր Այնթապի «պատերազմների» մասին:

Այսօր ախտսանքով պետք է նշել, որ մեր մշակույթի այս հատվածը բավարար ու սումնափակած չէ: Չուսումնասիրել հայատառ թուրքերեն մամուլը՝ նշանակում է լիարժեք չուսումնասիրել մեր ժողովրդի արևմտահայ հատվածի պատմությունը: Գուցե մենք ժամանակ և միջոցներ կգտնենք՝ մեր ազատազրական շարժումների պաթոսվ ու եղեռնազործությունների ցավից հյուսված արձակ ու չափած հայատառ թուրքերեն գրականության շարք հրապարակելու համար՝ դուրս հանելով այն ժամանակի ու մարդկության պատմական հիշողության մոռացությունից:

Hasmik Stepanyan

**The Representation of the Armenian Massacres in the Turkish Literature Written in Armenian Letters**

Summary

The author highlights the necessity of a research of the Turkish literature written in Armenian letters which includes the Armenian documentary material on the history of the Ottoman Empire, different spheres of its peoples life. He reverts to the role of Turkish in Armenian letters to save it from estrangement, to reestablish the Armenian originality and the speaking of the Armenian language and to be faithful to the apostolic religion. Information about the 1909 massacre in Adana spread in abroad through the Turkish press printed in armenian letters.

## 1909թ. ԱԴԱՆԱՅԻ ԶԱՐԴԵՐԻՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Անի Ուկանյան

1908թ. Երիտրուրբական հեղաշրջումից մեկ տարի անց տեղի ունեցած Ադանայի կրտորածը կայսրության քրիստոնյա ժողովուրդների, մասնավորապես՝ հայերի նկատմամբ իրականացվելիք ծրագրի առաջին նախանշանը հանդիսացավ: Ադանայի կրտորածը, որին զի գնաց շոր 30 հազ. հայ, կազմակերպվեց կենտրոնական իշխանության կողմից: Իշխանության հրահանգով բացվեցին զինապահեստները, զինվեց ամբոխը, իսկ ավելի մեծ կրուստներ պատճառած երկրորդ ջարդն իրականացվեց «կարգ ու կանոն» հաստատելու համար Ադանա բերված սահմանադրական ազատարար բանակի միջոցով, որն ինքնին խոսուն փաստ է պետական միջամտության մասին:

Կառավարության քաղաքականության իրագործումը հանձնարարվեց Ադանայի վայի Զևադ թեյին և զինվորական հրամանատար Մուստաֆա Ռեմզի փաշային: Ադանայի նոր կառավարիչն ու զինվորական հրամանատարը սկսեցին գաղտնի խորհրդակցություններ գումարել, զորամասեր տեղափոխել Կիլիկիա, զինել խուժանին և մշակել հայկական ջարդերի ծրագրեր: Ադանայի հոգևոր առաջնորդ Մուշեղ Եպիսկոպոսը նշում է, որ մեծ քանակությամբ զենք և զինամթերք է տեղափոխվել Կիլիկիայի զորանոցները, և, որ Արդու Համիլը մի քանի հազար ոսկի է նվիրել համբիկական զորագններին:<sup>1</sup>

Զարդերի նախօրեին «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամ Իհսան Ֆիքրիի խմբագրությամբ Ադանայում հրատարակվող «Իրիդա» թերթի կողմից կազմակերպվեց ժողով, որին, ինչպես հավաստում է Հ. Պապիկյանը,<sup>2</sup> մասնակցում էին «բոլոր իսլամ դասակարգերը - պաշտօնեայ, կրօնական, զինուր և զործառոր»:<sup>3</sup> Այնուհետև բոլորը լծվեցին զանգվածային հարձակում նախապատրաստելու գործին: Վերոհիշյալ ժողովից հետո, զգոված ամբոխը՝ մշտապես այնտեղ գտնվող պահակազորի կողմից առանց որևէ դիմադրության հանդիպելու, թալանում է զինապահեստը: Սա ինքնին վկայում է «...որ զենքերը բաշխուած են եղել կառավարական հրամանով», քանի որ «...միեւնոյն բանը պատահած է նահանգին բոլոր այն մասերուն մեջ՝ որ այս պատճառներով ջարդեր տեղի ունեցած են»:<sup>4</sup> Զենքերը բաժանելու մասին տեղեկացնում է նաև Հ. Թերզյանը՝ զրելով: «Երկարութիւնի կայարանը պաշարող վայրագ խուժանը՝ բարձրածայն զոչերով զօրանց վագեց և հոն բաշխեցին մնացած զենքերն էլ»:<sup>5</sup> Ադանայի երիտրուրբական կազմակերպության ղեկավար Շյուրքին ևս, զինապահեստը բացելով, ող զենքը բաժանել է թուրք ամբոխին:<sup>6</sup>

Զենքի նպատակային բաժանման մասին վկայում է նաև այն, որ ավելի ուշ, երբ ինքնապահտպանության դիմած հաճնից հայերը զինամթերք ձեռք բերելու նպատակով հարձակվում են զինապահեստի վրա, անհաջողության են մատնվում,<sup>7</sup> և հետ շպրտվում պահակազորի կողմից:

1 Մուշեղ Եպիսկոպոս, Ատանայի ջարդը և պատասխանատուները, Գահիրէ, 1909, էջ 56:

2 Հակոբ Պապիկյանը եղել է Օսմանյան խորհրդարանի պատուամավոր և խորհրդարանի կողմից՝ Ադանայի կրտորածները հետաքննելու համար ստեղծված հանձնախմբի անդամներից մեկը:

3 Յ. Պապիկյան, Ատանայի Եղեւնը, Կ. Պոլիս, 1919, էջ 25:

4 Նույն տեղում, էջ 26:

5 Թերզյան Յ., Կիլիկիոյ աղյուս, Կ. Պոլիս, 1912, էջ 164:

6 Գասպարյան Ռ., Հայկական կրտորածները Կիլիկիայում, Երևան, 2005, էջ 67:

7 Նույն տեղում, էջ 76:

Մարտի 31-ին, եթք դեռևս ջարդի նախաքայերն են կատարվում, տեղական կառավարությունը ոչինչ չի ձեռնարկում գալիք աղետը կանխելու համար։ Ապրիլի 1-ին խուժանը շուկայում և բուրքական թաղերում հայերին կոտորելուց հետո հարձակվում է հայկական թաղամասերի վրա։ Կարգ պահպանելու համար կանչված ռեդիֆները (պահեստային զիրնվորներ) խառնվում են ամբոխին և ավելի վատթարացնում դրությունը։ Մուշեղ Եպիսկոպոսը վկայում է. «...Զինուորական ջոկատ մը, որուն իբր թէ պաշտօնը հանրային ապահովութեան հսկելն էր, իրեն տրուած գաղտնի հրահանգներու համաձայն, զինուորական փողի ազդանշանվ և լուսածին համաձայն Քէյսի Սէլիմ թէյի հրամանատարութեամբ, կը պաշարէ Շապանիյէ թաղը և կանոնավոր գնդակահարութեամբ յարձակում կը գործէ Քրիստոնէարքնակ թաղի մը վրայ...»:<sup>8</sup>

Մի քանի օր շարունակվող ջարդը դադարեցնելու համար տեղական կառավարությունը՝ ի դեմս վալիի, կայազորի հրամանատարի և ոստիկանության պաշտոնյաների, ոչինչ չի նախաձեռնում։ Միակ քանը, որով զրադշափած էին իշխանությունները, կոտորված հայերին հավաքելով ու սայլերի վրա կիսուելով գետը լցելն էր։<sup>9</sup>

Թեև Փարիզում Օսմանյան դեսպանատան հայտարարությունում ասվում էր, որ. «Իրականութեան մէջ այ, խռովութեանց ընդարձակումը բաւականաչափ պատրաստ զինուոր չգտնելուն և մօս նահանգները ուզած զինուորական ուժին սպասուած ժամանակին որոշեալ վայրեր հասնել չկարենալուն արդինք էր»,<sup>10</sup> սակայն, իրականում, ջարդերը սկսելու առաջին օրը՝ ապրիլի 1-ին, և դրանք դադարեցնելու օրն Աղանայում նույնքան զինվոր կար. «Զինուորները, որ ջարդէն առաջ իբր թէ փոքրաթիվ խուժանը չին կրցած զավել, ջարդէն ետքը անոր տասնապատիկը եղող խուժանը զավեցին կէս ժամուայ մէջ»,<sup>11</sup> գրում է Հ. Թէրզյանը։ Այլ փաստեր ևս հավաստում են, որ զինվորականները ցանկության դեպքում կարողացել են կանխել կամ կասեցնել ջարդերը. «...Հանկարծ Միսիսի հազարապետ Լութֆի պէյը՝ մի քանի զինուորներով շուկան եկաւ և զինուորական փողերով և մունետիկներով խուժանին հրամայեց, որ ջարդը դադարեցնեն։ Վայրագ խուժանը՝ վերի թաղի մէջ վախտուն հոգի ջարդերին ետքը դադրեցրեց յարձակումը»:<sup>12</sup>

Զափազանց հետաքրքիր է Սահմանադրական 3-րդ քանակի սպաների և զինվորների գնահատականներն Աղանայում ապրիլի 6-7/19-20 տեղի ունեցած առաջին ջարդի վերաբերյալ, որին նրանք դեռևս չէին մասնակցել. «Միթէ ինն ամսէ ի վեր Իթթիհատը քիչ աշխատեց երկրին մէջ հանդարտութիւն պահպանելու։ Ատանայի կողմերն այդքան արինիներութիւն կ'լլար, եթէ Իթթիհատն անցեալ շարաթուն ի վիճակի լլլար գործելու Ատանայի վիլայէթին մէջ։ Ինն ամսէ ի վեր քանի քանի խռովութեան, անկարգութեան առաջն առնուեցաւ Անատոլի մէջ մի միայն Իթթիհատի գործակալներուն արագափոյթ օգնութեան շնորհիվ»:<sup>13</sup> Կամ, ինչպես տեղեկացնում է Բյուզանդիանը, «Սելանիկի և Աղր. Պոլսոյ զօրքն և իրենց սպաներն, որ Պոլսի մտան Շարաթ օրուան արինալի յաղթանակէ ետքը՝ շերմ համակրանքով կ'վարուին մանաւանդ Հայերուն հետ և ցաւ կը յայտնին Կիլիկիոյ ջարդերուն համար»:<sup>14</sup>

8 Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 50-51:

9 Գеноцид армян в Османской империи, сборник документов и материалов, под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1966, N 99. с.175.

10 Աշնան Յ., Ատանայի Եղեռնը և Գոնիայէ Ցուշեր, Նիւ Եորք, 1950, էջ 42:

11 Թէրզեան Յ., նշվ. աշխ., էջ 55:

12 Նոյն տեղում, էջ 183:

13 «Բիւզանդիան», թի 3,807, Կ. Պոլսի, 1909, ապրիլ 7-20:

14 «Բիւզանդիան», թի 3,812, Կ. Պոլսի, 1909, ապրիլ 14:

## Անի Ռոկանյան

Շարժուն բանակի հրամանատար Հյուսէյն Հյուսնի փաշայի՝ ժողովրդին ուղղված հայտարարությունում ասվում էր. «Ազատարար Բանակին նպատակն է Սահմանադրութիւն միանգամ ընդ միշտ ազատել ամէն վտանգէ և հոչակել թե Սահմանադրութիւնէն վեր որևէ ոյժ գոյութիւն չունի այս երկրին մէջ»:<sup>15</sup> Իսկ Գ. զորաբանակի և շարժուն բանակի հրամանատար Ա. Ներիգ Մահմուտ Շևքեթի 1325թ. ապրիլի 12 իր հայտարարության մէջ, գրեթե նույնին հավելում է, որ «ամէն ոք պատրաստ է ըստ այնմ խոհեմութեամբ և ակնածութեամբ վարուիլ»:<sup>16</sup>

Թեև երիտրուրք գործիները շարունակ խոսում էին սահմանադրությունից, մատնանշում էին իրենց ու նախկին բռնապետական իշխանությունների միջև եղած տարրերությունը, սակայն ինչպես ցույց տվեց դեպքերի հետագա ընթացքը, նրանք գործում էին նույն մեթոդներով: Աղանայում իթթիհաղական ազատարար բանակը ոչ միայն իրականացրեց հայերի կորտորածը, այլև նրա բոլոր գործոդրությունները դեկավարվում էր երկրի բարձրագույն մարմնի՝ իշխանության կողմից:

Զինադադարի չորրորդ օրը Կ. Պոլսի Ազատարար Շարժուն Բանակի հրամանատար Մահմուտ Շևքեթ փաշան հետագրով տեղեկացնում է, թե «Պոլսոյ վրայ քայլող Ազատութեան բանակն վաշտ մը մեկնած է Տէտէ-Վղաճէն դէպի Աստանա»:<sup>17</sup>

Ապրիլի 12-ին Սալոնիկից Աղանա ժամանեց սահմանադրական Յ-րդ բանակի երկու գորագունդ՝ ուղղարկված Իթթիհաղի կենտրոնական վարչության կողմից «կարգ ու կանոն» հաստատելու համար: 11/24 ապրիլի Աղանայի վախ Ձևադ թէյի զաղտնագիր հարցմանը՝ ինչպես գործել, Իթթիհաղի կենտրոնական վարչության կողմից տրվեց զաղտնի հրաման. «Ընտրեք կարգ ճանապարհ»:<sup>18</sup> Այլ աղյուրներ ևս հաստատում են, որ. «Այս անգամ նրանք (զինվորներ Ո. Ա.) հրամանները էին ստանում իթթիհաղի առաջնորդների կողմից»:<sup>19</sup>

Սահմանադրական բանակի զինվորները դեռ չէին հասցրել Քըշլա Մեյդանի շրջանում՝ քաղաքի դարպասների մոտ, տեղավորվել, երբ նրանց ուղղությամբ հնչեցին կրակոցներ: Կրակոցները, ինչպես հետագայում ցույց տվեց հետաքննությունը, պատահարար, առավել ևս՝ հայերի կողմից կամ էլ զինվորների վրա հարձակվելու նպատակով չէին հնչել: Կրակոցները հանդիսացան այն ցանկալի ատիքը, որը զորքին՝ գործելու, իսկ Մուստաֆա Ռեմզի փաշային՝ առաջին ջարդից հետո դեռևս ողջ մնացած հայերի վրա հարձակման հրաման տալու հնարավորություն տվեց: «Մուստաֆա Ռեմզի փաշան՝ առանց այդ սուս զրոյցները քննելու և ստուգելու՝ փորհարութեամբ անմիջապես յարձակումի հրաման տուած է զինվորներուն»,<sup>20</sup> ովքեր (զինվորները-Ո. Ա.) արդեն դժգոհ էին, որ պետք է ստիպված լինեն պաշտպանել քրիստոնյաներին իրենց հավատակիցներից:<sup>21</sup>

Ապրիլի 12-ի լուս 13-ի գիշերը խառնամբով սահմանադրական բանակի զինվորների զիսավորությամբ հարձակվեց Ապգարյան վարժարանի վրա, որտեղ ապաստանել էին առաջին ջարդից փրկված շուրջ 2000 հայեր:<sup>22</sup> Զորքը շրջապատում է հաստատությունը

15 «Բիունանդին», թիվ 3,807, Կ. Պոլսի, 1909, ապրիլ 7-20:

16 «Բիունանդին», թիվ 3,811, Կ. Պոլսի, 1909, ապրիլ 13:

17 Թէրզեան Յ., նշվ. աշխ., էջ 94:

18 Տոնիան Վ.Գ. Մլադուրկի և արմենական առաջնորդական բանակի զինվորների գլխավորությամբ հարձակվեց Ապգարյան վարժարանի վրա, որտեղ ապաստանել էին

19 Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 65: Duckett F., Turkish Atrocities. The Young Turks and the Truth About Holocaust at Adana in Asia Minor, During April, 1909, 1911, p.32.

20 Աշճեան Յ., նշվ. աշխ., էջ 25, 62:

21 Հայերի ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում, (փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ), Երևան, 1991, էջ 254:

22 Adossidès A., Arméniens et Jeunes-Turcs. Les massacres de Cilicie, Paris, 1910, p. 54.

այն ողողում են նավթով և հրկիզում:<sup>23</sup> Այնուհետև, այրվող շենքից չհռանալով, սահմանադրական բանակի գինվորները գնուակահարում են յուրաքանչյուրին, ով փորձում է կրակի բոցերից դուրս փախչել: Ապօքարյան դպրոցից հետո հրկիզում և ավերվում են այլ դպրոցներ, եկեղեցներ, տարբեր հաստատություններ, որտեղ փորձել էին ապաստան գտնել հայերը:

Հայկական որոշ կազմակերպությունների ներկայացուցիչներ, հիմնվելով իրենց հասած առաջին տեղեկությունների վրա և նշելով Կոստանդնուպոլիսի ու Աղանայի իրադարձությունների համբնելումը, դեռևս ընդունում են համիլյան հետադիմության տեսությունը: Այլը՝ ավելի հեռատեսները, հավաստում են, որ կոտրածները ձեռնուու են երիտրուրքերին, որոնք այս կերպ խոչընդոտել են կայսրության ամենահարուստ նահանգներից մեկում հայերի տնտեսական զարգացմանը (համոզմունք, որն ամրապնդվել է կոտրածների երկրորդ ալիքին զինվորների մասնակցությամբ), և որ բազմազգ նավատորմի ժամանումը Մերսին չի կատեցրել այս կոտրածները: Աղանայի եափսկոպոս Նորին սրբազնություն Մուշեղը, որը վայիի կողմից զրպարտվել է և մեղադրվել ապստամբության գլուխ անցնելու համար, կոտրածների պահին Եգիպտոսում էր: Ֆրանսիական մամուլում նա մերկացնում է այս մերենայությունները: 1909 թ. լույս ընծայված փորբածավալ մի աշխատությունում նա իր անհանգատությունն է հայտնում տերությունների միամստության առիթով. «Կառավարությունների բարեհաճությունը երիտրուրքերի հանդեպ հասնում է ծայրահեղ աստիճանի: Արդյոք նրանք ակամայից կարծում են, որ երիտրուրքերը կլարդանան հաջողությամբ պահել անկում ապրող թուրքիայի բարենորդնան և վերածնության ահրելի գործը: Սակայն, ինչպիսին որ լինի նրանց համոզմունքն այս առիթով, իրենք՝ հայերը, հենց նոր ձեռք են բերել լասու ու արյունայի փորձ, որը նրանց կտրականապես տարածացատել է փայլոր լավատեսությունից, որով նրանք արքեցել են և խարվել սահմանադրության հաստատմանը հաջորդած ինն ամսինների ընթացքում»:<sup>8</sup> Կոտրածներից հետո հայկական կազմակերպություններն ունեցել են անհապաղ անելիքներ. ապաստանել որդերին և նրանց պահել համայնքում, վճասների դիմաց ստանալ փոխհաստուցում և վերադարձնել փրկվածների ունեցվածքը: 1909 թ. ամռան ընթացքում հայ պատգամավորները բանակցում են ՄԱԿ-ի և կառավարության հետ: Գրիգոր Զոհրապը հավատ է ընծայում Հիլմի փաշայի անկեղծությանը. «Զի կարելի վիճարկել մեր հանդեպ ժամանակակից կառավարության բարեհաճ վերբերմունքը, քանզի մենք շատ լավ գիտենք, որ հինգ ամիս առաջ գոյություն ուներ Աղանայի կոտրածներն ամբողջ Հայաստանում տարածվելու ականատեսը դառնալու իրական վտանգ...»:<sup>9</sup> Հայկական մամուլն ավելի շիտակ է և ՄԱԿ-ի մտադ-

7 Նոյն տեղում, էջ 7-11:

8 M<sup>er</sup> Mouchehgh, Les vêpres ciliennes. Les responsabilités. Faits et documents, Alexandria, 1909, p. 61. Նրա հողվածները լոյս են տեսել «Ֆիզարդյում»՝ 1909 թ. մայիսի 30-ին և «Լը Կորիի դ'Օրպաում»:

9 R. Kévorkian, նշվ. աշխ., էջ 127:

բությունների առիթով հետևյալ հարցն է տալիս. «Մեր մէջ, ժամանակէ մ'ի վեր, – 1909 թ. սեպտեմբերի 20-ին գրում է Բյուզանդ Գեղյանը ստամբուլյան «Բյուզանդիոն» օրաթերթի առաջնորդող հոդվածում, – յունտեսութեան ընթացիկ ձեւ մը այն է որ կ'ըսուի թէ Օսմանեան» Քօմիթէն, երէ ինք չէր կազմակերպիչը, գէթ հակառակ ալ չէր Ատանայի Հայոց ջարդին, յորմէ սրտովին զոհ մնաց մեծապէս: – Ծառ կարենոր է այս խնդրոյն լուսարանումը, որովհետու անուրանալի է որ Օսմանեան» Քօմիթէն այսօրուան կառավարութիւնն է երկրին, և անոր ընթացքը, ուղղութիւնը, դիտումները կենսական նշանակութիւն ունին Հայ ժողովրդին նկատմամբ: [...] Բայց, մենք, մեր մասին ... չենք կրցած համոզուիլ թէ Օսմանեան» Քօմիթէն հայերը ջարդել տալ ուզած ըլլայ»:<sup>10</sup> Հայկական լիազոր անձինք գիտակցում են, որ իրենց պահանջների համար գոյություն ունի մի սահման, որի հատումը կարող է հանգեցնել նոր կոտորածների: Սեպտեմբերի 6-ին Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ) ՄԱԿ-ի հետ ստորագրում է մի համաձայնագիր, որի համաձայն երկու կուսակցությունները պարտավորվում են «աշխատել համատեղ՝ ի նպաստ առաջադիմության, սահմանադրության և միության» և ստեղծում են խառը հանձնաժողովներ՝ հայերին առնչվող հարցերը քննարկելու համար: «Հնչակյան» կուսակցությունը դատմում է ընդդմադիր, իսկ «Ռամկավար» կուսակցությունը, պահպանելով սերտ հարաբերությունները երիտրուրքերի հետ, մերկացնում է այս համաձայնագիրը: 1911 թ. ՄԱԿ-ը ավելի քան լի էր հետադիմական տարրերով: Հիմքի կառավարության անկումը և նրան փոխարինած Հարի բեյի նշանակումը, որը 1909 թ. ապրիլին տարածել էր հայկական ապստամբությանը վերաբերող ասեկուսներ, ցույց է տալիս, որ հայերն այլևս չեն կարող հարցերով դիմել Դասնը:

Կարելի է արդյո՞ք այն փաստագրական նյութի հիման վրա, որն այսօր ունենք մեր տրամադրության տակ, ձևակերպել ՄԱԿ-ի կենտրոնական կոմիտեի, որի նստավայրը Սալոնիկում էր, Կիլիկիայի կոտորածներում ներգրավված լինելու վարկածը: Այս հարցը կարող է օրինականորեն ձևակերպվել, որովհետև 1909 թ. ապրիլին կենտրոնական ՄԱԿ-ը իր արտօգնա բանագնացների և տեղական ակումբների միջոցով հսկում էր պետական կառավարման մարմինները: Իրոք որ, մինչև 1909 թ. մարտ ամիսը երիտրուրքերը նշանառության տակ էին վեցրեկ ալբանացիներին՝ անջառողականության մեջ մերկացնող մահմեդականների, որոնք իրենց ընդհատակյա հավատարիմ դաշնակիցներին էին: Այս պարագայում Եվրոպան չէր կարող երիտրուրքերին կասկածել քրիստոնյաներին հալածելու մեջ: Իրականում, ՄԱԿ-ը արդեն ծրագրում էր երկրի թրացումը: Այս համատեքստում Կիլիկիայի տնտեսական զարգացման ընթացքը, զարգացում, որը պայմանավորված էր հայերի գործունեությամբ, կարող էր նրան դրդել «խոչընդոտելու այդ զարգացմանը մի տարածաշրջանում, որը 1895-1896 թթ. համիլյան կոտորածների ընթացքում մասսամբ խնայվել էր»:<sup>11</sup> Կոտորածների մասնակից սպաների ծառայողական առաջընթացը, կարգ ու կանոնը պահպանած պաշտոնյաների փոխարինումը կամ պաշտոնանկությունը հաստատում են այս վարկածը: Աղոթիանդերձ, դրանք մեր տրամադրության տակ եղած միակ տարրերն են, որոնք իմբր են տալիս առաջադրելու այս վարկածը: Կարելի է միայն պնդել, որ խթանելով մահմեդական բնակչության կրոնական մոլեռանդությունն ու ատելությունը՝ պետության և ՄԱԿ-ի տեղական մարմինները կազմակերպել են կոտորածի առաջին ալիքը, որ ներքին գործերի նախարարության խորհրդականը ոչինչ չի արել՝ ջարդարարներին խոչընդոտելու համար և, որ կարգ ու կանոնը վերահաստատելու համար ուղարկված բա-

10 Նոյն տեղում, էջ 128: [Տնա նաև «Բյուզանդիոն», 1909, թիվ 3924:] – Ծ. թ.:

11 R. Kévorkian, նշվ. աշխ., էջ 141:

նակը շատ արագ տեղի է տվել նվազագույն սադրանքի առջև՝ սպանելու համար նրանց, ոմ պաշտպանելու համար եկել էր:

**Կիլիկիայի կոտորածները: 1915 թ. ցեղասպանության նախերգանը**

Այս իրադարձությունների լուսի ներքո կարելի է հավաստել, որ 1909 թ. զանգվածային բռնությունը հատել է տպորական սահմանը. Ամբողջ մի տարածաշրջան մատնվել էր անիշխանության, քրիստոնյա քաղաքացիները, նախ և առաջ հայերը, սպանվել են առանց տարիքի և սերի խորականության: Կարելի է, այսպիսով, եզրահանգել, որ այս պարագայում խոսքը վերաբերում է տեղական մակարդակով իրականացված ցեղասպանական մի ձեռնարկումի մասին: Հայ ազգության բնաջնջումն արդյո՞ք այն ժամանակ ըմբռնելի էր զոհերի կողմից: Մարդասպաններն արդյո՞ք ծրագրել էին կոտորածներն իրքն ապագա ոչնչացման փորձարկման միջոց: Այս երկակի հարցին պետք է ժմտական պատասխան տալ:

1909 թ. չկար ոչ մի նախադեպ այն բանի, ինչը XX դարում երևան եկավ իրքն ցեղասպանություն՝ պետության կողմից իր քաղաքացիների խմբի կանխամտածված բնաջնջում: Հետագա իրադարձությունները վերաճելով հարաբերական սպառնալիքից կենսական սպառնալիքի՝ ՄԱԿ-ին մղեցին փոփոխելու իր ծրագիրը: Ցեղասպան այս գործընթացի փուլերը լավ բացահայտված են. Քաղանյան պատերազմները հանգեցնում են օսմանյան զրեթե բոլոր եվրոպական տարածքների կորստին և Անտողիայում թուրքերի նահանջին, և այս հիշաշարությունը խանողավառում է երիտրուրքերի գաղափարախոսությունը և դրդում անցում կատարելու դեպի պանթուրքիզմ: Դեպի Ասիա նահանջի ճանապարհին հայերը դիտվում են իրքն թուրքերի ծավալման զիսավոր խոչընդոտ, տեղությունների հովանակորությունը, որն առարկայական է դառնում 1914 թ. փետրվարի 8-ի համաձայնագրով՝ անհետանում է Օսմանյան կայսրության կողմից պատերազմի հայտարարումից հետո, միաժամանակ հայերը թուրքերի համար վերածվում են կենսական սպառնալիքի: 1909 թ. այս գործընթացին թափ չի հաղորդվում: Եթե հնարավոր լիներ կանխազգալ բնաջնջման սպառնալիքը՝ հայկական համայնքի լիազոր ներկայացուցիչներն անկարող կլինեին այն կանչել: Այլընտրանը պարզունակ է և նույն է այն բոլոր քաղաքացիների համար, որոնք սուսում են դառնալու ամբողջատիրական պետության զոհերը՝ ճամպրուկ կամ դագաղ. Վատասեսները դառնում են վտարանդիլության ալիքի տեղիք էին տվել, Կիլիկիայի կոտորածները չեն ունեցել միևնույն ազդեցությունը: Վտարանդի դառնալն այն ժամանակ, այդուհանդերձ, հայի համար խոսափելու միակ միջոցն էր 1915 թ. ցեղասպանությունից:

XX դարում տարբեր վայրերում և տարբեր հենքի վրա իրականացված երկու ցեղասպանության համեմատությունն ընդգծում է ապագա զոհի համար ցեղասպանության սպառնալիքը կանխազգալու բարդությունը, այն դեպքում, եթե հանցագործ պետությունը դեռևս չի պատկերացրել, առավել ևս չի հղացել գաղափարական և (կամ) քաղաքական «վերջնական լուծումը» մի հարցի, որն իր պատկերացմանը առաջարկում է փորբանականությունը: 1933 թ. մինչև 1939 թ. Գերմանիայի իրեաները, մեծ մասամբ հասարակության մեջ ինտեգրված քաղաքացիները, աստիճանաբար ծավալվող հակասեմական գործողությունների և խորականության հիման վրա տեղի ունեցող միջոցառումների ու հարածուն վտարումների զոհերն են: Գերմանական «սոցիալական կորպուսը» նրանց աստիճանաբար վանում է, ոմանք դառնում են վտարանդի, այլք՝ ինքնասպան լինում, սակայն մեծամասնությունը մնում է տեղում: Նախքան Հիտլերի «մարգարեությունը», որը հայտնում է, թե պատերազմի բռնկման պարագայում համաշխարհային հուդայա-

կանությունը կրնազնջվի, անգամ 1938 թ. նոյեմբերին Բյուրեղապակե գիշերվանից<sup>12</sup> հետո ոչինչ թույլ չի տախս ենթադրելու ցեղասպանության մնտալուս վտանգի մասին։ 1959 թ. թուրքիների կոտորածների առաջին ալիքն ամայացնում է Ռուսանդան։ բեղդիական զաղութատիրությունը ռուսնական հասարակությունն արհեստականորեն բաժանել էր էթնիկական երկու խմբի։ հուսուների մեծամասնությունը կրուտաքար ձրգուում էր վրեժիների լինել թուրքիների փոքրամասնությունից, որը ներկայացված էր իբրև դեկավառող վերնախսավ։ Այս առաջին ալիքը, ինչպես և հաջորդները՝ մինչև 1990 թ., զարկ են տախս վտարանիությանը։ Ակսած այս պահից և ի տարրերություն երկու նախորդ իրավիճակների, ապագա զոհերը՝ թուրքիները, գիտակցում են ցեղասպանության անխուսափելի սպառնալիքը, իսկ 1994 թ. հունվարից ի վեր իրազեկված միջազգային հանրությունը ոչինչ չի ձեռնարկում այս վտանգը կանխելու համար։

Եզրափակենք։ 1909 թ. Կիլիկիայում բռնությունը հատել է սովորականի սահմանը։ ավանդական կրոնական ատելությունը զուգակցվում է սոցիալական հիշաչարությանը։ Բացի դրանից, կոտորածները վրա են հասնում այն ժամանակ, երբ գործող իշխանությունը վճռել էր ստեղծել ազգային պետություն, որտեղ հայերը չունեն իրենց տեղն իբրև այդպիսիք, ինչը չի համապատասխանում 1895 թ. պարագային, երբ սուլթանը ցանկանում էր միայն դաս տալ հայերին մի կայսրությունում, որտեղ նրանք կարող էին ապրել իբրև փոքրամասնություն։ Սակայն, եթե անզամ ՄԱԿ-ը չէ, որ կյանքի է կոչել բռնության այս սանձազերծումը Կիլիկիայում, ապա այն դրա մասնակիցն է դարձել տեղական մակարդակի վրա։ 1909 թ. մահմեդական բնակչությունն, այսպիսով, պատրաստ է, ինչպիսին և եղել է 1895 թ., կոտորելու քրիստոնյաներին այդպիսի հրաման տրվելու պարագայում (ջիհադի)։ Այդուհանդերձ, ՄԱԿ-ի դիրքորոշումը կոտորածներից հետո թույլատրում է որոշ հույսեր տածել օսմանյան փոքրամասնությունների ճակատագրի բարեկաման առումով, սակայն այս հույսերը կչքանան 1913 թ.։ Մեկ դար անց, կարելի է 1909 թ. կոտորածները կանխազգալ իբրև 1915 թ. ցեղասպանության նախերգանք, այն դեպքում, երբ 1909 թ. ոչ ապագա մարդասպանը և ոչ ապագա զոհը չեն կարող անզամ ըմբռնել հանցագործ իրավախսախտումը, որի առանձնահատկությունը նոյնիսկ չէր ճշգրտվել։

Ֆրանսերենից թարգմանեց՝ Վարուժան Պողոսյանը

Yves Ternon

### Cilicia 1909. Was it possible to foresee the threat of Genocide?

Summary

The article tries to find an answer to the important question whether the massacre of Cilicia could have played a decisive role in the prevision of the Genocide in 1915. Several important circumstances such as the initial perception of the massacres, the questions put forward and the probability of being a prelude to the Genocide in 1915, have been taken under investigation.

<sup>12</sup> 1938 թ. նոյեմբերին, Փարիզում մի հրեայի կողմից Գերմանիայի դեսպանության խորհրդականի սպանությունից հետո, նացիստական ամբոխը կողոպտում է հրեաների խանությունը և հրկիզում սինազոգները։

## ԱԴԱՆԱՅԻ ԶԱՐԴԵՐՆ ԱՎԱՏՐԻԱԿԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ

Արտեմ Օհանջանյան

Ցանկանում եմ առանց մեկնաբանությունների վերարտադրել Աղանայի վիլայեթու տեղի ունեցած իրադարձությունները, որոնք արձանագրվել են Մերսինում Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Դարասի հավաստի հաղորդագրություններում, և որոնք նա ուղարկել է Թուրքիայում ավստրո-հունգարական պաշտոնական մարմիններին: Այդ գրառումները դիպոլի և մերկացնող կերպով նկարագրում են Աղանայի իրադարձությունները:

«15-ը ապրիլի 1909թ.

Հայեայի ավստրո-հունգարական հյուպատոսություն

Պարոն Հյուպատոս,

Ինձ թույլ եմ տախի Ձեզ ուղարկել այն հեռագրերի պատճենները, որոնք ես երեկ և այսօր առավոտյան հանձնել եմ Կոստանդնուպոլիսի դեսպանատանը, Ձեր հյուպատոսությանը, ինչպես նաև Աղանայի վայիին՝ երեկվանից այնտեղ հայերի ջարդերը շարունակելու կապակցությամբ: Այն բանից հետո, եթք անցյալ շաբաթ ինքնապաշտպանության նպատակով մի հայ երկու մահմեդական էր սպանել, Աղանան այժմ ալեկոծության մեջ է:»<sup>1</sup>

Մի հայ երիտասարդ իր պատիվն ու կյանքը հինգ մահմեդականներից պաշտպանելու համար կրակել էր վերջինների վրա, որի հետևանքով երկուսը մահացել էին: Երեքշարքի երեկոյան, ապրիլի 13-ին, ամբոխը զնացել էր զիսավլոր նահանգապետի մոտ և պահանջել իրեն հանձնել հայ մարդասպանին՝ նրան հրապարակայնորեն մահապատճի ենթարկելու համար, և քանի որ արդյունքի չէին հասել, նետվել էին փողոց և սպանել առաջին խսկ պատահած հային...

Չորեքշարքի, ապրիլի 14-ին, քաղաքով մեկ տարածվեց «Ման քրիստոնյաններին» կոչը: Այնուհետև մուսուլմանների սպիտակ շալմայավոր և մահակներով զինված հրոսակախմբերը դիրքավորվեցին տարրեր մզկիթների առջև և սկսեցին սպանել անցնող քրիստոնյաններին: Նրանց հետևեցին կողոպտիչները և կարճ ժամանակ անց Աղանայի շուկան թալանված և ավերված էր ... Չոհվեցին շատերը, ամենից առաջ դաշտից վերադարձները, որոնք անտեղյալ էին Աղանայում պատահած մասին, նրանք քաղաք վերադարձնալիս անողոքարար սպանվեցին:»<sup>2</sup>

Հայերն էլ իրենց հերթին խրամատավորվեցին իրենց թաղամասերում և սպանեցին այդտեղով անցնող մահմեդականներին: Չոհերի ստուգ քանակը չենք կարող նշել. մոտավորապես երկու հազար, որոնցից մոտ 30 մահմեդական որոնցից չորսը զինվոր, խսկ մնացած՝ հայեր ու երկու կամ երեք հույն:»<sup>3</sup>

«15.04.09

Ծառապ. Ավստրիական դեսպանատուն, Կոստանդնուպոլիս:

Աղանայում շարունակվում են ջարդերը, կողոպուտն ու իրկիզումները, տեղեկություններ ենք ստանում Տարսոսի դժվար վիճակի մասին, քանակի դեկավարությունը կասկածութ է հարուցում, փողոցները լի են վտանգով, իրադրությունը՝ խիստ քարդ է: Զարիքը

1 Österreich-Ungarn und Armenien 1872-1936, Sammlung diplomatischer Aktenstücke, in 12 Bänden, Wien, 1995, էջ 3368:

2 Նոյն տեղում, էջ 3396:

3 Նոյն տեղում, էջ 3369:

գնալով ավելի է մեծանում: Զեյթունից գալիս է զինված հայերի մի մեծ խումբ»:<sup>4</sup>

«15.04.09

Շտապ. Ավստրիական դեսպանատուն, Կոստանդնուպոլիս:

Մահմեդականների և հայերի միջև սաստիկ կրիվները շարունակվում են և տարածվուս մյուս քաղաքներում: Աղանձն մեծ մասամբ հրդեհված է, պետական օգնությունն անհնար է, խնդրում ենք շտապ կարգադրություններ անել: Ավերածությունները նոր թափ են ստանում և շարունակվում: Նոր հրաման է արձակվել միայն հայերին սպանելու, իսկ այլ քրիստոնյաներին՝ առաջին հերթին օտարերկրացիներին, հարգանքով վերաբերվելու մասին»:<sup>5</sup>

«16.04.09

Ավստրիական դեսպանատուն, Կոստանդնուպոլիս:

Անհուսափի իրադրություն է, ջարդեր, կողոպուտ, հրդեհներ Աղանայում, Տարսուսում: Խուճապային իրավիճակ Մերսինում»:<sup>6</sup>

«17.04.09

Ավստրիական դեսպանատուն, Կոստանդնուպոլիս:

Մերսինի մուրասարիֆ լեյտենանտ Լուֆթի բեյի<sup>7</sup> շնորհիվ հանգիստը պահպանվում է: Տարսուսում հրդեհվել է հայկական եկեղեցական թաղամասը: Սարսափելի կողոպուտ, ջարդեր»:<sup>8</sup>

«19.04.09

Ավստրիական դեսպանատուն, Կոստանդնուպոլիս:

Վիլյեթում շարունակվում են ջարդերը, կողոպուտը, հրդեհները, զյուղատնտեսական մշակվող հողերը հրդեհվում և կողոպսվում են: Զոհերի թիվը 15000 է, նյութական կորուստը հնարավոր չէ հաշվել: Մեզարեն ավերվել է, օտարերկրյա ոչ մի նավ չի ժամանում»:<sup>9</sup>

«(27.)22.04.09

Փերա, հեռազիր Պալավիշինին Վիեննա:

Դրությունը ամսի 16-ից ճգնաժամային է: Հալեպի Զամրին Քրիստոն գյուղն ամբողջովին այրված է և հայերն սպանդի ենթարկված: Անթարիայում 328 հայի կոտորել են Վարդասլիկի, Ասիկի, Սասուի, Քեսարի, Իսկանդարունի շրջակայքի գյուղերը մասամբ վառված են և հայերը սպանդի ենթարկված: Բազմաթիվ բռնարարված կանայք և աղջիկներ երեխանների հետ թափառում են սարերում և սովամահ են լինում: Դորթյունը քրդերի և չերքեզների ջոկատները 7000 հոգու պաշարել են՝ մինչև նրանք սովամահ լինեն: Իսկ իշխանության մարմնները միայն դիտում են: Այսօր առավոտյան անզիխական, ֆրանսիական և իտալական հրամանատարների ճնշման ներք օսմանյան մի նավ ուղարկվեց Դորթյուն՝ պաշարվածներին փրկելու համար: Արդյունքը արժանի չէ իշխատակման»:<sup>10</sup>

4 Նոյն տեղում, էջ 3374:

5 Նոյն տեղում, էջ 3398:

6 Նոյն տեղում, էջ 3374:

7 Նոյն տեղում, էջ 3405:

8 Նոյն տեղում, էջ 3375:

9 Նոյն տեղում:

10 Նոյն տեղում, էջ 3392:

## Արտեմ Օհանջանյան

«25.04.09

Ավստրիական դեսպանատուն, Կոստանդնուպոլիս:

Հինգ օստարերկյա ռազմական նավերի (անգլիական, ֆրանսիական, իտալական, գերմանական և ռուսական) ժամանումը կրկին վերականգնեց վստահությունը, հույս առաջացավ, որ մի քանի օրից Աղանայում նոյնպես իրադրությունը կրարեալվի, եթե Սալոնիկից ժամանած Կոմիտեի բանակը, ինչպես հանձնարարված էր, ավարտին հասցրեց ավերման ու ոչնչացման գործը: Ռազմական նավերի սպաներն այդ վերջին իրադարձությունների լուս վկաները դարձան: Նրանց ներկայությամբ զինվորները բաշխում, հրդեհում և կոտորում էին:<sup>11</sup>

«Երկրի խորքերում գտնվող գյուղերում քիչստոնյա բնակչությունը ենթակա է սարսափելի ոճագործությունների: Մահմեդականները ցանկանում են քրիստոնյաների արյունը: Ըստ ընդհանուր կարծիքի, ջարդերը դիտվում են որպես գրեթե բոլոր քրիստոնյաներին վերացնելու նախապատրաստություն: Կրոնական կամ քաղաքացիական դեկավարությունը կամ անվանի մահմեդականները ահազանգ են հնչեցնում: Մարդկային կորուստը կազմում է 20 000 քրիստոնյա»:<sup>12</sup>

«26.04.09

Ավստրիական դեսպանատուն, Կոստանդնուպոլիս:

Անցյալ զիշեր սարսափելի լուրեր ստացվեցին Աղանայից: Վերջերս ժամանած զորքերը հրդեհում են հայկական քաղամասը, սպանում փախչողներին: Մեծ է տագնապը: Բանակը գնալով ավելի է բորբոքվում, բնակչությունը սարսափահար է, մեծ խուճապ է տիրում: Կառավարության տրամադրության տակ կա 4 000 զինվոր»:<sup>13</sup>

«27.04.09

Ավստրիական դեսպանատուն, Կոստանդնուպոլիս:

Աղանան հոդի ու մոխրի է վերածվել, գրեթե բոլոր հայերին կոտորել են:<sup>14</sup>

Կառավարությունը փորձում է այդ վերջին աղետը վերագրել հայերին և պնդում է, թե նրանց քաղամասը մի ծեր կին է հրդեհել, և որ հայերը դա որպես հեղափոխական դեպք են ներկայացնում: Սակայն իրականությունը հակառակի մասին է աղաղակում. իմ բոլոր գործընկերները, ինչպես նաև ռազմանավերի հրամանատարները՝ այդ սարսափելի տեսարանների ականատեսները, միաձայն հայտարարել են, որ այդտեղ խոսքը ջարդերի մասին է, որոնք կազմակերպվել են քրիստոնյաների դեմ և հետո սահմանափակվել միայն հայերով: Սա, Ձերդ Գերազանցություն, իմ անձնական համոզմունքն է, որ հիմնվում է իրադարձությունների վրա ու նաև այստեղի ուսյալ և երկրի ներսում գտնվող ունարը մուտքամանների հայտարարությունների վրա, որոնց հետ եւ առևտրական կապերի մեջ եմ, և որոնք ինձնից չեն թաքցնում, որ հրամանը տվել են տեղական մարմինները՝ կոչ անելով զինվել և պատրաստ լինել...<sup>15</sup> Մարդկային կորուստը գնահատվում է 30 000, որից 2000 -ը ուղղափառ և կաթոլիկ հոյներ են, 300-ը մուտքման, իսկ մնացածը՝ հայեր:<sup>16</sup>

Նոր վային խոստանում է կարգ ու կանոն հաստատել, բայց դա նրան դժվարությամբ կհաջողվի, Աղանայում շարունակվում են հրդեհներն ու սպանությունները: Զինվորական

11 Նոյն տեղում, էջ 3401:

12 Նոյն տեղում, էջ 3375:

13 Նոյն տեղում:

14 Նոյն տեղում:

15 Նոյն տեղում, էջ 3402:

16 Նոյն տեղում, էջ 3403:

նոր պարետը ռազմական իրավունք է սահմանել, իսկ ռազմական դատարանը 5-րդ բանակային կորպուսի մյուլուրի նախագահությամբ շուտով տեղկայվելու է Աղանայում։ Արդեն ձերքակալվել են մոտ 300 մեղավորներ, սակայն բոլորն էլ հայեր են, և կարելի է մտավախություն ունենալ, որ այս ամբողջ դժբախտությունից ու ջարդերից հետո, նրանց կմեղադրեն նաև հեղափոխական լինելու մեջ, և որ նրանք ստիպված կլինեն նաև քավել մուսուլմանների կատարած մեղքերը։<sup>17</sup> Այժմ, երբ ամեն ինչ թալանված ու կողոպտված է, ամեն օր ժամանում են զինվորական նորանոր միավորումներ, թվով 8 000 զինվոր։ Այդքան զինվորներ ուղարկելը կարծես ոչ մի այլ նպատակ չունի, քան հաստատելու այն, որ այստեղ խոսքը հեղափոխության մասին է...<sup>18</sup>

Երբ հայ կաթոլիկ եպիսկոպոս Թերզյանը դատարանին ներկայացրեց իր ծխականների վերջին ջարդերի զուցակը, և դեռ ներկայացրեց հանցագործների անունները, նրա հետ վարվեցին որպես խարերայի և ստախոսի։ Այդ պարագայում ոչ մի քրիստոնյա այլևս չի համարձակվի ներկայանալ։<sup>19</sup>

Մի քանի մահմեղական էլ է ձերքակալվել և բանտարկվել, սակայն դրանք ցածր դասի մարդիկ են, ավելի շուտ պասիվ մասնակիցներ, քան իրակրողներ։ Նրանց ձերքակարտումը, սակայն, նրանց համախոհներին վարանման առիթ տվեց և մի քանի խոչաններ սպառնացին ռազմական դատարանին, որ նորից կակսեն ջարդերը, եթե նրանք դատապարտվեն... Միակ նպատակը, որ վային դրել է իր առջև, որն առանց բացառության նաև քաղաքական և ռազմական վերճախավի նպատակն է, եվրոպացիների աշքում աղետայի իրադարձությունների չափերը մեղմելն ու ամբողջ մեղքը հայերին վերագրելն ու մահմեղականներին որպես զոհ ներկայացնելը...<sup>20</sup>

Ըստ մեր նոր տեղեկությունների, զոհերի թիվը զգալիորեն անցնում է 40 000-ի սահմանը։ Մի խոսքով, սա հայերի խսկական բնաջնջում է ... Գրեթե բոլոր կանանց ստիպել են ընդունել մահմեղականություն իրենց կյանքը փրկելու և հարեմները զարդարելու համար...»։<sup>21</sup>

1909թ. հուլիսի 21-ին Կոստանդնուպոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիշին Վիեննա է հաղորդում ռազմական ատյանի դատավարությունների մասին։

«Ռազմական դատարանը տիսոր իրադարձությունների պատասխանատվության որոշ մասը բարդում է հայ բնակչության վրա, մեղադրելով նրան անջատողական միտումների և մուսուլմանական տարրին սաղրելու մեջ ... Դատարանը, սակայն, միաժամանակ փաստում է մուսուլմանների կրքերի բավականին բացահայտ բորբոքման մասին, որոնք ինչ որ մի պահ հավատացել են, թե հայերի ջարդերը «կարգադրված են իշխանությունների կողմից, ինչպես 1896-ին»։ Այսուհետև նա նշում է այս սոսկայի ցավերի մասին, որոնք ստիպում են դատարանին «սարսափից դողալ» և ի վերջո հաստատում է իշխանությունների մեղքը, որոնք չեն կարողացել արգելել ջարդերը և դրանց դեմք առնել։ Ռազմական դատարանը ներկայացնում է նաև մահապատճի ենթարկվողների քանակը և, եզրափակելով հաշվետվությունը, նշում, որ արդարությունն ամբողջապես իրագործվելու պարագայում Աղանայի վիլայեթի ամբողջ բնակչությունը կհայտնվեր քանտում։ Այդ պատճառով նա հանդես է գալիս համաներնան օգտին ... Խորհրդարանի խոսնակը հարցմանն ի պատասխան ասել է, որ ողբերգական իրադարձությունները մոռացնության շղարշով պատելու և Աղանայում մու-

17 Նոյն տեղում, էջ 3404։

18 Նոյն տեղում, էջ 3405։

19 Նոյն տեղում, էջ 3426։

20 Նոյն տեղում, էջ 3427։

21 Նոյն տեղում, էջ 3428։

## *Արտեմ Ohanjanyan*

սուլմանների և հայերի միջև հաշտության հասնելու նպատակով Սահմանադրության տոնի արքիլ պետք է համաներում հայտարարվի»:<sup>22</sup>

Հետաքրքիր են համարում նաև Տրապիզոնում Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Մուրիցի մեկնարանությունը, որը վերաբերում է Աղանայի դեպքերին և այնուղի տեղի ունեցած ջարդերին.

1909 թ. սեպտեմբերի 9-ին նա գրում է «Պալավիչինիին».

«Հայերը մինչև իհմա աջակցում են երիտրուրքերին, որոնց նրանք պարտական են Արդուլ Համիլի սարսափելի բռնակալությունից և նրա դահիճների չթուլացող հետապնդումներից և խոշտանգումներից ազատվելու համար, և այն ակնկալիքով, թե կվարձատրվեն իրենց ծառայությունների դիմաց: Աղանայի ջարդերը և քրդերի գնալով ավելի հաճախակի դարձող հարձակումներն ու սպանությունները սակայն, նրանց սովորեցնում են, որ ստիպած են նոյնիսկ սահմանադրական ռեժիմում զգուշություն հանդես բերել: Իրապես չի կարելի սպասել, որ նրանք իրենց սրտերում սեր տածեն թուրքի հանդեպ»:<sup>23</sup>

### Artem Ohanjanyan The Massacres of Adana Summary

The article examines the events that took place in Adana vilayet, and were recorded in Mersin in the authentic notifications of the Austria-Hungarian consul who sent them to the Austria-Hungarian official bodies in Turkey. The Austrian records in the article describe the events in Adana in a very accurate and disclosing way.

22 Նոյն տեղում, էջ 3460-3464:

23 Նոյն տեղում, էջ 36, 88:



Անհա Ավերսանյան – ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան – ինստիտուտի գիտական աշխատող: Զբաղվում է «Արևմտահայ կանանց շարժումը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին» թեմայի ուսումնասիրությամբ:

Արփինե Բարլումյան – պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն: Զբաղվում է Արևմտյան Հայաստանի հայ բնակչության ժողովրդագրության ուսումնասիրության հարցերով սկսած 19-րդ դարի վերջից մինչև 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանությունն ընկած ժամանակահատվածը:

Արամայիս Բալոյան – պատմական գիտությունների թեկնածու, Մատենադարանի գիտական աշխատող: Զբաղվում է Հայոց ցեղասպանության խնդրում օտար տերությունների (մասնավորապես Խոսակայի) դիրքորոշման ուսումնասիրության հարցերով:

Հայկ Դեմոյան – պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն: Գիտական հետարքրությունների շրջանակն ընդգրկում է Հայոց ցեղասպանության, Թուրքիայի արտաքին քաղաքականության, Ղարաբաղյան հիմնահարցի, հայ ինքնության և ռազմարվեստի պատմության խնդիրները:

Ռայմունդ Գևորգյան – ֆրանսահայ պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Հեղինակ է Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ արժեքավոր աշխատությունների:

Տաթևիկ Ղալթաղյան – ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական աշխատող: Զբաղվում է 1908-1914 թթ. արևմտահայ մամուլի պատմության ուսումնասիրությամբ:

Սուրեն Մանուկյան – պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն: Ուսումնասիրում է Հայոց ցեղասպանության մեջ հասարակության տարրեր շերտերի ներգրավվածության հարցը:

Էվա Մերենիչ - Բուղապետի Կորվինոս համալսարանի ասպիրանտ: Գիտական հետարքրությունների մեջ է մտնում «Հայոց ցեղասպանության ներքին և արտաքին ազդեցությունների» ուսումնասիրությունը:

Արամ Միրզոյան – պատմական գիտությունների թեկնածու: Զբաղվում է Հայոց ցեղասպանության մի շարք հիմնահարցերի, մասնավորապես, հայ պատմագրության մեջ Գերմանիայի մեղսակցության հարցի քննարկման հետազոտությամբ:

Սեդա Պարսամյան – ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ավագ գիտաշխատող: Զբաղվում է մշակութային ցեղասպանության, Թուրքիայում հայկական մշակութային ժառանգության ոչնչացման խնդիրների ուսումնասիրությամբ:

Ռուբինա Փիրումյան – Կալիֆոռնիայի համալսարանի դասախոս: Հեղինակ է Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանը նվիրված բազմաթիվ աշխատությունների:

Վարուժան Պողոսյան – պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ պատմության

ինստիտուտի գիտական աշխատող: Զբաղվում է ֆրանսիական պատմագրության մեջ Մեծ Եղեռնի թեմայի քննարկման ուսումնասիրությամբ:

Հարություն Սելիմյան – Հայ ավետարանչական համաշխարհային խորհրդի նախագահ:

Հասմիկ Ստեփանյան – պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող: Զբաղվում է հայատառ թուրքերեն գրականության ուսումնասիրությամբ:

Անի Ոսկանյան – ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտաշխատող: Ուսումնասիրության թեման է «Օսմանյան բանակը և հայ զինվորականությունը նրա կազմում»:

Վերժինե Սվագլյան – բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող: Գիտական հետազոտությունների առարկան Հայոց ցեղասպանության վերապրածների հուշերն ու պատմական բնույթի երգերն են:

Իվ Տերնոն – Փրանսիացի պատմաբան: Հեղինակ է Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ արժեքավոր աշխատությունների:

Արտեմ Օհանջանյան – ավատրիահայ պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Ուսումնասիրում է Հայաստանի պատմության և Հայոց ցեղասպանության հիմնահարցերն ըստ ավատրիական վավերագրերի և սկզբնաղյուրների:

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՆ

**Հրաչիկ Սիմոնյան.** Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, ԵՊՀ հրատ., 2009, 530 էջ:

1909 թ. կիլիկյան կոտորածների պատմությանը և պատմագրությանը նվիրված մենագրությունների թվում իր ուրուց տեղն ունի ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանի հիմնարար մենագրությունը, որը բաղկացած է չորս գլուխց, ներածությունից, վերջարանից, հավելվածներից, օգտագործված առյութների և գրականության, անձնանունների և տեղանունների ցանկերից: Հավելվածում հրապարակված են ամերիկյան «Նյու Յորք Թայմ» թերթում 1909 թ. տպագրված հոդվածներ և թղթակցություններ, իրադարձության պատկերն արտացոլող մեծ թվով լուսանկարներ, համացանցային կայրում տեղադրված փաստաթուղթ՝ «Աղանայի քրիստոնյանների հոգևոր պետերի՝ սուլթան Մուհամմեդ Ե-ին հղած 17 հունիսի 1909 թ. խնդրանք-բողոքագիրը»:

Հր. Սիմոնյանը շրջանառության մեջ է դրել մեծարանակ հայկական արժանահավատ սկզբնաղբյուրներ, առաջին անգամ օգտագործել հայենական արխիվներից (ՀՀ ազգային արխիվ, Մատենադարան, Գրականության և արվեստի թանգարան) քաղլած բազմապիսի անտիկ վավերագրեր, որոնք մեծապես նպաստել են տարբեր հիմնախնդիրների առավել խորն ուսումնասիրությանը: Աշխատությունը հիմնվում է նաև տարբեր կողմնորոշումներ ունեցող հայկական պարբերականների հարուստ նյութերի, ինչպես նաև հայ ականատեսների ու գործիչների վկայությունների վրա, որոնք հեղինակին հնարավորություն են ընձեռել մանրագնին վերլուծել բազում կնճռոտ և առ այսօր տարակարծությունների տեղիք տվող հիմնահարցեր: Հիշարժան են նրա մեկնարանությունները կիլիկյան կոտորածների կազմակերպիչների բացահայտման ուղղությամբ. հեղինակը դրանց պատասխանատվությունը վերագրում է երիտթուրքերին:

Հր. Սիմոնյանի ամենամեծ արժանիքներից է կիլիկիահայության ոչնչացման գործընթացի մանրագնին ուսումնասիրությունը: Նա հանգամանորեն ուրվագծում է կոտորածների ընթացքը, ըստ բնակավայրերի, ոչ միայն տարածաշրջանի մեծ քաղաքներում (Աղանա, Տարսոս, Մերսին և այլն), այև Աղանայի ու Հալեպի վիլայեթների գյուղերում և գյուղապետարաններում, բացահայտում նաև դրանց ծավալման առանձնահատկությունները տարբեր վայրերում:

Հաստ պ. գ. դ. Վ. Դողոսյանի գրախոսության (Պատմարանասիրական հանդես, 2009, թիվ 1)

**Վարուժան Պողոսյան**, 1909 թ. հայկական կոտորածները Կիլիկիայում ֆրանսիական պատմագրության զնահատմանը, Երևան: «Նահապետ» հրատ., 2009, 144 էջ:

Աշխատությունը նվիրված է 1909 թ. կիլիկիահայության կոտորածների՝ ֆրանսիական պատմագրության կողմից կատարված անդրադարձների քննական վերլուծությանը: Հեղինակը քննության է առնում Հայոց ցեղասպանության իշշալ կարևոր փուլի ուսումնամասիրության ասպարեզում ֆրանսիական պատմագրության ներդրումը XX դարի 10-ական թվականներին սկսած կոտորածների սանձազերծումից մինչև երիտրուրքերի իշխանության տապալումը: Այս աշխատության կարևորությունը մեծ է հատկապես Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական քաղաքականության դեմ պայքարելու տեսանկյունից: Շրջանառության մեջ դնելով փաստական հարուստ նյութեր՝ Վ. Պողոսյանն ընթերցողին ապացուցում է, որ քննարկվող ժամանակահատվածում ֆրանսիական պատմագրությունն արժանի հակահարված է տալիս պատմության թուրք և այլազգի կեղծարարներին: Ֆրանսիացի ուսումնասիրողները պարզուց ցույց են տալիս, որ Հայոց ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում իրականացվում էր պետական քաղաքականության նակարդակով, կրում էր կազմակերպված բնույթ, իսկ կազմակերպիչները փորձում էին պատասխանատվությունը բարդել հենց զոհի վրա:

Վ. Պողոսյանն անդրադարձում է 1909 թ. կիլիկիահայության կոտորածների առնչությամբ իրադարձությանը ժամանակակից ֆրանսիացի հեղինակների տարակարձություններին և գտնում, որ կոտորածների պատասխանատվությունը, անտարակույս, ծանրանում է առաջին հերթին երիտրուրքերի վարչակարգի վրա, որը 1909 թ. մարտի 31-ի դեպքերից ավելի վաղ էր ծրագրել և նախապատրաստել կիլիկիահայության բնաջնջումը, սակայն միաժամանակ փաստում, որ դրա իրականացմանը մեծապես նպաստել են նաև համիլյան վարչակարգի ներկայացուցիչները:

Այս թեման նախկինում չի դարձել առանձին ուսումնասիրության առարկա, հետևաբար Վ. Պողոսյանի աշխատությունը կարևոր ներդրում է Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ:

Հստ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ. գ. դ. Բ. Հարությունյանի առաջարանի

*Georges Brézol, Les Turcs ont passé là..., Paris, 1911, 400 p.*

**Ժորժ Բրեզոլ, Այստեղով թուրքերն են անցել..., Փարիզ, 1911, 400 էջ**

Ժորժ Բրեզոլ գրող, ճանապարհորդ: Այս կեղծանվամբ է հանդես եկել հայազգի Պետրոս Ազնավուրը:

Ժորժ Բրեզոլը «Այստեղով թուրքերն են անցել...» մենագրության վերնագիրը վերցրել է Վիկտոր Հյուգոյի «Արևելցիները» բանաստեղծությունից: Այս գիրքն արժեքավոր աղբյուր է 1909 թ. ապրիլին Աղասի Շաղարի և հարակից հայկական գյուղերի կոտորածների մասին: Գրքում առկա են 1909 թ. կոտորածներին առնչվող բացառիկ վավերագրեր, վկայություններ ու լուսանկարներ, որոնք ընթերցողին թույլ են տալիս մտովի հետևել կոտորածների ընթացքին օր օրի, բնակավայր առ բնակավայր և ստանալ հստակ պատկերացում դրանց հետևանքների մասին: Գիրքը լուսաբանում է Հաճընի, Կարս-Բազարի, Դյորք-Յոլի և այլ բնակավայրերի հայերի ինքնապաշտպանության դրվագները: Հեղինակը խոսում է նաև որոշ թուրք գործիչների՝ հայերի նկատմամբ դրսնորած դրական վերաբերմունքի, օտարերկրյա դիվանագետների ցուցաբերած օգնության մասին:

Գիրքը վերահրատարակվել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից 2009թ.:

*Ferriman Ducket, Turkish Atrocities, The Young Turks and the Truth about the Holocaust at Adana, in Asia Minor, during April, London, 1909, 146 p.*

**Ֆերիման Դաքետ,Թուրքական ղաֆանություն,Երիտրուրքերը և ճշմարտությունը**  
Աղանայի ողջակիզման մասին/Փոքր Ասիա, 1909թ. ապրիլ, Լոնդոն, 146, էջ:

Ֆերիման Դաքետի այս մենագրությունը, որն առաջին անգամ հրատարակվել է 1913թ. Լոնդոնում, ներկայացնում է 1909 թվականին թուրքական իշխանությունների կողմից կազմակերպված և իրականացված հայկական ջարդերը: Այս գիրքը արժեքավոր աղբյուր է նվիրված Կիլիկյան ջարդերին՝ վեր հանելով Կիլիկիայում և Աղանայում տեղի ունեցած սարսափելի իրադարձությունների կարևոր և անհայտ մանրամասները: Հետինակն անդրադարձել է իշխանությունների կազմակերպած արյունոտ ջարդերին, Աղանա նահանգի թուրք բնակչության, մասնավորապես, մուսուլման ամրության ակտիվ մասնակցությանը: Դաքետն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել «Հոլոքոստ» եզրը. 1909թ. Կիլիկիայի կոտորածները նրա գրքի առաջին գլխում շարադրված են «Աղանայի հոլոքոստը» խորագրի տակ: Այդ արյունալի իրադարձությունները և բռնությունները Հոլոքոստ (Ողջակիզմ) անվանումն են ստացել, քանի որ բազմաթիվ մարդիկ ողջ-ողջ այրվել էին: Նա դեպքերի և իրադարձությունների խոր վերլուծություն է կատարել, որն էլ այս մենագրությունն իր ժամանակի համար բացառիկ է դարձրել:

Գիրքը վերահրատարակվել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից 2009թ.:

*Adossidès, Arméniens et Jeunes-Turcs. Les massacres de Cilicie, Paris, 1910, 142 p.*

Ա. Աղոսիդես, Հայերը և Երիտրուրքերը. Կիլիկիայի կոտորածները, Փարիզ, 1910, 142 էջ :

Ակերսանդր Աղոսիդես. ծագումով հոյն ֆրանսիացի լրագրող: Կիլիկիայի շարդերից ութ ամիս հետո՝ 1909 թ. դեկտեմբերին, նա գրել է իր առաջին ամբողջական ուսումնասիրություններից մեկը:

Ակերսանդր Աղոսիդեսը «Հայերը և Երիտրուրքերը. Կիլիկիայի կոտորածները» գրքում փաստական հարուստ նյութի հիման վրա, ինչպիսիք են՝ հյուպատոսների գեկույցներ, կաթողիկ առաքելության գործիչների պաշտոնական հաշվետվություններ, Եվրոպացի և ամերիկյան քարոզիչների գրառումներ, նամակներ, ականատեսների վկայություններ, ժամանակակից մամուլ և այլն, նկարագրում է 1909թ. հայերի կոտորածները Կիլիկիայում: Աղոսիդեալ փուլ առ փուլ լուսաբանել է Աղանա քաղաքի առաջին և երկրորդ, ապա՝ Աղանայի ու Հալեպի վիլայեթների մյուս բնակավայրերում իրազործված կոտորածների ընթացքը, արձանագրել, որ դրանք իրականացրել են թուրք կանոնավոր զորքերն ու պատրաստված հրոսակախմբերը: Գրքում տեղ են գտել նաև օսմանյան խորհրդի երկու պատգամավորների՝ ազգությամբ հայ Հ. Պապիկյանի և ազգությամբ թուրք Յուսուֆ Քեմալի կատարած ուսումնասիրությունները զոհերի թվի վերաբերյալ: Վերջին գլուխ, որ վերնագրված է «Կոտորածներից հետո», հեղինակը փաստել է, որ Երիտրուրքական իշխանությունները ոչ մի էական քայլ չկատարեցին հանցագործներին պատժելու ուղղությամբ:

Գիրքը վերահրատարակվել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից 2012թ.:



Տպագրությունը՝ օֆսեթ:  
Թուղթը՝ օֆսեթ:  
Տպաքանակը՝ 300

ՏՊԱԳՐՎԵԼ Է «ԿՈԼԼԱԺ» ՏՊԱԳՐԱՏԱՆԸ  
Երևան, Սարյան 4  
Հեռ.՝ (374 10) 52 02 17  
Էլ. փոստ՝ [collage@arminco.com](mailto:collage@arminco.com)  
[www.collage.am](http://www.collage.am)